Է իր ազդեցությունը թողնել Արաբական խալիֆայության հետ կնքված վերոհիշյալ պայմանագրի նկատմամբ քրիստոնյա Հայաստանի հոգևորականության վերաբերմունքի վրա: Մակայն, նախարարական տների վերաբերմունքն ու, ընդհանրապես, հզորացող խալիֆայության նկատմամբ հայկական իշխանությունների քաղաքականությունն առավել իրատեսական էր, որը հանգեցրեց պայմանագրի կնքմանն ու Հայաստանի համար առավել նպաստավոր պայմանների ստեղծմանը:

Վերոհիշյալ պայմանագիրը յուրահատուկ նշանակություն ունեցավ հայերի համար և հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանման նախադրյալներ ստեղծեց: Նվաճված ոչ մի երկիր չունեցավ այն իրավունքներն ու արտոնությունները, ինչ Հայաստանն արաբական նվաճումների շրջանում:

Մուհամմադ մարգարեի, հետագայում մուսուլման այլ առաջնորդների անունով պայմանագրերը շատ դեպքերում հայերին օգնել են տարբեր ժամանակներում իրենց իրավունքները պաշտպանելու զանազան ոտնձգություններից⁷: Մուհամմադ մարգարեի կողմից Երուսաղեմի հայկական համայնքին տրված պայմանագրի շարունակությունը եղան հետագա մուսուլման առաջնորդների անունով կնքված պայմանագրերը (օրինակ, Օմարի, Ալիի, Սալահ ադ-Դինի և այլն): Դրանք հայերին ու Հայաստանին հավելյալ իրավունքներ ու արտոնություններ տվեցին արաբական նվաճումների շրջանում, հետագայում էլ օգնեցին պաշտպանվելու զանազան ոտնձգություններից: Կարելի է փաստել, որ հետագայում հայերի նկատմամբ դավանափոխ եղած նոր մուսուլմանների

⁷ Մկրտումյան 2018, 19-25:

ոտնձգությունները սուրբ տեքստերին ու վաղ իսլամական հրովարտակ-պայմանագրերին անձանոթ լինելով ու նրանց հավելյալ վայրագություններով էին պայմանավորված:

Մուսուլմանների ամենակարևոր սուրբ գրքում՝ Ղուրանում, Հայաստանին կամ հայերին վերաբերող հիշատակումներ չկան, սակայն այդպիսիք հանդիպում են մուսուլմանական այլ սուրբ աղբյուրներում՝ հադիսներում⁸, որոնք տարբեր դասակարգումներ ունեն՝ հեղինակավոր հադիսներ⁹, ուժեղ, թույլ հադիսներ և այլն: Դրանք ևս չափազանց կարևոր տեղեկատվություն են պարունակում՝ հասկանալու մուսուլման և ոչ մուսուլման ժողովուրդների, իսլամական աշխարհին հարող տարածքների փոխառնչություններն ու ստեղծված իրողությունները:

Մուսուլման հեղինակներից Հաքիմ ալ-Նիշապուրիի¹⁰ կազմած հինգ հատորանոց հադիսների «Ալ-Մուսթադրաք Ալլա ալ-Սահիհայն»¹¹ վերտառությամբ ժողովածուում կան հիշատակումներ Հայաստանի մասին:

⁸ Հադիսները համարվում են Մուհամմադի խոսքերի և արարքների ավանդապատումները (տե՛ս Ислам 1991, 262):

⁹ Մուսուլմանների համար ամենահեղինակավոր հադիսների ժողովածուներն են՝ Ալ-Բուխարիի և Մուսլիմի Սահիհը, այնուհետև իրենց կարևորությամբ հետևում են՝ Աբու Դաուդի, Ալ-Թիրմիզիի, Ալ-Նասաի և Իբն Մաջի Սունանը (տե՛ս The Encyclopaedia of Islam 1986, 24):

¹⁰ Հաքիմ Ալ-Նիշապուրին (933-1014) պարսիկ գիտնական-աստվածաբան էր Նիշապուրից, որին անվանում էին «Մուհադդիթիների իմամ» կամ «Մտրասանի մուհադդիթ»:

¹¹ المستدرک علی الصحیحین - الحاكم النيسابوري

Այս ժողովածուն կազմված է 9045 հադիսներից, որոնք, Նիշապուրիի կարծիքով, համաձայն Սահիհ ալ-Բուխարիի, կամ Սահիհ Մուսլիմի պայմանների՝ վավերական, ճշմարիտ են: Ալ-Նիշապուրիի ալ-Մուսթադրաքի վերաբերյալ կա նաև այլ մտտեցում: Դրա համաձայն, ժողովածուում ներառված հադիսների զգալի մասը համարվում են թույլ, կամ ոչ հավաստի հադիսներ:

Մասնավորապես, 8427 հադիսում ասվում է՝

«Մեզ հաղորդել է Մուհամմադը, պատմել է իբն Վահբը, Մուավիա բին Սալիհը հայտնել է ինձ Աբու Ջահիրիյայի, Ջուբեյր բին Նուֆեյրի, Աբու Դարդայի մասին (թող որ Ալլահը գոհանա նրանից), ասելով. «Եթե ընտրության առջև կանգնեք երկրների միջև, մի՛ ընտրեք Հայաստանը, քանզի այնտեղ է Ամենակարող Ալլահի տառապանքի մի մասը»¹²:

Հադիսներում Հայաստանին վերաբերող հիշատակումները չափազանց կարևոր են, որոնք վկայում են մուսուլմանների համար այդ ուղղության կարևորության մասին: Այս հադիսը կարևոր տեղեկատվական նյութ է պարունակում այն առումով, որ մուսուլմանների արշավանքների ուղղությունները տարբեր են եղել: Դրանցից մեկը եղել է Հայաստանը, որի դեմ արշավանքը ողջունելի չի եղել:

Եզրակացություններ

Մուհամմադ մարգարեի առաջնորդությամբ, VII դ. սկզբին, Արաբական թերակղզում տարածվեց իսլամական կրոնը, որը մուսուլմաններին համախմբեց մեկ գաղափարախոսության ներքո՝ դնելով Արաբական խալիֆայության ձևավորման հիմքը: Այդ ժամանակ խնդիր էր դրված ընդլայնել իսլամի ազդեցության արեալը նաև այլադավաններին հնազանդեցնելու ու նրանց տարածքներին տիրանալու հաշվին: Սկզբնական շրջանում այդ քաղաքականության առարկայական դրսևորումներից էր ուժի կիրառումն ու հպատակվող ժողովուրդներին իսլամի պարտադրանքը: Հետագայում, բռնի ուժ կիրառելու մոտեցումը փոխարինվեց հպատակ այլադավան ժողովուրդների հետ

¹² Տե՛ս հավելված:

պայմանագրեր կնքելու քաղաքականությամբ: Այս փոփոխության հիմնական նպատակներից էր պայմանագրերի միջոցով ապահովել Արաբական խալիֆայության գերիշխանությունը, ստանալ այլադավանների հավատարմությունը, ապահովել վերջիններիս անվտանգությունը, սահմանել հարկեր՝ լցնելով պետական գանձարանը:

Արաբական խալիֆայության և Հայաստանի միջև սկզբնական առնչություններն ու պայմանագրերի իրողությունը վկայում են, որ հայերը շատ լավ են պատկերացրել ստեղծված իրավիճակը: Նրանք կարողացել են կշռադատված մոտեցում դրսևորել տարածվող իսլամական կրոնի ու հզորացող Արաբական խալիֆայության հանդեպ՝ գնալով պայմանագրեր կնքելու ճանապարհով, ճանաչելով խալիֆայության գերիշխանությունը, միևնույն ժամանակ, պահպանելով Հայաստանի ինքնուրույնությունն ու ինքնիշխանությունը:

Հայաստանի մասին հիշատակումներ կան ոչ միայն հրովարտակ-պայմանագրերում, այլև մուսուլմանական սուրբ աղբյուրներում: Ճիշտ է, Ղուրանում Հայաստանի մասին հիշատակում չկա, սակայն հաղիսներում Հայաստանի վերաբերյալ տեղեկություններ հանդիպում են: Հայաստանին վերաբերող հաղիսները հանդիպում են Հաքիմ ալ-Նիշապուրիի կազմած թույլ կամ ոչ հավաստի բնորոշվող «ալ-Մուսթադրաք» հաղիսների ժողովածուի մեջ: Այն հսկայական կարևորություն ունի և ընդունելի է նաև մուսուլմանների որոշ շրջանակի կողմից: Այդ հաղիսներում հստակ երևում են արաբական նվաճողական քաղաքականության առանձնահատկությունները նաև Հայաստանի հանդեպ:

Ինչպես մուսուլմանների և հայերի միջև կնքված

հրովարտակ-պայմանագրերի, այնպես էլ հաղիսներում Հայաստանի մասին հանդիպող հիշատակումների իրողությունն այսօր նույնպես կարևոր քաղաքական, պատմամշակութային և էթնիկ-դավանական նշանակություն ունի: Ուստի, այն պետք լինի մուսուլմանական երկրներով շրջապատված ՀՀ գիտական հանրույթի և փորձագիտական լայն շրջանակների ուշադրության կենտրոնում:

المستدرك على الصحيحين

للإمام الحافظ أبي عبد الله محمد بن عبد الله الحاكم النيسابوري

مع تذييلات الإمام الذهبي في التاجين والميزان والعرا في
في ناليه والناري في فيض القدير وغيرهم من العلماء الأجداد

أول طبعة: مؤسسة الأبحاث - ومقرها: مكة - مكة - جمهورية
السعودية

دراسة وتحقيق

مصطفى عبد القادر عجمي

تتمتع كتاب معرفة الصحابة، كتاب الأحكام، كتاب الأطعمة، كتاب الأشربة، كتاب البر
والصلة، كتاب اللباس، كتاب الطب، كتاب الأضاحي، كتاب الذبائح، كتاب التوبة
والإنابة، كتاب الأدب، كتاب الأيمان والنذور، كتاب التنوير، كتاب الرقاق، كتاب
الغرائض، كتاب الحدود، كتاب تعبير الرؤيا، كتاب الطب، كتاب الرقى والتعالم،
كتاب الفتن والملاحم، كتاب الأحوال.

الجزء الرابع

مستورات
مركز الدراسات والبحوث
لشؤون الكتب العلمية
دار الكتب العلمية
بيروت - لبنان

١٣٥/٨٤٢٧ - حدثنا محمد، ثنا بحر ثنا ابن وهب، أخبرني معاوية بن صالح،
عن أبي الزاهرية، عن جبير بن نفير، عن أبي الدرداء رضي الله عنه قال: إذا خيرتم بين
الأرضين فلا تختاروا أرمنية فإن فيها قطعة من عذاب الله تعالى.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ղուրան:

Սկրտումյան Գ. 2018, Մուսուլմանների կողմից տրված հրովարտակ-պայմանագրերի դերը քրիստոնյա բնակչության կյանքում, «Արևելագիտության հարցեր», №14, էջ 14-27:

Պատմութիւն Սեբեոսի 1979, Երևան, Հայկական ՄՍՀ ԳԱԱ հրատարակչութիւն, 447 էջ:

Սաւալանեանց Տ. 1931, Պատմութիւն Երուսաղէմի, հ. 1, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 688 էջ:

Հաքիմ ալ-Նիշապուրի, «Ալ-Մուսթադրաք Ալա ալ-Սահիհայն»:

Տեր-Ղևոնդյան Ա. 2020, Առևտուրը և տնտեսական բարգավաճումը յոթերորդ դարի Հայաստանում, «Բանբեր Մատենադարանի», №30, էջ 154-166:

Ислам: Энциклопедический словарь 1991, Москва, Наука, 315 с.

The Encyclopaedia of Islam 1986, Vol. III, Leiden, E. J. Brill, The Netherlands, 1146 p.

The Encyclopedia of Islam 1991, New Edition, Under the patronage of the international union of academies, Volume II, Leiden, E. J. Brill, 1270 p.

Саргис М. Григорян, *Институт истории НАН РА, к.и.н., доцент*, **Политика халифата в отношении христиан в раннеисламский период (на примере договоров и упоминаний в мусульманских священных текстах связанных с армянами и Арменией).**

Резюме

В начале VII в. под предводительством пророка Мухаммеда исламская религия распространилась на Аравийский полуостров, объединив мусульман под одной идеологией, положив начало формированию Мусульманского халифата. Постепенно сфера влияния ислама расширялась и включала новые территории. В то время стояла задача расширить зону влияния ислама также за счет подчинения других религий и территорий с христианским населением. Армения также была в списке тех территорий, с которыми мусульмане подписали договоры-соглашения. Примечательно также, что упоминания об Армении встречаются не только в упомянутых договорах, но и в мусульманских священных источниках, в частности, в хадисах.

Наличие договоров, подписанных между мусульманами и армянами, а также упоминаний об Армении, встречающихся в хадисах, имеет важное политическое, историко-культурное и этнорелигиозное значение: подобные свидетельства должны быть в центре внимания научного сообщества Армении.

Ключевые слова: Арабский Халифат, Армения, Армяне, Джихад, Коран, Мусульмане, Прокламации-Договоры, Пророк Мухаммед, Хадис, Христиане.

Sargis M. Grigoryan, *Institute of History of the NAS RA, PhD in History, Associate Professor*, **The policy of the caliphate to Christians in the early Islamic period (following the example of proclamations-contracts and references in Muslim holy texts related to Armenians and Armenia).**

Summary

At the beginning of the VII century, under the leadership of the Prophet Muhammad, the Islamic religion spread to the Arabian Peninsula, uniting Muslims under one ideology, laying the foundation for the formation of the Muslim Caliphate. Gradually, the sphere of influence of Islam expanded, including new territories. At that time, the aim was to expand the zone of influence of Islam by subordinating other religions and territories with a Christian population. Armenia was also in the list of those territories with which the Muslims signed the agreements. It is also noteworthy that references to Armenia are found not only in the mentioned agreements, but also in Muslim sacred sources, in particular, in hadiths.

The existence of the agreements signed between Muslims and Armenians, as well as references to Armenia found in hadiths has an important political, historical-cultural and ethnic-religious significance: these documents should be in the center of attention of the scientific community of Armenia.

Key words: Arab Caliphate, Armenia, Armenians, Christians, Hadith, Jihad, Muslims, Proclamation-Contracts, Prophet Muhammad, Quran.

ԱՐՏԱՇԵՍ Ի. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ

artashes.shahnazaryan.1950@gmail.com

ԳԱՐԴՄԱՆ ԳԱՎԱՌԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ*

Բանալի բառեր՝ Գարդման, Գետաբակ, Իվանե Ա, Խաթուն, Չարեք, Վահրամ Գագեցի, Վահրամյանների իշխանություն, Վարդան Քաջ, Տավուշ:

Ներածություն

Մեծ Հայքի Ուտիք աշխարհի Գարդման գավառը (ըստ Փավստոս Բուզանդի՝ Գարդմանաձոր)¹³ ընդգրկել է Զակամ գետի ամբողջ ավազանը և Շամքոր գետի ավազանի արևմտյան՝ ձախակողմյան հատվածը: VI դ. սկզբներից սկսած գավառի կենտրոնն է եղել իշխան Վարդան Քաջի կառուցած Գարդման բերդը¹⁴:

Գարդման գավառը հատկապես միջնադարում հայոց քաղաքական և հոգևոր-մշակութային կյանքում, նշանակալի դեր է կատարել: Դրանով պայմանավորված՝ այն հայկական և օտար աղբյուրներում Ուտիքի առավել հիշատակված գավառներից է: Ընդ որում, այդ հիշատակությունները գլխավորապես վերաբերում են Գարդմանում այս կամ այն իշխանության գոյության շրջանին: Դա է պատճառը, որ հետազոտողների ուշադրության կենտրոնում են եղել

* Ներկայացվել է 21.X.2022 թ., գրախոսվել է 14.XI.2022թ., ընդունվել է տպագրության 15.XII.2022 թ.:

¹³ Տե՛ս Փավստոսի Բուզանդացույ 1987, 72, 246, 322:

¹⁴ Կաղանկատուացի 1983, 172, 339:

Գարդմանի պատմության հատկապես այդ ժամանակահատվածները: Հետևաբար, այդ գավառի պատմության անբավարար ուսումնասիրված էջերի քննությունը խիստ կարևոր է:

Ընդ որում, էլնելով աղբբեջանական իշխանությունների և պատմության կեղծարարների կողմից Հայոց Արևելից կողմանք, ներառյալ Գարդման գավառն իրենց «պատմական» հողը դիտելու հանգամանքից, այդ կարևորությունը գիտական անհրաժեշտությամբ չէ միայն պայմանավորված:

Խնդրո առարկա գավառի միջնադարյան շրջափուլի պատմության անբավարար քննված էջերից է XIII դ. սկզբներից ներառյալ այդ դարի 40-ական թվականներն ընկած միջակայքը: Դա Զաքարյանների կողմից Գանձակի Ելտկուզյան աթաբեկության տիրապետությունից այդ գավառի ազատագրումից ներառյալ մոնղոլների կողմից նվաճվելու ժամանակահատվածն է, որն էլ ներկա քննության նյութն է:

Գարդման գավառի ազատագրումը Գանձակի Ելտկուզյան աթաբեկության տիրապետությունից

Ի թիվս Հայոց Արևելից կողմանց այլ գավառների, Գանձակի Ելտկուզյան աթաբեկության տիրապետությունից Գարդմանի XIII դ. սկզբներին ծայր առած ազատագրումը վրաց Բագրատունիների հովանավորությամբ ու աջակցությամբ նրանց ստորակա Զաքարյանների գլխավորած ազատամարտերի արգասիք է: Այդ աթաբեկությունը թուլացնելու և, դրա շնորհիվ, նրա տիրապետության տակ գտնվող հայկական գավառների ազատագրումը դյուրացնելու նպատակով՝ վրաց արքունիքը, Զաքարյանների գործուն մասնակցությամբ, 1190-ական թվականների առաջին կեսին մի շարք գործնական քայլեր արեց:

Նախ կատարվեցին հետախուզական, ավարառուական և ուժի ցուցադրման նպատակ ունեցող մի շարք բարեհաջող ելք ունեցած արշավանքներ: Դրանց հաջորդեց Ելտկուզյան աթաբեկ Աբու Բաքրի (1191-1210) բանակի դեմ 1195 թ. հունիսի 1-ին¹⁵ Գարդման գավառի արևելյան սահմանագլխին գտնվող Շամքոր քաղաքի մերձակայքում կայացած ճակամարտում հայվրացական զորքերի հաղթանակը¹⁶: Ելտկուզյանների և նրանց ստորականների տիրապետության տակ գտնվող հայկական գավառների, արդեն ազատագրման նպատակով, Ջաքարյանները հաջորդ տարի իսկ հետևողական պայքար սկսեցին¹⁷:

Այդ մասին տեղեկություններ են պահպանվել ինչպես հայկական, այնպես էլ օտար աղբյուրներում: Սակայն, Գարդման գավառի ազատագրման հետ կապված, հայկական աղբյուրներն ավելի խոսուն են: Աղբյուրների հաղորդումների համադրումից հետևում է, որ խնդրո առարկա գավառի հարավարևելյան հատվածի ազատագրումը ղեկավարել է Իվանե Ա Ջաքարյանը: Ինչ վերաբերում է Գարդման գավառի մնացած՝ մեծ մասին, ապա այն Ելտկուզյանների տիրապետությունը թոթափել է Ջաքարյանների կրտսեր ճյուղերից Վահրամյաններին ներկայացնող Բլուզ Ջաքարեի և իր որդի Վահրամ Գազեցու գլխավորած մարտերի շնորհիվ: Ընդ որում, Վահրամյաններին օգնել են իրենց ազգականները:

Գարդմանի բերդերից Գետաբակի ազատագրումն իր կողմից կատարած լինելը փաստում է Իվանե Ա-ն՝ Թեժառույքում թողած վրացերեն անթվակիր մի արձանագրության մեջ:

¹⁵ Տե՛ս Կարտլիս Ըջօրեբա 2008, 324-325, ծան. 309, 324-325, ծան. 381:

¹⁶ Տե՛ս Կարտլիս Ըջօրեբա 2008, 272-273, 309:

¹⁷ Տե՛ս Ծահնագարյան 2005, 132-147: Ծահնագարյան 2005, 32-51:

Դրանում նա ներկայանում է իբրև «Կայտաբուկից (Գետաբակ – Ա.Շ.) Գանձա[կ], հենց Նոր բերդից մինչև Կեչառեցիների երկրի միջև ամբողջի գրավողս»¹⁸:

Իվանե Ա-ի կողմից Գարդման գավառի նաև Չարեք բերդն ազատագրելն արձանագրել է Վարդան վարդապետը: 1214 թ. վախճանված Հաթերքի իշխան Վախթանգի տիրույթներն Իվանե Ա-ին հանձնվելն արձանագրելուց անմիջապես հետո նա գրում է. «Մեծն Իւանէ անուանի եղեալ քաջարութեամբ՝ առնու զՉարեքն և զամենայն շրջակայս նորա և ապա ձեռն տուեալ ազգայնոյն իւրոյ Վահրամայ որդւոյ Չաքարիայ առնուն զՇամքոր և ի վեցհարիւր վաթսուն և ութ թուին (1219 թ. – Ա.Շ.) առնու զՈրոտն և զմերձակայ զղղեակսն»¹⁹: Դրանից առաջ ներկայացնելով Չաքարյանների հաղթական մարտերի արդյունքները, նա մասնավորապես նշում է, որ նրանք «ի վեցհարիւր յիսուն թուին (1206 թ. – Ա.Շ.) առին զԿարս՝ թագաւորին. և ապա զԳետաբակս և զՉարեքն»²⁰:

Իվանե Ա-ի կողմից Չարեքի ազատագրումը վկայում է նաև Ստեփանոս Օրբելյանը: Նա նշում է. «ի 665 թուականին (1216 թ. – Ա.Շ.) մինչ կայր աթաբեկն Իւանէ ի խսար (պաշարումն) ի վերայ բերդոյն, որ Չարեքն կոչի»²¹: Հետագայում, Չաքարյանների նվաճումները ներկայացնելիս, Ստեփանոս Օրբելյանը հիշատակում է նաև Չարեքը, բայց ինչպես նախորդ անգամ՝ Գետաբակը չի նշում²²:

¹⁸ Մուրադյան 1977, 119:

¹⁹ Հաւաքումն պատմութեան 1862, 140-141:

²⁰ Հաւաքումն պատմութեան 1862, 138:

²¹ Պատմութիւն նահանգին Միսական 1910, 352:

²² Տե՛ս Պատմութիւն նահանգին Միսական, 1910, 391-392:

Կիրակոս Գանձակեցին, իր հերթին, Ջաքարյանների ազատամարտերի արդյունքները ներկայացնելիս՝ Գետաբակն ու Չարեքն անտեսել է²³, սակայն այլ առիթներով այդ բերդերը համապատասխանաբար երկու և երեք անգամ հիշատակել է²⁴:

Ջաքարյանների կողմից 1206 թ. Կարսի առումից հետո Գետաբակն ու Չարեքը գրավելու մասին Վարդան վարդապետի վերոբերյալ հաղորդման թյուրընկալումը Ս. Կարապետյանին հիմք է տվել կարծելու, որ այն ևս ազատագրվել է այդ թվականին²⁵: Սակայն, անդրադառնալով Չարեքի ազատագրմանը, նա նշել է, որ դա տեղի է ունեցել. «1206 թ. հետո»²⁶: Ճիշտը վերջին պնդումն է, քանզի, ինչպես վերը տեսանք, ըստ Ստեփանոս Օրբելյանի, Իվանե Ա-ը Չարեքը պաշարել է 1216-ին: Եվ, քանի որ Չարեքի այդ թվականին ազատագրվելն ու Իվանե Ա-ի՝ նույն թվականին Գետաբակին տիրանալուն ձեռնամուխ լինելը կասկածից վեր են, պետք է այդ բերդերը նրան անցնելը թվագրել 1216-ով: Չարեքն Իվանե Ա-ի տիրույթների մեջ գտնվելը վկայում է նաև հայտնի Խոբանաշատի Ավետարանում Վանենի իշխանուհու 1224 թվակիր ուշագրավ հիշատակարանը: Այնտեղ, մասնավորապես, կարդում ենք. «ի տերութեան Այրարատեան նահանգին եւ Խաչենոյ, մինչ ի կողմանս Չարեքին աթաբեկ Իվանէի»²⁷:

²³ Տե՛ս Գանձակեցի 1961, 163:

²⁴ Տե՛ս Գանձակեցի 1961, 55, 243, 178, 182, 243:

²⁵ Տե՛ս Կարապետյան 2004, 68:

²⁶ Կարապետյան 2004, 118:

²⁷ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ 1984, էջ 140: Ժամանակին Չարեքն ու Գետաբակը Գարդմանի փոխարեն վրիպամբ տեղորոշել ենք Փառիստում (տե՛ս Շահնագարյան 2005, 47):

Արդեն վերը նշվեց, որ Գարդման գավառի մեծագույն մասն ազատագրեցին Բլուզ Զաքարեն և իր որդի Վահրամ Գագեցին: Բնականաբար, Գագ – Շամքոր ուղղությամբ ազատամարտեր ծավալած Բլուզ Զաքարեն առաջին հերթին պետք է տիրանար Գարդմանին հյուսիս-արևմուտքից սահմանակից Տավուշ գավառին: Ինչպես պարզվում է գրչագիր և վիմագիր երկու աղբյուրների վկայություններից, նա այդ գավառի նշանավոր բերդ Տավուշն ազատագրել է 1203 թ.²⁸: Դրանից հետո, շարժվելով առաջ, մտել է Գարդման գավառ և ազատագրել նախ Սագամ, ապա Գարդման բերդերը²⁹: Այդ բերդերի առման ստույգ թվականն աղբյուրներում չի պահպանվել, սակայն որոշ վկայություններ թույլ են տալիս մոտավոր ճշտությամբ այն որոշել:

Հաղթատի վանական համալիրում Բլուզ Զաքարեի տիկին Խաթուն իշխանուհին իր կառուցած եկեղեցու արևմտյան պատին դրսից թողած արձանագրության մեջ նշում է, որ իր ամուսինն «եր տեր Գագա եւ Տավշո, Գարդմանա եւ Տերունականին և այլոց գաւառաց»³⁰: Այս արձանագրության «եր տեր» բառերից աներկբա հետևում է, որ այն գրվելու պահին Բլուզ Զաքարեն հանգուցյալ է եղել: Բարեբախտաբար, նրա մահվան թվականը հայտնի է: Իբն ալ-Ասիրի համաձայն, Բլուզ Զաքարեն սպանվել է հիջրայի 601 թ. (29.VIII.1204 - 17.VIII.1205) Շահ-Արմենների ամիրայության դեմ հայ-վրացական զորքերի

²⁸ Տե՛ս Մանր ժամանակագրություններ 1951, 392, 399, ծան. 29: Շահնագարյան 2022, 39-40:

²⁹ Ժամանակին Սագամի ազատագրումը վրիպմամբ վերագրել ենք Բլուզ Զաքարեի որդի Վահրամ Գագեցուն (տե՛ս Շահնագարյան 2005, 48):

³⁰ Դիվան հայ վիմագրության 2012, 208:

արշավանքի ժամանակ կայացած ճակատամարտում³¹: Հետևաբար, Սագամ և Գարդման բերդերը Բլուզ Ջաքարեն գրավել է 1203-1204/1205 թթ. միջակայքում:

Հորից հետո Գարդման գավառի ազատագրումը շարունակեց որդին՝ Վահրամ Գագեցին, որը 1216/1219 թ. գրավեց նրա արևելյան սահմանագլխին ընկած Շամքոր քաղաքը³²: Դրանով, Ջաքարյանների կողմից Գանձակի Ելտկուզյան աթաբեկության տիրապետությունից Գարդման գավառի ազատագրումը հասավ իր հաղթական ավարտին: Այդ հայկական գավառի մեծ մասը մտավ Վահրամյանների, իսկ հարավ-արևելյան փոքր հատվածը՝ Իվանե Ա-ի իշխանության մեջ:

Գարդման գավառն ազատագրումից ներառյալ մոնղոլական նվաճումն ընկած շրջանում

Գարդմանը Ելտկուզյանների տիրապետությունից ձերբազատվելուց հետո, ազատագրված հայկական այլ գավառների նման, բռնեց բնականոն զարգացման ուղին: Ջարգանում էր նաև գավառի ամենախոշոր բնակավայրը՝ Պարտավ – Գանձակ – Տփխիս ճանապարհի վրա գտնվելու պատճառով, ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Շամքոր քաղաքը: 1220-ական թվականներին պարսկերեն շարադրված աշխարհագրական բնույթի մի երկում նշվում է, որ «այնտեղ [կա] թուզ, նուռ, սեխ, նրբագեղ խեցե սափորներ, լավորակ դանակներ»³³: Սրանից հետևում է, որ

³¹ Տե՛ս Արաբական աղբյուրներ 1981, 284:

³² Մանրամասն տե՛ս Շահնագարյան 2005, 48:

³³ *Аджа иб ад-Дунйа (Чудеса мира) 1993, 217:*

շամբորցիները հաջողությամբ զբաղվում էին ինչպես գյուղատնտեսությամբ, այնպես էլ արհեստագործությամբ:

Կիրակոս Գանձակեցու համաձայն, Հայ Աղվանից եկեղեցու կաթողիկոսներն «այսր անդր յածելով, վասն ոչ ունելոյ հաստատուն տեղի աթոռոյ, դէպ եղև նոցա գալ ի քարայր մի ի սահմանս բերդին, որ կոչի Չարեք և անդ դադարիլ և անդուստ հովուել զհօտ իւրեանց»³⁴: Պատմիչը քիչ անց հայտնում է, երբ «կալաւ զաթոռն Աղուանից տէր Յովհաննէս (խոսքը Հայոց Աղվանից կաթողիկոս Հովհաննէս Զ-ի (1195-1235) մասին է – Ա.Շ.) ... հաստատեաց զաթոռ իւր ի սահմանս Չարեքին, ի քարի անդ, զոր ասացաք վերագոյն: Սա նեղեալ յայլագգեացն՝ դիմեաց գալ յաշխարհս Հայոց առ մեծամեծ իշխանսն՝ առ Չաքարէ և Իւանէ, եղբայր նորա»³⁵: Չաքարյան եղբայրները կաթողիկոսին «մեծավ պատուով ընկալան», և Իվանէ Ա-ն նրան բնակեցրեց իր տիրութիւնների մեջ մտնող Միափոր գավառի Խամշի կոչվող վանքում³⁶:

Այս ուշագրավ իրադարձությունը նրան անդրադարձած հեղինակներից լոկ Ս. Կարապետյանն է թվագրել, գտնելով, որ այն տեղի է ունեցել 1220-ական թվականների վերջերին³⁷: Սակայն, Չաքարէ Ա-ի 1212 թ. վախճանվելը և Իվանէ Ա-ի կողմից Չարեքն ու շրջակայքը, ինչպես տեսանք, 1216 թ. ազատագրելը, ստիպում են այդ թվագրումը տանել 1212 թ. առաջ:

Մոնղոլների 1220-1222 թթ. հետախուզական արշավանքը³⁸ խաթարեց Գարդման գավառի խաղաղ զարգացումը: Այն վե-

³⁴ Գանձակեցի 1961, 178:

³⁵ Գանձակեցի 1961, 182:

³⁶ Գանձակեցի 1961, 182

³⁷ Տե՛ս Կարապետյան 2004, 255:

³⁸ Մանրամասն տե՛ս Շահնագարյան 2000, 85-107:

րածվեց մոնղոլական զորքի ռազմարշավների և նրանց ու հայ-վրացական բանակի ճակատամարտերի թատերաբեմի: Մոնղոլական 20 հազարանոց զորքն այդ արշավանքի ընթացքում երեք անգամ իր կայանատեղ Բեջամեջից Պարտավ – Գանձակ – Շամքոր – Տփլիսի ճանապարհով ներխուժեց հյուսիս-արևելյան, այն է՝ Զաքարյան Հայաստան, և, բնականաբար, նաև Գարդմանում ասպատակ սփռելով հասավ Վրաստան:

Այդ արշավանքի ժամանակ մոնղոլները հայ-վրացական բանակին երեք հաղթական ճակատամարտ տվեցին: Դրանցից երկրորդն ու ամենախոշորը կայացավ Գարդման գավառում՝ Կոտման (Սագիմ, Սագամ, Զագամ, Զակամ, Բերդուջի) գետի ափին՝ 1221 թ. հունվարի վերջին: Չնայած ճակատամարտում հայ-վրացական բանակի պարտվելուն, նրա աջ թևը գլխավորող Վահրամ Գագեցին փախուստի մատնեց մոնղոլական զորքի ձախ թևը: Գրիգոր Ակներցու համաձայն, Վահրամ Գագեցին «առեալ զաջոյ թեւն մինչեւ յերեկոյն գնաց կոտորելով զՏաթարն յանիննայ, մինչեւ առհասարակ լցաւ դաշտն Սագամայ կոտորեալ Տաթարով»³⁹: Պատմիչն այնուհետև հավելում է, որ Վահրամ Գագեցին «իբրեւ լուաւ զկոտորումն զօրաց թագաւորութեանն, յայնժամ մեծապէս տրտմե[ա]լ և թողեալ զգործ պատերազմին, դարձաւ յամուրս բերդին իւրոյ, որ կոչի Քարհերձ»⁴⁰: Այդ բերդը գտնվում էր Գարդման գավառում: Վարդան Վարդապետն, իր հերթին, փաստում է, որ Վահրամ Գագեցին «գնայ հանդէպ երեսացն (մոնղոլներին – Ա.Շ.) սաստիկ կոտորմամբ՝ մինչև ցԳարդման, չգիտելով զայլոց փախուստն»⁴¹:

³⁹ Ակներցի 1974, 21:

⁴⁰ Ակներցի 1974, 21-22:

⁴¹ Հաւարումն պատմութեան 1862, 142:

1222 թ. սկզբներին, Այսրկովկասից մոնղոլների հեռանալուց շատ չանցած, Գարդման գավառը ևս ենթարկվեց նոր, ոչ պակաս աղետալի փորձությունների: Դրանք պայմանավորված էին Այսրկովկասում ու հարակից շրջաններում վերջին խորեզմշահ Ջալալ ադ-Դինի (1220-1231) ծավալած յոթամյա (1225-1231) ռազմական ավերիչ գործողություններով:

Գառնիի ճակատամարտում (1225 թ. օգոստոս) հայ-վրացական զորքերին հաղթելուց շատ չանցած նա, ան-Նասիվիի վկայությամբ, իր զորավարներից էմիր Ուր-խանին ուղարկեց գրավելու մի շարք քաղաքներ, այդ թվում՝ Շամքորը: Ուր-խանը հաջողությամբ կատարեց տիրոջ հրամանն ու այդ քաղաքները, ինչպես և Շամքորն իրենց շրջակայքով, ի տիրապետություն ստացավ⁴²: Կիրակոս Գանձակեցին Գանձակի⁴³, իսկ վրաց ժամանակագիրը, Գանձակից բացի նաև Շամքորի գրավումը, վերագրում է Ջալալ ադ-Դինին, նկատելով, որ նախքան այդ Շամքորն ու նրա շրջակա հողերը պատկանում էին Վահրամ Գագեցուն⁴⁴: Անկասկած, վստահելի է Ջալալ ադ-Դինի կենսագիր ու քարտուղար ան-Նասիվու հաղորդումն այդ քաղաքներն Ուր-խանի կողմից գրավելու մասին: Այսպիսով, Գարդմանում ունեցած շատ կարևոր քաղաք Շամքորից Վահրամյաններն առժամանակ զրկվեցին:

Չհամակերպվելով այդ իրողության հետ և օգտվելով ավելի քան մեկ տարի Այսրկովկասից Ջալալ ադ-Դինի բացակայությունից, Վահրամ Գագեցին, հավանաբար, 1227-1228 թթ. միջակայքում, «Գանձակի շրջանների» վրա

⁴² Шихаб ад-Дин Муханнад ан-Насиви 1973, 163:

⁴³ Տե՛ս Գանձակեցի 1961, 224:

⁴⁴ Տե՛ս Կարլիս Ըջօրեբա 2008, 339:

հարձակվելով մեծ վնասներ էր պատճառել⁴⁵: Ան-Նասիվու համաձայն, երբ Ջալալ ադ-Դինը «վերադարձավ Գանձակ, Վահրամի վրա շատ բողոքներ տեղացին: Սուլթանը մեծ ուժերով ու բյուր զինվորներով շարժվեց նրա վրա: Ջորքերը ... սփռվեցին Վահրամի մարզի տարբեր վայրերում՝ կողոպտելով այն, վառելով, սպանելով ու քշելով [բնակիչներին]»⁴⁶:

1229 թ. գարնանը սկսված այս պատժիչ արշավանքը տևեց ավելի քան երեք ամիս: Դատելով խորեզմյան զորքերի Լոռեն գրավելուց հետո, այսինքն, արևմուտքից Վահրամյանների իշխանություն մտնելուց և ան-Նասիվու կողմից միայն այդ իշխանության արևմտյան մասում գտնվող Գագ ու Քավազին բերդերի պաշարումը փաստելուց, տրամաբանական է կարծել, որ նրանք Գարդման գավառ չէին հասել: Ի վերջո, Գագի ու Քավազինի պաշտպաններից փրկագին ստանալով Ջալալ ադ-Դինն այդ բերդերի պաշարումը դադարեցրեց և հեռացավ Խլաթ՝ գրավելու այն⁴⁷: Երբ 1231-ին Ջալալ ադ-Դինը սպանվեց ու նախկին իրավիճակը վերականգնվեց՝ Վահրամ Գագեցին Շամքորը վերադարձրեց իրեն⁴⁸:

Շատ չանցած՝ 1236 թ., մոնղոլների նվաճողական արշավանքի հետևանքով, Գարդման գավառը նոր փորձությունների ենթարկվեց: Գանձակը 1232 թ. գրաված և վրացական թագավորության անմխիթար վիճակին քաջածանոթ մոնղոլներն, իրենց 30 հազարանոց բանակը բաժանելով

⁴⁵ Տե՛ս Шихаб ад-Дин Муханнад ан-Насиви 1973, 226:

⁴⁶ Шихаб ад-Дин Муханнад ан-Насиви 1973, 226:

⁴⁷ Տե՛ս Шихаб ад-Дин Муханнад ан-Насиви 1973, 226: Ի դեպ, Կիրակոս Գանձակեցին վկայում է Տավուշ գավառում գտնվող Խորանաշատի վանքն «ի Ջալալադին սուլտանին հինից» (Գանձակեցի 1961, 240) ավերվելու մասին:

⁴⁸ Տե՛ս Գանձակեցի 1961, 242:

գորաջոկատների, 1236 թ. գարնան վերջին – ամռան սկզբին ներխուժեցին Զաքարյան Հայաստան: Դրանցից յուրաքանչյուրը պետք է գրավեր վիճակահանությամբ իրեն բաժին ընկած գավառը կամ իշխանությունը:

Վահրամյանների իշխանության արևելյան գավառ Գարդմանի արևելյան սահմանագլխին և Պարտավ – Գանձակ – Տփիսիս ճանապարհին գտնվող Շամքորը, բնականաբար, առաջինը պետք է ենթարկվեր Մուղանից եկող մոնղոլների հարձակմանը: Երբ մոնղոլական 100 հոգանոց մի ջոկատ փակեց Շամքորի ելուժուտը, շամքորցիներն օգնության խնդրանքով դիմեցին Վահրամ Գագեցուն: Սակայն, նա ոչ միայն մերժեց նրանց օգնել ու իր որդի Աղբուղային էլ արգելեց դա անել, «այլ և ոչ քաղաքացեացն հրամայեաց մարտնչել ընդ նոսա»⁴⁹: Ոչ միայն խիզախությամբ, այլև իմաստությամբ հայտնի Վահրամյան իշխանի նման վարքագիծը բացատրվում է իր ու մոնղոլների ուժերի հարաբերակցության սթափ գնահատմամբ: Սակայն, շամքորցիները չլսեցին իրենց իշխանին և դիմեցին պաշտպանության: Չնայած նրանց համառ դիմադրությանը, Մուլար նոյինի գլխավորած մոնղոլական զորաբանակը Շամքորն ի վերջո գրավեց, կողոպտեց, շինությունները հրկիզեց, իսկ բնակիչներին սրի քաշեց⁵⁰:

Դրանից հետո մոնղոլական զորքերն անարգել խորացան Գարդմանում և Վահրամյանների իշխանության մյուս գավառներում: Վարդան վարդապետի վկայությամբ, Վահրամ Գագեցու տիրույթների, այդ թվում և Գարդմանի «ամրոցս և

⁴⁹ Գանձակեցի 1961, 242:

⁵⁰ Տե՛ս Գանձակեցի 1961, 242:

զգեօղս և զագարակս, ամենեքեան տուեալ լինէին ի ձեռս նոցա ի սուղ ժամանակս անվաստակ և առանց աշխատութեան»⁵¹:

Գարդման գավառի գրավմանն անդրադարձել են Կիրակոս Գանձակեցին, Վարդան վարդապետն ու Գրիգոր Ակներցին: Նրանցից առաջինի համաձայն, Գարդմանի և ուրիշ կողմերի՝ Չարեքի ու Գետաբակի վրա արշավել և, պարզ է, այդ բերդերը գրավել է Ղատաղան նոյինը, իսկ Վահրամյանների մյուս ամրությունները բաժին են ընկել Մուլար նոյինին⁵²: Ըստ նույն պատմիչի, նախքան մոնղոլների Գարդման բերդ հասնելը, Վահրամ Գագեցին գտնվում էր այնտեղ: Երբ նրանք մոտեցան, նա մի գիշեր գաղտնի փախավ ինչ-որ տեղ⁵³: Վարդան վարդապետն իր հերթին Գարդման բերդի մասին լռելով հանդերձ, նկատում է, որ Չարեքն ու Գետաբակը Ղատաղան (ըստ իրեն՝ Ղատաղա) նոյինն է գրավել⁵⁴: Գրիգոր Ակներցին էլ վերջին երկու բերդի մասին չի խոսում, բայց Գարդման բերդը հիշում է⁵⁵: Փոխարենը, նախորդ պատմիչներին լրացնելով, փաստում է Սագամ ու Քարհերձ բերդերի գրավումը:

Մոնղոլները, 1236 թ. աշնանը Չաքարյան Հայաստանն ու Արևելյան Վրաստանը գրավելուց հետո, վերադարձան Մուղան՝ ձմեռելու: Նախքան այդ, Ղարա Բուղա անունով մի զորապետի թողեցին տեղում, խնդիր դնելով «քակել զամենայն ամուրս երկրին զոր առեալ էին, զոր եւ քակեցին ի հիմանց զանառիկ

⁵¹ Հաւաքումն պատմութեան 1862, 145:

⁵² Տե՛ս Գանձակեցի 1961, 243, 244:

⁵³ Տե՛ս Գանձակեցի 1961, 243:

⁵⁴ Տե՛ս Հաւաքումն պատմութեան 1862, 144:

⁵⁵ Տե՛ս Ակներցի 1974, 23:

բերդան»⁵⁶: Չի բացառվում, որ Գարդման գավառի բերդերը ևս քանդվեցին:

Իր իշխանությունը գրավվելիս տեղից տեղ փախչող Վահրամ Գազեցին հանգրվանեց Քութախում: Ի վերջո, նա ևս, այլ հայ և վրացի իշխանների նման, ռազմական ծառայության ու հարկատվության դիմաց իր իշխանությունը հետ ստանալու պայմանով՝ հպատակվեց մոնղոլներին: Դրանից հետո «նրա երկիրը ևս խաղաղվեց»⁵⁷: Քանի որ Իվանե Ա-ի որդի Ավագն էլ էր ենթարկվել մոնղոլներին, Գարդմանի նախկին կարգավիճակը վերականգնվեց:

Եզրակացություններ

Մինչև XII դ. վերջերը Ուտիք աշխարհի Գարդման գավառը գտնվում էր Գանձակի Ելտկուզյան աթաբեկության տիրապետության տակ: Օտար լծից նրա ազատագրումը, վրաց Բագրատունիների հովանավորությամբ ու աջակցությամբ, նրանց ստորակա Ջաքարյանների գլխավորած ազատամարտերի արգասիք է:

Ելտկուզյան տիրապետությունից Գարդմանի ձերբագրավելը սկսվեց XIII դ. սկզբին և ավարտին հասավ 1216/1219 թ.: Այն իրագործեցին Իվանե Ա Ջաքարյանը և նրա հորեղբորորդի Բլուզ Ջաքարեն ու իր որդի Վահրամ Գազեցին, որոնք ներկայացնում էին Ջաքարյանների կրտսեր ճյուղերից Վահրամյաններիին: Գարդմանի մեծ մասն ազատագրեցին նրանք: Այդ գավառի Իվանե Ա-ի և Վահրամյանների ազատագրած հատվածները մտցվեցին երկուսի իշխանությունների մեջ: Մոնղոլների

⁵⁶ Ակներցի 1974, 23-24:

⁵⁷ Картлис Цховреба 2008, 246, 247.

հետախուզական արշավանքի ու Ջալալ ադ-Դինի ռազմական գործողությունների հետևանքով Գարդմանի բնականոն զարգացման ընթացքը հաճախ էր խաթարվում: Ի վերջո, այն ևս գրավվեց մոնղոլների կողմից, բայց մնաց Վահրամյանների և Իվանե Ա-ի որդի Ավագի իշխանությունների կազմում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արաբական աղբյուրներ, Բ, 1981, Իբն ալ-Ասիր, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 442 էջ:

Շահնագարյան Ա. 2000, Մոնղոլների հետախուզական արշավանքն Անդրկովկաս, «Պատմա-բանասիրական հանդես», №2 (154), էջ 85-107:

Շահնագարյան Ա. 2005.- Ջաքարյանների ազատամարտերի առաջին փուլը, «Հայոց պատմության հարցեր», №6, էջ 132-147:

Շահնագարյան Ա. 2022, Տավուշ բերդը.- «Հայագիտության հարցեր», 1 (25), էջ 33-42:

Գրիգոր Ակնեցի 1974, Երուսաղեմ, Պատմութիւն թաթարաց, տպարան սրբոց Յակոբեանց, 80 էջ:

Դիվան հայ վիմագրության 2012, պրակ IX, կազմեցին Ս.Գ. Բարխուդարյան, Կ.Գ. Ղաֆադարյան, Ս.Տ. Սաղուման, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 611 էջ:

Կիրակոս Գանձակեցի 1961, Պատմություն հայոց, Աշխատասիրությամբ Կ.Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 426 էջ:

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար 1984, կազմեց Ա.Ս. Մաթևոսյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 987 էջ:

Հաւաքումն պատմութեան 1862, ի Վենետիկ, Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, 184 էջ:

Մանր ժամանակագրություններ 1951, հ. I, կազմեց Վ.Ա. Հակոբյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 455 էջ:

Մովսէս Կաղանկատուացի 1983, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը՝ Վարազ Առաքելյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 383 էջ:

Շահնագարյան Ա.Ի. 2005, Զաքարյանների ազատամարտերի երկրորդ փուլը, «Լրաբեր հասարակական գիտությունների», №3 (614), էջ 33-51:

Մուրադյան Պ.Ս. 1977, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 363 էջ:

Պատմութիւն նահանգին Միսական 1910, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Միւնեաց, Թիֆլիս, Էլէքթրաշարժ տպ. օր., Ն. Աղանեանցի, 618 էջ:

Կարապետյան Ս. 2004, Հյուսիսային Արցախ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 583 էջ:

Փավստոսի Բուզանդացոյ 1987, Պատմութիւն հայոց, բնագիրը Բ. Պատկանյանի, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 455 էջ:

Аджаб ад-Дунйа (Чудеса мира) 1993, Москва, Критический текст, пер. с персидского, введение, комментарий и указатели Л.П. Смирновой, Издательская фирма «Восточная литература», 540 с.

Картлис Цховреба. История Грузии 2008, Тбилиси, издательство Артануджи, 454 с.

Шихаб ад-Дин Мухаммад ан-Насиви 1937, Жизнеописание султана Джалал ад-Дин Манкбурын, перевод с арабского, комментарии, примечания З.М. Буниятова, Баку, “Элм”, 450 с.

Арташес И. Шахназарян, *Институт истории НАН РА, к.и.н., доцент*, **Из истории провинции Гардман.**

Резюме

Гардман является одной из провинций страны Утик Великого Айка, игравшей огромную роль в политической и духовно-культурной жизни армян в средневековый период. Этим обусловлено частое упоминание Гардмана в армянских и иностранных источниках. Однако определенные этапы средневековой истории провинции Гардман все еще нуждаются в изучении, в частности, исторический отрезок, охватывающий начало XIII в. вплоть до 40-х годов этого века.

До конца XII в. провинция Гардман была под господством Елткузского атабекства Гандзака. Процесс освобождения от чужеземного господства охватил начало XIII в. и завершился в 1216/1219 гг. Это стало возможным благодаря освободительной борьбе, которую возглавили Иване I, принадлежавший к старшей ветви Захарянов, и представитель Ваграмянов из младшей ветви Захарянов со своим сыном Ваграмом Гагеци. После этого большая часть Гардмана вошла в княжество Ваграмянов, а его малая часть – в княжество Иване I. Провинция Гардман очень пострадала, во-первых, из-за разведывательных походов монголов в 20-х гг. XIII в., затем в результате военных действий Джалал ад-Дина. В 1236 г. она была захвачена монголами, но при этом осталась подвластной Ваграмяном и сыну Иване I – Авагу.

Ключевые слова: Гардман, Чарек, Гетабак, Тавуш, Иване I, Княжество Ваграмян, Ваграм Гагеци, Вардан Кадж, Хатун.

Artashes I. Shahnazaryan, *Institute of History of the NAS RA, PhD in History, Associate Professor*, **The history of the Gardman province.**

Summary

Gardman is one of the provinces of Utik region of the Great Hayq that played a big role in political, spiritual-cultural and religious life of Armenia, in the Middle Ages. Due to this, it was often mentioned in Armenian and foreign sources for this reason, Gardman was frequently mentioned in Armenian and foreign sources. However, certain periods of History of Gardman province were studied insufficiently (still need to be studied more thoroughly). One of them is the period between the beginnings of the XIII century till the 1240s.

Until the end of the XII century, Gardman province was under control of Yelktuz atabeg of Gandzak. Its liberation from foreign occupation started since the very beginning of XIII century and ended in 1216/1219. This was made possible due to the liberation wars (struggle) headed by Ivane I of the Zakaryans' senior branch and a representative of the Vahramyans' junior branch of Zakharyans with his son Vahram Gagetsi. After that the most part of Gardman was joined into Vahramyans', the little part of it into the possession of Ivane the I (thereafter, most of Gardman became part of the Vahramyan's principality, while a small part of it joined the principality of Ivane I).

Gardman province suffered a lot firstly because of the the exploratory invasion of Mongols in 1220s and secondly because of military operations (the war campaigns) led by Jalal ad-Din. It was

conquered by Mongols in 1236 but stayed in the dominions of the Vahramyans and Ivane I's son Avag.

Key words: Gardman, Charek, Getabek, Tavush, Ivane I, Principality of the Vahramyans, Vahram Gagetsi, Vardan Kaj, Khatun.

ASHOT A. MELKONYAN

Institute of History of the NAS RA

Dr. of Sci. in History, Professor, Academician of the NAS RA

ashamelk@yahoo.com

THE HISTORICAL STAGES OF THE ARMENIAN STATEHOOD IN THE NEW ERA (MID-17TH C. – 1918)*

Key words: Artsakh, Israel Ori, liberation program, semi-independent principalities, Shahamir Shahamiryan, sovereignty, statehood, Syunik.

Introduction

A new period of Armenian history took place from the mid-17th century to 1918 when the Armenian liberation movement was experiencing a new revitalization. The Armenian Apostolic Church had become the head of that struggle. At the initiative of the Armenian spiritual and secular elite, plans for liberation from foreign rule with the help of Christian states were discussed. On this occasion various delegations were sent to European countries in order to obtain assistance.

From the beginning of the 18th century, the leaders of the Armenian liberation struggle connected the problem of the liberation of Armenia with the Russian Empire. In the 1720s - 1740s the

* Submitted on 3.X.2022, reviewed on 31.X.2022, accepted for publication on 15.XII.2022.

struggle for liberation gave its result in Artsakh and Syunik: Armenian formations were officially recognized by Persian authority.

After annexing Eastern Armenia to Russia in the first thirty years of the 19th century, the Russian authorities formed an administrative unit named “Armenian oblast (district)” in order to create an illusion of restoring Armenian statehood. It is no coincidence that this unit dissolved 12 years later.

Along with the idea of liberation of Western Armenia, the Armenian national parties that were formed in the last decades of the 19th century considered the issue of the restoration of Armenian statehood as a key point in their program documents.

The history of statehood in modern times (mid 17th c. – 1918) demonstrates its own peculiarities. In the first stage (mid 17th – early 18th cc.), which can be called a period of local offshoots of the statehood, there exists no pan-Armenian statehood, but it appears in different regions of Armenia: Artsakh, Syunik, Gegharkunik, Moks, Shatakh, Sasun, the mountainous areas of Cilicia with various manifestations of self-governing formations (syghnakhs: defensive castles, melikdoms, principalities, self-governing communities).

The secret liberation meeting convened by Catholicos Hakob Jughayetsi in Ejmiatzin in 1677 announced the beginning of that stage. The delegation, headed by the Armenian Patriarch, arrived in Constantinople, and addressed King John Sobieski of Polish-Lithuanian Commonwealth with plans for the liberation of Armenia. After the death of Hakob Jughayetsi, Israel Ori, a young member of the delegation, journeyed to Europe and first turned to Johann Wilhelm – the Elector (Grand Prince) Palatinate of Germany and to

King Peter I of Russia in 1701 with interesting plans for the liberation and restoration of the statehood of Armenia. It is noteworthy, that in order to arouse the interest of the abovementioned rulers in his plans (Palatinate and Moscow), Ori diplomatically explained them that after the liberation of Armenia they could become the king of Armenia. However, in, as Academician Ashot Hovhannisyanyan rightly noted while interpreting the Armenian version of the letter addressed to the Russian Tsar from the Syunik meliks descending from the Proshyan kin, “For a moment Ori imagined himself in the role of the leader of the future Tsar-sponsored and Russia-liberated Armenia”¹.

The period of local (localized) offsprings of statehood

From then on, the practical steps for the restoration of statehood in the general chain of the national liberation struggle continue to be taken in Syunik and Artsakh. Thereby, the stage of practical steps towards the restoration of statehood (1722-1747) launched. The liberation struggle led by Davit Bek in Syunik was crowned with success: in 1724 Shah Tahmasp II of Iran recognized the Armenian principality of Syunik, taking into account the aspirations of the Armenians for liberation, aiming to use the princely state of David Bek against a common enemy – the Ottoman Empire.

As a result of the Armenian-Iranian cooperation in the 1730s, through the efforts of Nadir Khan (Shah), the Armenian melikdoms extended their power not only over the mountainous regions of Eastern Armenia (Syunik, Artsakh, Gegharkunik), but also the plains. Already by his decree of 1734, David, the high priest of Dovshanlu

¹ Հովհաննիսյան 1959, 498:

village in Artsakh, was appointed as the village elder and melik of that and several other villages of Khachen. “The order should not be opposed” the document instructed, “and by accepting it as a strict order, they should spare no effort [in carrying it out]. Let them consider it their duty”².

In another edict, Nadir “gave the power back to Manuchar – the son of the melik of Gegharkunik Melikjan Melik-Shahnazaryan, received him in his hall..., and gave him the title of mirimir or beylerbey over the land of Ararat and a part of Syunik”³. By a special royal decree of the Shah in 1738, the rights of muafs were granted to meliks Hakobjan and Mkrtum of Yerevan, “for the good service among the best petitioners, just as previously the royal decree had established their muafs and other [rights] in accordance with the order...”⁴.

Numerous Armenian meliks, allied with the Persians, fought against a common enemy – the Ottomans. In that struggle, especially the meliks of Artsakh, headed by melik Yegan of Dizak, gained de facto autonomy, and Nadir’s cooperation with their armed forces rose to a higher level. In Artsakh, in the cantons of Varanda, Dizak, Jraberd, Khachen and Gulistan, which were dependent upon Gandzak’s former beklarbekdom, a new Armenian autonomy – the melikdoms of Khamsa (Arabic: khamsa – five), was established in 1736. Nadir, strongly highlighting the important role of the

² Մ. Մաշտոցի անվան մատենադարան, Կաթ. Դիվան, թղթ. 2բ, վավ. 182: Կոստիկյան 2005, վավ. 2:

³ Մելիք-Սիլիմեանց Հ. Զմիռնիացի, Համառոտութիւն պատմութեան Հայկազեանց, Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. 2888, էջ 341ա, զհ. Հայոց պատմություն 2010, 55:

⁴ Մ. Մաշտոցի անվան մատենադարան, Կաթ. Դիվան, թղթ. 2գ, վավ. 1032:

Armenians in the anti-Turkish struggle, did not hesitate to recognize this unique statehood of Artsakh. In fact, he ratified the true story created as a result of the 15-year heroic struggle of the Armenians⁵.

The stage of practical steps towards restoring statehood (1722-1747)

The second half of the 18th c. and the first half of the 19th c. was the stage of elaboration and partial implementation of the new plans of liberation of Armenia. It began with the intense activity of the famous Indian-Armenian figure Joseph Emin⁶. The Russo-Turkish War of 1768-1764 and the acceptance of Russian patronage of Georgia, under the Russian-Georgian Treaty of Georgievsk in 1783, were new impetuses for the development of more substantial liberation plans. In 1769, the plans drawn up by Movses Sarafyan – an Armenian figure living in Astrakhan envisaged the restoration of the Armenian Kingdom with the help of Russia. In the reconstruction of the statehood, attention was given to the experience of the regions of Armenia, which from time to time were autonomous formations and were perceived by the Armenian people as regions worthy of imitation and the most possible regions for the restoration of the kingdom. Particularly, Artsakh and Syunik were mentioned. It is not accidental that among the candidates of future Armenian kings, M. Sarafyan considered one of the meliks of Artsakh. It is obvious that the reality of statehood restoration in Artsakh in 1722-1747 and the offshoots of the melikdoms had clearly

⁵ See Հայոց պատմություն 2010, 64-65.

⁶ On Joseph Emin's plans and liberation activity, see in detail Иоаннисян 1945.

left their stamp on the similar mindset of the leaders of the liberation struggle.

It is remarkable that at that time the meliks also realized their mission in the restoration of the kingdom, did not forget their Armenian royal origin and occasionally mentioned it in official correspondence. Hence, in regular letters addressed to the great Russian general Alexander Suvorov and Empress Catherine II on September 2, 1781, asking for military assistance in the unequal struggle against the Muslims, the meliks of Artsakh (Adam, Beglar, Israel) wrote about themselves: “We are from the Armenian nation, from the house of the Arsacids and from Caucasian Albania, from the royal throne, the heir meliks of honest soldiers inherited from the remaining, our whole country with rulers...”⁷.

The joint anti-Persian and anti-Turkish struggle of Armenians and Georgians was also especially important at that time, and, as a result of which, the idea of creating an Armenian-Georgian Christian state under the auspices of Russia. For example, in the 1750s and 1760s, Joseph Emin was fully aware that the Georgian Bagratids descended from the Armenian Bagratids, linked the issue of creating an Armenian-Georgian state with the name of King Heraclius II of Georgia⁸.

In 1783, the project of Joseph Arghutyan and Hovhannes Lazarev consisting of 18 points outlined much more clearly the way

⁷ Армяно-русские отношения в XVIII веке (1760-1800) 1990, 179, 181. By the way, in the Russian translations of those letters, the part about the meliks, being descended from the Armenian kings, is removed, and the word “king” is replaced by the word “chief” (ibid., 180, 183-184). On the struggle for national liberation and statehood in Artsakh, see also Բալայան 2012, Բալայան 2013.

⁸ See Иоаннисян 1945, 48-49.

to the restoration of the Armenian Kingdom. Ancient Ani or Vagharshapat was to become the capital of liberated Armenia. The program, entitled “A Way of Confederation between Two Nations: Russians and Armenians”, presupposed horizontal relationships between liberated Armenia and its ally Russia. An Armenian-Russian military alliance was to be signed, the Russian troops stationed in Armenia were to protect the country from the encroachments of the Ottoman Empire and Persia. Armenia was to become a taxpayer to Russia, in case of need it was obliged to provide military forces to the Empire. Russian Empress Catherine II reserved the right to elect one of the Armenians or one of her relatives as king of Armenia⁹.

Prominent Indian-Armenian figures Shahamir Shahamiryan and Movses Baghramyan raise the ideological vision of Armenian state-building to a new height. In the printing house founded by them in Madras in 1771, M. Baghramyan’s works entitled “New Booklet of Exhortation” and Sh. Shahamiryan’s “Snare of Glory” were soon published, in which reference was made to the difficult situation of the Armenian people, and instead of a monarchy, which according to the authors was one of the main reasons for the collapse of the Armenian statehood, was proposed to create a democratic state. Unlike all previous programs, Shahamiryan’s project, known as the “Southern Plan”, put forward the idea of creating Republican Armenia formed on the bases of common suffrage, which was extraordinary for the given period. In future Armenia, not the will of the monarch, but the law would be above everything. According to the “Snare of Glory”, it is necessary to “remain dependent on your

⁹ See Հայոց պատմություն 2010, 168-169.

own laws, for there should be no one to rule over you but your laws”¹⁰.

Academician V. Barkhudaryan, referring to the liberation programs of the second half of the 18th c., emphasizes that “the most significant and remarkable thing is, that both in Armenia and in the Russian and Indian colonies, along with the liberation of the country, the task of restoring the independent Armenian statehood was set in unison and in full force”¹¹.

Occupying Eastern Armenia in the first thirties of the 19th c., the Russian court did not want to, or rather could not, impose imperial regimes in the Caucasus for some time. Thereby, for the time being, certain elements of local self-government, that existed during the Persian influence, were preserved. Moreover, in order to create the illusion of backing the liberation plans¹², developed particularly in late 1827 by the Armenian public circles, Kh. Lazaryan, K. Arghutyan and A. Khudabashyan, an administrative unit called¹³ the “Armenian Province” was established by a decree of Nicholas I of March 21, 1828 in the territory of the former khanates of Yerevan and Nakhichevan. In order to point out the “grace of statehood”

¹⁰ Գիրք անուանեալ Որոգայթ փառաց 1773, 15-16:

¹¹ Հայոց պատմություն 2010, 178:

¹² According to the plan presented by Khachatur Lazarev, the Armenian kingdom was to include all the territories of Eastern Armenia under the rule of the Russian Empire: the regions of Yerevan, Nakhichevan, Karabakh, Shaki, Shamkhor. Armenia should have its own armed forces, Armenian laws had to operate in the country, etc. (see Հայոց պատմություն 2010, 262).

¹³ See Собрание актов, относящих к обозрению истории армянского народа 1833, 278-279. In the Armenian version of this decree, Armenian politicians used the word “Haykazants canton” instead of the “Armenian Province”, most likely perceiving the very administrative unit as a fact of restoration of the Haykazuni state of Greater Armenia (see *ibid.*, 278).

showed towards the Armenians in the Tsar's decree, it was emphasized that the government of the newly created region was passed under the titular power of emperor¹⁴.

Certainly, this administrative unit did not differ much from other administrative units of the Russian Empire in its system of government, but some of its features, especially among the Armenians, created a deceptive image of the Armenian statehood. Thus, the name "Armenian" of the unit was a source of inspiration for some circles of Armenians, while other administrative units of the Empire were not distinguished by national names. The region had its own flag, coat of arms, etc. According to the decision of the Russian Senate of March 25, 1833, in the center of the coat of arms of the Armenian Province was to be depicted the snow-capped Ararat, Noah's golden ark on the top, the crown of the Armenian kings in the lower right corner, and Holy Etchmiadzin in the left. The coat of arms would feature the Russian imperial symbols– the eagle and the imperial crown¹⁵.

For eight of the 12 years of its existence (1830-1838) the region was ruled by the prominent Armenian state-military figure Vasil Behbutov, Melik Sahak Melik-Aghamalyants was to represent the Armenian population of Yerevan in the governing department of the province. Historian Leo noted that the abovementioned "privileges" made to Armenians created the illusion of statehood restoration among certain segments of Armenian society, so there were calls

¹⁴ See the document: "Hereafter, we command in all matters to name it the Armenian Province and include it in the title of Ours". (ibid., 278) (in Russ.).

¹⁵ See Собрание актов, относящих к обозрению истории армянского народа 1838, 280.

everywhere to return to the homeland “liberated” with Russian help¹⁶.

However, considering even this temporary “concession” dangerous, on April 10, 1840, the Armenian province was abolished and other administrative units were created in Transcaucasia. Before that, by the Tsarist decree adopted on March 11, 1836 (Polozhenie), the Armenian Church was banned from engaging in state-political activities.

At the same time, the rights of the Armenians and other peoples of the region were completely ignored by the administrative redistributions carried out in other regions of the Cis-Caucasus and Eastern Armenia. With the creation of the governments of Tiflis in 1846, Yerevan in 1849, and then of Elizabetpol, the Armenian districts became part of different territorial units. This put an end to the stage of elaboration and partial implementation of new programs for the liberation of Armenia. In fact, the Armenian statehood, which had existed for thousands of years with various manifestations, completely collapsed at that time, particularly in Eastern Armenia. It is noteworthy that this circumstance is also mentioned in Russian official documents. “The Armenian Kingdom,” we read in one of such documents, “which existed for almost 4000 years, either independently or dependent on other nations..., experienced a decline”¹⁷.

From the second half of the 19th c., a period commenced when almost all the germinations of sovereignty disappeared in Eastern

¹⁶ See Lkn 1927, 133.

¹⁷ Собрание актов, относящих к обозрению истории армянского народа 1838, 281.

Armenia after the establishment of Russian regimes, and in Western Armenia, except for Sasun, in Cilicia, Zeytun¹⁸, the struggle for statehood, conditioned by the heaviest political situation for the Armenian people, was replaced by the vision of simply achieving Armenian autonomy within the Ottoman Empire.

During that period, the Armenian question, the reform program in Western Armenia under the control of European powers, perceived by a significant part of the Armenians as a question of liberation, became commonplace among international diplomatic circles. It is noteworthy, that according to the 61st Article of the Treaty of Berlin, the objective of achieving autonomy through reforms prevailed, and in its turn, the idea of independence was not included¹⁹ in the program documents of the Armenian national parties created during 1885-1890. Thus, the Armenakans, the Hunchakians and the Armenian Revolutionary Federation, and the lofty ideal of statehood were replaced by vain notions of autonomy.

¹⁸ These two mountain communities, with astonishing perseverance, did not retreat from the encroachments of the Ottoman authorities. Zeytun in 1862 and in 1895-1896, and Sasun in 1894 and in 1904 due to self-defense fights, in fact, retained many elements of their autonomy, remaining the last islets of the Armenian liberation lust in modern times. Moreover, at every opportunity, the brave mountaineers did not miss the moment to make the autonomous status independent. For instance, after expelling the Turks from the canton during the uprising of 1895, they raised a flag with the inscription “Independent Government of Zeytun” and were in fact in a state of independence for three months (see Մկրտչյան 1995. On the semi-independent status of Zeytun see also Պողոսյան 1969).

¹⁹ In that sense, perhaps the program of the Social-Democratic Hunchakian Party can be singled out, according to which the liberation of the Western Armenians was to be followed by the liberation of the Armenians subjected to Russia and Persia. After the unification of these three parts of Armenians, in the distant future it was planned to create a socialist state – a democratic republic (see «Հնչակ» (Լոնդոն), 1888, թիվ 10, cf. Հովհաննիսյան 2012, 23).

This stage of modern times, which lasted until the end of May 1918, can be conventionally called the stage of decline of the last offshoots of statehood and, at the same time, the stage of creation of preconditions for the restoration of statehood.

The stage of creation of prerequisites for restoration of statehood

At the beginning of the 20th c., the rise of the Armenian liberation movement against Ottoman and Russian hegemonies (new manifestations of the Hayduk movement, speeches against the Tsarist law on confiscation of Armenian church property, formation of self-defense detachments during the Armenian-Tatar clashes, etc.) in the Armenian socio-political circles led to the idea of both the joint struggle of the two parts of the Armenian people (East and West Armenians) and the need to create Armenian autonomy through the unification of the Armenian-populated districts of the Transcaucasus. This approach was especially noticeable in the Central Parliamentary Assembly of the Armenians of Russia convened in Etchmiadzin on August 17, 1906²⁰. It is not accidental that the authorities assessed that assembly as an activity aimed at the restoration of the Armenian statehood and soon dissolved it.

The intensification of the colonial policy of tsarism at the beginning of the 20th c. and the rise of the general liberation struggle of the two segments of the Armenians, raised the need to review the approaches of Armenian political parties on a number of important issues. The IV General Assembly of the ARF convened in Geneva made some changes in the party program. If the plan of 1892 envisaged autonomous status within the Ottoman Empire only for

²⁰ See Հայոց պատմություն 2015, 22, cf. Միմնյան 2003, 767-786.

Western Armenia, then here was also added the issue of the autonomy of Eastern Armenia and the Armenians of the whole Transcaucasia within the Russian Empire: “The Transcaucasian Democratic Federal Republic should be an integral part of the Russian Federation (should be understood as federal – A. M.) in connection with the issues of state autonomy, monetary system, customs and foreign policy”²¹.

The movement for autonomy among the Western Armenians gained new momentum on the eve of the First World War. In some circles of the Armenians, A. Mandelstam’s Russian program of Armenian reforms (1913) aroused some enthusiasm, which, envisaging the creation of one of the six Western Armenian states, created the illusion of united Armenia. This explains the negative attitude of Germany, an ally of the Ottoman Empire, towards the project, which led to its rejection and the signing of the Russian-Turkish agreement of January 26, 1914 instead: the latter did not contain any trace of Armenian autonomy.

In the summer and in September of 1914, long before the opening of the Russian-Turkish Caucasian front, emphasizing the position of the Armenians in the war, both the Young Turks and the Russian court did not hesitate to make lavish promises to the Armenians. It seems odd that in case of occupying Eastern Armenia with the support of the Armenians, the Turks promised to allow the

²¹ The program of the Armenian Revolutionary Federation, Constantinople, 1908, p. 26, cf. Hambaryan Azat, *Liberation Movements in Western Armenia*, Yerevan, 1999, p. 165. According to Khudinyan G., “Thus, for the first time on the political ground, “The program of the ARF outlined the issue of establishing a separate Armenian territory in Transcaucasia and on the basis of it, in the future, also the issue of statehood.” (Խոսքիսյան 2003, 108).

formation of “Armenian autonomy” there, and the Russians, after occupying Western Armenia, to reward them with the creation of an autonomous Armenia under the auspices of Russia. Time has shown that those bilateral promises were only aimed at using Armenians for the implementation of their political programs.

The victories of the Russian troops in the war, in which the Armenian volunteer detachments also had a significant contribution, raised hopes for liberation from the Ottoman rule and the establishment of Armenian autonomy in Western Armenia, so most of the Armenian socio-political forces supported the Russian authorities by all possible means²². And in early May 1915, when about a month of heroic self-defense ended with the liberation of Van, the dream of thousands of Armenians to restore the ancient kingdom seemed realistic.

Russian army officer, Cossack F. Eliseev, who was well aware of the Tsarist plan to create a “Euphrates Cossack” in Western Armenia, wrote about those naive plans of the Armenians in his memoirs: “Unfortunates ..., they were certainly convinced that at least now, with the help of the victorious Russian troops, their Greater Armenia will be liberated and built”²³.

Among the Armenian figures, especially Aram Manukyan, the de facto head of Van self-defence, took practical steps to achieve Armenian autonomy, the seeds of which he had sown during the days of the April wars. Being appointed the governor (prefect) of Van

²² Չիրակոսյան 1965, 174-190. In November 1914, Nicolas II “promised” Armenian politicians in Tiflis that “the Armenian question would be resolved in accordance with the expectations of the Armenians” only that they would not be as ungrateful to Russia as the Bulgarians after liberation (see *ibid.*):

²³ Елисеев 2001, 102.

province by General A. Nikolaev, he soon established local authority²⁴.

The process of the establishment of the Armenian statehood started to become a reality day by day, so it could not go unnoticed not only from the sight of the Tsarist authorities, but also from the attention of the adolescents of Van who witnessed the battles. 11-year-old Grigor Grigoryan from Van Diocesan School, mentioned in his memoirs written at V. Teryan's request in the Yerevan orphanage at the beginning of 1916: "After the glorious battle of Van, we lived happily in Van, completely cleansed of the Turks and under a purely Armenian government... We lived with hopes for the future. ... But suddenly a misfortune happened: the Russian soldiers retreated, and we were forced to emigrate to Russia"²⁵.

The Armenian Genocide and the catastrophic retreat of Van in July 1915 only temporarily ceased the steps for independence of the Armenians. After the February Revolution of 1917, the Interim Government's incomparably friendly attitude towards the Armenian question, in particular the establishment of a General Commissariat in the Western Armenian districts taken from the Turks by the ordinance of April 26, brought the issue of establishment an autonomous state in Western Armenia back to the agenda. Thanks to the efforts of Deputy Commissioner-General Hakob Zavriyan, other Armenian figures appointed to various positions in place (Murad Sebastatsi, Sepuh, K. Hambardzumyan, Hamazasp, etc.) and numerous Armenian organizations operating in the Cis-Caucasus,

²⁴ See Սահակյան 2015, 178-215.

²⁵ Էմիլի-Տերյան 2016, 30:

particularly the national councils²⁶, numerous Western Armenian migrants returned to their homeland and set about rebuilding it. S. Vratsyan wrote about the prevailing enthusiasm: “A kind of extraterrestrial state was being created with central and local authorities. In the future, when Turkish Armenia would have become free, the government machine was already ready”²⁷.

Even after the Bolshevik coup in 1917, when the new Russian authorities did not stand out with their “Armenophilia” and their policy led to the disintegration of the Caucasian army and front, Armenian political circles continued their efforts in establishing an autonomous state in Western Armenia. One of its vivid expressions was the “Decree on Turkish Armenia” that was created with the participation of figures representing different political parties and views and was adopted on December 29, 1917 by the government of Bolshevik Russia (People’s Council), which nominally recognized the right of the Armenian people to self-determination in Western Armenia.

Another similar manifestation took place a month after the adoption of the abovementioned decree, on January 30, 1918, when one of the Armenian figures, Colonel Torgom (Arshak Yervandyan), issued a special proclamation announcing the restoration of Armenian statehood with capital Erzurum. However, the Russian

²⁶ National councils, established in different regions of Transcaucasia in 1917, became centers for the organization of Armenian political life. The Eastern Armenian National Council in Tiflis stood out among them, which played an important role in the preparation and restoration of the Armenian statehood due to historical events (Պեւոնոյան 2016, 51-57).

²⁷ Վրացյան 1993, 33:

military authorities took that step with hostility and, by arresting Torgom, filed a lawsuit against him²⁸.

In January 1918, discussions launched in Tiflis between the ARF members (R. Ter-Minasyan, H. Zavriyan and others) and the Armenian Bolsheviks (S. Shahumyan, D. Shahverdyan, S. Kasyan, etc.) to clarify approaches towards the future of the two parts of Armenia. The parties came to the conclusion that the creation of an independent state in Western Armenia and an Armenian canton in Eastern Armenia with Russian-sponsored autonomy should be fought for.²⁹ Unfortunately, this program was not implemented for various political reasons.

Due to the rapid developments (deepening process of disintegration of the Russian Empire, collapse of the Caucasian front, etc.), the Armenian national figures were forced to voluntarily secede from Russia joining the Transcaucasian Commissariat that was established on November 15, 1917 and later also to the Transcaucasian Seim.

Realizing the whole complexity of the military-political situation, in December 1917, the Armenian National Council sent Aram Manukyan to Yerevan who had gained considerable experience in state-building in Van in 1915. Assuming the duties of the chairman and dictator of the National Council of Yerevan, Aram carried out hard work in Eastern Armenia, particularly in establishing order in the province of Yerevan, in organizing the defence, thus creating preconditions for the restoration of statehood. It is not accidental that at the end of May 1918, during the heroic battles of Sardarapat,

²⁸ See Մելքոնյան 1996, 136.

²⁹ See Մելիքյան 2010, 242.

Bash Aparan, Gharakilisa, when the Seim – the authority body of the Transcaucasian Federal Democratic Republic – collapsed, a few days later the Armenian National Council declared Armenia an independent republic. Therewith, the contemporary era of the Armenian statehood began.

Conclusions

The misconception spread in Armenian historiography and political science literature that the Armenian people did not possess statehood for centuries, especially refers to the new era. A detailed study of the facts allows to conclude that after the fall of the kingdom in Cilicia in 1375 until 1918 Armenian statehood had continued to exist in various places of Armenia in various forms. During the liberation struggle the Armenians in the mountainous regions (Artsakh, Syunik) had occasionally achieved international recognition of the right to live sovereignly. In the second half of the 19th – at the beginning of the 20th centuries the Armenian political elites ideologically prepared the process of restoration of Armenian statehood.

BIBLIOGRAPHY

Բալայան Վ. 2012, Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության (1813-2007 թթ.), Ստեփանակերտ, «Սոնա գրահրատարակչություն», 416 էջ:

Բալայան Վ. 2013, Արցախահայ ազատագրական պայքարի բովանդակությունը 17-րդ դարի երկրորդ կեսից մինչև 1813 թ., Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատ., 123 էջ:

Էմին-Տերյան Գ. 2016, Վահան Տերյանի անհայտ նախաձեռնությունը. հայ որբերի հուշերը, Երևան, Անտարես հրատ., 376 էջ:

Լեո 1927, Հայոց պատմություն, նորագույն շրջան, մ. Բ, Երևան, ՀՄԽՀ Պետական համալսարան, 483 էջ:

Խոռոչյան Գ. 2003, Հայ Յեղափոխական Դաշնակցություն, Հայ ազգային և Հայաստանի ու Անդրկովկասի սոցիալիստական կուսակցությունների պատմության ակնարկներ (1885-1914), Երևան, էջ 76-109:

Կիրակոսյան Ջ. 1965, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, «Հայաստան» հրատ., 512 էջ:

Կոստիկյան Բ. 2005, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ IV, Երևան, Նաիրի հրատ., 386 էջ:

Համբարյան Ա. 1999, Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 477 էջ:

Հայոց պատմություն 2010, հ. III, գիրք առաջին, Երևան, «Զանգակ-97» հրատ., 701 էջ:

Հայոց պատմություն 2015, հ. III, գիրք երկրորդ, Երևան, «Զանգակ-97» հրատ., 753 էջ:

«Հնչակ» (Լոնդոն), 1888, թիվ 10:

Հովհաննիսյան Ա. 1959, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմությունից, հ. II, Երևան, ՀՍՄՌ ԳԱ հրատ., 693 էջ:

Մելիք-Սիլիմեանց Հ. Զմիտնիացի, Համառոտություն պատմութեան Հայկազեանց, Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. 2888, էջ 341ա:

Հովհաննիսյան Գ. 2012, Հնչակյան կուսակցության պատմություն (1887-1915), Երևան, Պատմության ինստիտուտ, 352 էջ:

Մ. Մաշտոցի անվան մատենադարան, Կաթ. Դիվան, թղթ. 2բ, վավ. 182, թղթ. 2գ., վավ. 1032:

Մելիքյան Վ. 2010, Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում. Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը, Երևան, Պատմության ինստիտուտ, 263 էջ:

Մելքոնյան Ա. 1996, Էրզրում, Հայկական հարց հանրագիտարան, էջ 135-136:

Մկրտչյան Լ. 1995, Զեյթունի ապստամբությունը (1895-1896 թթ.), Երևան, Համազգ. հայ կրթական և մշակութային միություն, 209 էջ:

Գիրք անուանեալ Որոգայթ փառաց 1773, Մադրաս, տպ. Հակոբ Շահամիրյանի, 339 էջ:

Պետրոսյան Գ. 2016, Հայոց ազգային ժողովի և հայոց ազգային խորհրդի ստեղծման պատմությունից, «Հայագիտության հարցեր» հանդես, թիվ 2(8), էջ 51-58:

Պողոսյան Հ. 1969, Ձեյթունի ապստամբությունը (1409-1921 թթ.), Երևան, Հայաստան հրատ., 457 էջ:

Սահակյան Ռ. 2015, Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը 1914 թ. հուլիս - 1917 թ. փետրվար, Երևան, Պատմության ինստիտուտ, 427 էջ:

Սիմոնյան Հ. 2003, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I, Երևան, ԳԱԱ տպարան, 815 էջ:

Վրացյան Ս. 1993, Հայաստանի Հանրապետություն, «Հայաստան», 704 էջ:

Армяно-русские отношения в XVIII веке (1760-1800) 1990, Сборник документов, т. IV, Ереван, Изд. АН Арм. ССР, 594 с.

Елисеев Ф.И. 2001, Казаки на Кавказском фронте 1914-1917, Москва, Воениздат, 308 с.

Иоаннисян А.Р. 1945, Иосиф Эмин, Ереван, Изд. ЕГУ, 353 с.

Собрание актов, относящих к обозрению истории армянского народа, ч. I, Москва, 1833, В Тип. Лазаревых Института Восточных языков, 391 с.

Собрание актов, относящих к обозрению истории армянского народа, ч. II, Москва, 1838, В Тип. Лазаревых Института Восточных языков, 501 с.

Աշոտ Ա. Մելքոնյան, ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.դ., պրոֆեսոր, ԳԱԱ ակադեմիկոս, Հայոց պետականության պատմափուլերը նոր դարաշրջանում (XVII դ. կես – 1918 թ.)

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայոց պետականության պատմությունը շարունակվում է նաև նոր դարաշրջանում՝ ունենալով նոր դրսևորումներ ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում: Շատախում, Մոկսում, Սասունում, Համշենում, Ձեյթունում, Սյունիքում, Արցախում, Գեղարքունիքում և այլուր ձևավորվում են կիսանկախ լեռնային համայնքներ, որոնք լեռնաշղթաներով կտրված հարևան գավառներից, ունենալով ինքնաբավ ապրելու

համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ, օսմանյան և պարսկական իշխանություններին որոշակի քանակությամբ հարկեր վճարելու դիմաց տեղերում ձեռք են բերում ինքնիշխանություն: Այդ փուլը, որը տևում է մինչև XVIII դ. սկիզբը և կարելի է անվանել պետականության տեղական (տեղայնական) շառավիղների ժամանակաշրջան:

XVIII դ. սկիզբը նշանավորվում է ազատագրական պայքարի վերելքով: 1722-1730-ական թթ. Արցախի և Սյունիքի ազատագրական պայքարի շնորհիվ հայկական այդ երկու երկրամասերը որոշակի ժամանակով ձեռք են բերում ոչ միայն փաստական ինքնիշխանություն, այլ նաև իրավական ճանաչում Պարսից արքունիքի կողմից: 1724 թ. Թահմասպ II շահը ճանաչում է Դավիթ Բեկի իշխանությունը, իսկ Նադիր շահը 1735 թ. Արցախում ստեղծում է Խամսայի մելիքությունների դաշնությունը: Ուստի, պայմանականորեն դարի առաջին կեսը պետականության վերականգնման գործնական քայլերի փուլն է:

Նոր դարաշրջանի պետականության հաջորդ ենթափուլն ընդգրկում է XVIII դ. երկրորդ կեսն ու XIX դ. առաջին կեսը՝ Հայաստանի ազատագրության նոր ծրագրերի մշակման ու մասնակի գործադրման ժամանակահատվածը, երբ հայ ազգային գործիչների կողմից մշակվում և Ռուսական կայսրության արքունիքին են ներկայացվում Հայաստանի ազատագրության մի շարք ուշագրավ ծրագրեր:

Նոր դարաշրջանի պետականության պատմությունը եզրափակվում է պետականության վերականգնման նախադրյալների ստեղծման ենթափուլով (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ):

Բանալի բաներ՝ նոր դարաշրջան, պետականություն, Մյունիք, Արցախ, մելիքներ, Իսրայել Օրի, Հովսեփ Էմին, Մովսես Սարաֆյան, Շահափր Շահափրյան:

Ашот А. Мелконян, *Институт истории НАН РА, д.и.н., профессор, академик НАН РА, Исторические этапы армянской государственности в новую эпоху (половина XVII в. – 1918 г.)*

Резюме

История армянской государственности в новую эпоху проявляется как в Восточной, так и в Западной Армении и Киликии. В Шатахе, Моксе, Сасуне, Амшене, Зейтуне, Сюнике, Арцахе, Гегаркунике и других регионах армяне, отрезанные горными хребтами от соседних провинций и имевшие благоприятные климатические условия для самообеспечения, начинают создавать полунезависимые горные общины. Уплачивая определенную часть налогов османским и персидским властям, армяне обретали фактический суверенитет. Этот этап, который длится до начала XVIII века, может быть охарактеризован как период локальных проявлений государственности.

Начало XVIII века отмечено подъемом освободительной борьбы. В 1722-1730-е гг., благодаря освободительной борьбе армян, Арцах и Сюник получили не только фактический суверенитет на определенный период времени, но и юридическое признание со стороны персидского двора. В 1724 г. персидский шах Тахмасп II признал правление Давид-бека, а Надир шах в 1735 г. в Арцахе создал федерацию пяти княжеств Хамса.

Поэтому первую половину XVIII в. можно рассматривать как этап практических шагов по восстановлению государственности. Следующий подэтап государственности нового времени охватывает вторую половину XVIII – первую половину XIX вв. Это – период разработки и частичного осуществления новых программ освобождения Армении при помощи Российской империи.

История государственности новой эпохи завершается подэтапом создания предпосылок для восстановления государственности (вторая половина XIX – начало XX вв.).

Ключевые слова: Новая эпоха, государственность, Израэль Ори, полунезависимые княжества, суверенитет, Арцах, Сюник, программа освобождения, Шаамир Шаамирян.

ԳԵՂԱՄ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ

gegam.hovhannisan@mail.ru

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ

ՔՆՆԱՐԿՈՒՄԸ «ՁԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ»

ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ*

*Բանալի բառեր*¹ ազատագրական շարժում, ազգային խնդիրներ, արևմտահայություն, բարենորոգումներ, Գարեգին Չիթչյան, Լևոն Լարենց, «Ձայն հայրենեաց», օսմանյան խորհրդարան:

Ներածություն

XIX դ. վերջին և XX դ. սկզբին հայ ժողովրդի ազատագրական շարժման գաղափարախոսության քարոզչությունը մեծապես իրականացնում էին հայ ազգային կուսակցությունների տպագիր օրգանները: Դրանց մեջ իր արժանի տեղն ունեւր Վերակազմյալ հնչակյան կուսակցության օրգան «Ձայն հայրենեաց» պարբերականը: Այն 1899 թ. լույս է տեսել Նյու-Յորքում, 1900-1908 թթ.՝ Բոստոնում, իսկ 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո հրատարակվել է Կ.Պոլսում: Թերթի խմբագրարտոնատերն էր Վերակազմյալ հնչակյան կուսակցության հայտնի գործիչ Գարեգին Չիթչյանը, խմբագիրներն էին Լևոն Լարենցը (Արսեն Քրիզյան), Սուրեն Պարթևյանը, Միսաք Սուրյանը:

* Ներկայացվել է 10.X.2022 թ., գրախոսվել է 27.X.2022 թ., ընդունվել է տպագրության 15.XII.2022 թ.:

Կ.Պոլսում լույս տեսնելու շրջանում, մինչև 1910 թ. թերթի հրատարակության դադարելը, նրա խմբագիրը Լ. Լաթենցն էր: XX դ. սկզբին պարբերականի ակտիվ թղթակիցներն էին Արսեն Տիրանը, Ատոմ Հայկազը և Արտաշես Մորյանը:

Ազգային-քաղաքական խնդիրների քննարկումը 1901-1907

ԹԹ.

«Չայն հայրենեաց» արձարծում էր Արևմտյան Հայաստանում թուրք-քրդական բռնությունների թեման: Այս թեմայով հրապարակումներ, հաղորդումներ կան թերթի մի շարք բաժիններում՝ քաղաքական, ազգային, քրոնիկ և այլն: Դրանցում բացահայտվում են թուրքերի ազգային ու հողային քաղաքականության ողջ բովանդակությունն ու հակահայկական ուղղվածությունը:

Այսպես, օրինակ, նկարագրելով Խարբերդի հայության ծանր դրությունը, մի նամակագիր վկայում էր, որ իշխանության պաշտոնյաները մի քանի տարվա հարկը միանգամից են պահանջում: Չվճարողներին ծեծում էին, վաճառում տան կահ-կարասին: Նամակագրի խոսքով՝ «ոչ մեր ունեցածին տեր ենք, ոչ ալ մեր անձին ու պատիւին»¹: Մեկ այլ դեպքում, թերթը նշում էր, որ Էրզրումի մոտ քրդերը վանք են թալանել ու սպանել հոգևորականներին²: «Համիտ և համիտիե» հողվածում «Շահեն» ստորագրած հեղինակը ցույց էր տալիս Արևմտյան Հայաստանի գավառներում համիդիե ջոկատների չարագործությունները³:

¹ «Չայն հայրենեաց», 1901, թիւ 76:

² «Չայն հայրենեաց», 1903, թիւ 200:

³ «Չայն հայրենեաց», 1901, թիւ 387:

Պարբերականը, դեռևս 1901 թ. սեպտեմբերին, Կ. Պոլսում եվրոպական դեսպաններին տեղեկացնում էր Սասունի հայության նկատմամբ թուրքական կառավարության կողմից նախապատրաստվող կոտորածի մասին⁴:

«Ձայն հայրենեացն» առաջ էր քաշում այն միտքը, որ հայ ժողովրդի փրկությունը կարող է կատարվել միայն համաժողովրդական ապստամբության միջոցով⁵: «Մինչև ժողովուրդը զենքի չդիմե, անկարելի է որևէ արդիւնաւոր վախճանի մը հանգիլ», - եզրակացնում էր պարբերականը⁶:

XX դ. սկզբին արևմտահայության ազգային-ազատագրական պայքարի մարտավարության շուրջ ՀՅԴ-ի և Վերակազմյալ հնչակյանների միջև ընթանում էր բանավեճ: Գաղափարների բախումը տեղի էր ունենում կուսակցական մամուլի էջերում: Այդպիսի բանավեճ էր ընթանում Բոստոնում լույս տեսնող ՀՅԴ-ի օրգան «Հայրենիքի» և «Ձայն հայրենեացի» միջև: Գնահատելով Բանկ Օտոմանի գրավման, Առաքելոց վանքի կռվի ու Խանասորի արշավանքի մեջ ՀՅԴ-ի ներդրումը և դրանց մասնակիցների անձնական քաջությունը գնահատելով հանդերձ, Գարեգին Չիթյանը գտնում էր, որ դրանք «յեղափոխական դրօշի տակ գործած անիմաստ ու անպատեհ ցույցեր են», որոնք հեռու են օգտակար լինելուց և «աղետաբեր կըլլան մեր ազգին ու մեր սրբազան դատին»⁷: Նա կարևորում էր ինքնապաշտպանական մարտերը և կողմ էր համաժողովրդական ապստամբության նախապատրաստման տեսակետին:

⁴ «Ձայն հայրենեաց», 1901, թիւ 99:

⁵ «Ձայն հայրենեաց», 1902, թիւ 119:

⁶ «Ձայն հայրենեաց», 1903, թիւ 229:

⁷ «Ձայն հայրենեաց», 1902, թիւ 116:

«Տեսակետներու տարբերութիւնը» խմբագրականում պարբերականի թղթակից Գեղամը քննադատում էր ՀՅԴ-ին և, մասնավորապէս, Վռամյանին (Օնիկ Դերձակյան), որ Սասունում սկսված «խլրտումները» բարձրաձայնում են՝ դրանք ներկայացնելով որպէս ապստամբության: Իսկ եթէ դա ինքնապաշտպանության նախապատրաստություն էր, ապա հողվածագիրը դէմ էր, որ այն ՀՅԴ-ն ապստամբություն որակի⁸:

Ազգային կուսակցությունների մարտավարության և փոխհարաբերության հարցերը ևս լայնորեն քննարկվում էին «Չայն հայրենեացի» էջերում⁹:

Թերթի էջերում կան հրապարակումներ, որոնք վերաբերում են ՀՅԴ-ի և Հնչակյանների բարդ հարաբերություններին¹⁰:

«Չայն հայրենեացը» լուսաբանում էր նաև XX դ. սկզբին Ռուսաստանում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունները և իրատեսական կանխատեսումներ անում: «Ռուսաց տագնապը» հողվածում քննարկվում էր Ռուսաստանում տիրող լարված իրադրությունը և ռուս ռուսանողության օրըստօրէ ուժեղացող ազատական շարժումները: Վերլուծելով Ռուսաստանում խորացող ճգնաժամը, սովն ու գործազրկության աճը, պարբերականը գտնում էր, որ ռուսական բացարձակ միապետության օրերը «համրուած են» և սահմանադրության հաստատումը միայն ժամանակի խնդիր է¹¹:

Արծարծելով հայ եկեղեցու կալվածքների բռնագրավման հարցը, պարբերականն ընդգծում էր, որ «հայատեաց Փլէվէն և

⁸ «Չայն հայրենեաց», 1902, թիւ 118:

⁹ Տե՛ս «Չայն հայրենեաց», 1901, թիւ 103, 1902, թիւ 119, 1904, թիւ 308:

¹⁰ «Չայն հայրենեաց», 1902, թիւ 116:

¹¹ «Չայն հայրենեաց», 1902, թիւ 116:

Կալիցին իշխանը հաջողեցան իրենց հայաջինջ ուքազը հանել տալ»¹²:

«Ձայն հայրենեացի» էջերում լայնորեն քննարկվում էին 1904 թ. Մասունի ապստամբությունն ու դրան հաջորդող իրադարձությունները¹³: Անդրադառնալով 1905 թ. սկսված հայ-թաթարական ընդհարումներին, պարբերականը մեղադրում էր ռուսական իշխանություններին՝ դրանք համարելով «Կալիցիններու ստեղծած չարիքը»¹⁴:

Թերթի Վահրամ Մելիք ստորագրած հեղինակը ողջունում էր 12 տարի բանտարկությունից հետո թուրքական բանտից փախած հնչակյան հայտնի գործիչ Մուրատի՝ հայ հեղափոխականների կոնգրես գումարելու նախաձեռնությունը¹⁵:

Իր հրապարակումներում Վերակազմյալ հնչակյանների պարբերականն ուշադրություն էր դարձնում նաև հայ հասարակական-քաղաքական կյանքում լայն տարածում ստացած ընկերվարության կամ սոցիալիզմի գաղափարախոսության հարցին¹⁶:

Միաժամանակ, ընդգծվում էր, որ պատմական տագնապալի ժամանակաշրջանում ցանկացած հայ կուսակցության «աւագ ու միակ պարտականությունը պետք է ըլլայ զուտ ազգային գոյութեան և բարօրութեան յարակից խնդիրներով զբաղվիլ, առանց տկարացնելու մեր ճիգերը՝ ընկերային կամ

¹² «Ձայն հայրենեաց», 1903, թիւ 243:

¹³ «Ձայն հայրենեաց», 1904, թիւ 302, 318, 319:

¹⁴ «Ձայն հայրենեաց», 1905, թիւ 357:

¹⁵ «Ձայն հայրենեաց», 1906, թիւ 402:

¹⁶ «Ձայն հայրենեաց», 1907, թիւ 470:

տնտեսական-միջազգային հարցերու բրոքականտով»¹⁷: Հարցն արձարծվում էր նաև պարբերականի այլ համարներում:

Ազգային-քաղաքական խնդիրների քննարկումը 1908-1910 թթ.

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո պարբերականի բազմաթիվ հրապարակներում ցույց էր տրվում, որ օսմանյան սահմանադրության հռչակումից հետո գավառահայության տնտեսական կյանքում էական փոփոխություն չի կատարվել: Կարիինից «Ձայն հայրենեացի» թղթակիցը գրում էր. «Հոս գործնականապես կառավարական և ո՛չ մեկ տարրը սահմանադրական եղած է դեռ, վասնզի սահմանադրութեան հռչակումէն մինչև ցարդ 5 ամիսներ անցան, սակայն որեւէ փոփոխութիւն տեղի չէ ունեցած պաշտօնէից նկատմամբ»¹⁸: Նշվում էր, որ իշխանության տեղական մարմիններն անփոփոխ շարունակում են հայ գյուղացիությանը վերաբերվել նախկին հոռի ընթացքով:

1908 թ. հոկտեմբերի 30-ին «Ձայն հայրենեացում» հրապարակված Վերակազմյալ հնչակյան կուսակցության նոր ծրագրի առաջարանում շեշտվում էր, որ կուսակցությունը չի գտնում, թե «ընկերվարութիւնը կամ ռամկավարութիւնը ինքնին վնասակար վարդապետութիւններ են»¹⁹:

«Ձայն հայրենեացն» ընկերվարությանը հակադրում էր ազգայնականությունը: «Ի՞նչ է ազգայնականութիւնը» հոդվածում Մարկոս Նաթանյանը գտնում էր, որ հայ ժողովուրդը

¹⁷ «Ձայն հայրենեաց», 1907, թիւ 470:

¹⁸ «Ձայն հայրենեաց», 1909, թիւ 11-12 Բացառիկ:

¹⁹ «Ձայն հայրենեաց», 1908, թիւ 2:

պետք է հեռու մնա աշխարհաքաղաքացիության (կոսմոպոլիտիզմի) գաղափարից ու օտարամոլությունից և պահպանի ազգայինն ու ավանդականը: Միաժամանակ, հեղինակը դրվատում էր ազգերի համերաշխության և եղբայրության գաղափարները՝ գտնելով, որ հայ ժողովուրդը չպետք է կաղապարված մնա իր նեղ ազգային շրջանակի մեջ, որը կխոչընդոտի նրա առաջադիմությունը: Նախանյանն ազգայնականությունը տարբերում էր ազգայնամոլությունից՝ վերջինս որակելով հետադիմական: Ըստ նրա՝ հայը պիտի հեռու մնա և չտարվի «համաշխարհականութեան և լայնամտութեան խաբուսիկ պատրուակովը», որին պետք է հակադրի «ամենաուժեղ պատուարը՝ լուսամիտ ազգայնականութիւնը»²⁰: Սա է, ընդհանուր առմամբ, վերակազմյալների ազգայնականության ընկալումը:

XX դարասկզբին հայ ազգային կյանքում աղմուկ հանած հարցերից էր, այսպես կոչված, «բաց ու գոցի» խնդիրը: Պէտք էր, արդյոք, հայ եկեղեցու բեմը տրամադրել ազգային խնդիրների քննարկմանը թե՞ այն պետք է մնար զուտ կրոնական կառույց: Հարցը քննարկվում էր «Ձայն հայրենեացի» էջերում: «Դարաւոր իրաւունքը եւ անոր դէմ դրժողները» հոդվածում հեղինակը՝ Սեւ Հողերցին գտնում էր, որ եկեղեցին բաց պիտի մնա ժողովրդական հավաքների առջև ու առաջնորդվի «ժողովրդի գերագույն իրաւունքով», որը թելադրում է եկեղեցու դռները բաց պահել ազգային խնդիրների քննարկման առջև²¹:

Պարբերականն իր ընթերցողներին մշտապես տեղեկացնում էր Վերակազմյալ հնչակյան կուսակցության մասնաճյուղերի ծավալած գործունեության մասին, որում զգալի

²⁰ «Ձայն հայրենեաց», 1909, թիւ 9:

²¹ «Ձայն հայրենեաց», 1910, թիւ 27:

տեղ էին զբաղեցնում հրապարակային ժողովները, հանգանակությունները, թատերական ներկայացումները²²:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո երկրի կյանքում կատարված տեղաշարժերը պարբերականի էջերում արտացոլվում էին: Մասնավորապես, զենքի առևտրի ազատականացման մասին էր վկայում այն փաստը, որ «Ձայն հայրենեացի» 1909-1910 թթ. համարներում հանդիպում ենք վերակազմյալների Կ. Պոլսի վարչության՝ «գաւառներու և Պոլսոյ հայ ժողովրդին» զենքի վաճառքի մասին հայտարարություններին: Վաճառվող զենքերի ցանկում էին ամերիկյան «Իվլըր Ջոնսոն», գերմանական «Մաուզեր», բելգիական «Բրաունինգ» սիստեմի ատրճանակները²³:

Պարբերականի 1908 թ. հոկտեմբերի 30-ի վերոհիշյալ համարում տպագրված Վերակազմյալ հնչակյան կուսակցության նոր ծրագրում նշվում էր, որ թուրքական սահմանադրական վարչակարգի ստեղծած պայմաններից էլնելով կուսակցության վարչությունը հայ ժողովրդի առջև հանդես է գալիս նոր ծրագրով: Դրա ա կետում ասվում էր, որ կուսակցությունը ձգտելու է վերանայելու միջոցով կատարելագործել օսմանյան սահմանադրությունը և հավասարեցնել բոլոր ազգերի ու ցեղերի իրավունքները: Ծրագրի բ կետում շեշտվում էր, որ եթե սահմանադրական կառավարությունն օսմանյան պետության գործերը վարի անաչառ ու անկողմնակալ և մեկընդմիջտ վերջ դնի հալածանքներին ու ջարդերին, ապա այդ պարագայում կուսակցությունը, չունենալով անջատողական ոգի, կհրաժարվի միջազգային պայմանագրերով հայերին տրված

²² «Ձայն հայրենեաց», 1909, թիւ 10, 14:

²³ «Ձայն հայրենեաց», 1909, թիւ 10, 15:

իրավունքներից: Կուսակցությունն ընդունում էր, որ «Թուրքահայաստանը» օսմանյան պետության անբաժանելի մասն է, բայց միաժամանակ ընդգծում, որ ձգտելու է հայկական գավառները տեղական ինքնավարությամբ օժտելուն:

Ծրագրի մյուս կետերում առաջ էին քաշված օսմանյան պետության բոլոր ժողովուրդների ազգային հաստատությունների անձեռնամխելիության, զավթված հողերը նախկին տերերին վերադարձնելու, տեղաշարժի ազատության և այլ հարցեր²⁴:

«Ձայն հայրենեացի» էջերում լուսաբանվում էր օսմանյան նորաստեղծ խորհրդարանի գործունեությունը: «Օսմանեան խորհրդարանի ընտրութեանց արդիւնքը» խմբագրականում Լ. Լարենցն ընդգծում էր, որ խորհրդարանի պատգամավորների ընտրության սահմանված կարգը ոչ թուրք ժողովուրդներին հնարավորություն չի տալիս գավառներից պատգամավոր ընտրել իրենց քանակի համեմատ: Լարենցը դրա մեջ մեծ վտանգ էր տեսնում՝ գտնելով, որ այս դեպքում համաթուրքական ձգտումներ ունեցող երեսփոխաններից բաղկացած խորհրդարանական մեծամասնությունը կարող է հեշտությամբ ի չիք դարձնել կայսրության ազգային փոքրամասնությունների և, հատկապես, հայերի դեմոկրատական, ազատական ձգտումները: Դրա հետևանքով, ըստ հողվածագրի՝ բռնության մի տեսակը կփոխարինվի մյուսով, «հին օրերու (համիդյան շրջանի-Գ.Հ.) կամայական անարդարութիւններուն տեղ կհաստատվի սահմանադրական բռնակալութիւն»²⁵:

Լարենցը գտնում էր, որ հայերը, ստանալով սահմանադրության ընձեռած որոշակի ազատություններ

²⁴ «Ձայն հայրենեաց», 1908, թիւ 2:

²⁵ «Ձայն հայրենեաց», 1908, թիւ 3:

(կոտորածների դադարում, երթևեկության ու առևտրի ազատություն և այլն), ընկել են ոգևորության մեջ և դեռ չեն ըմբռնել, թե ինչպիսի՞ն է լինելու «վաղուան Սահմանադրական Թիւրքիան»: Հրապարակախոսը նշում էր, որ հայերը պետք է սթափվեն և լրջորեն վերաբերվեն այս հարցին, քանզի օսմանյան խորհրդարանի ընտրությունների «ձախորդ» արդյունքները մեծ վտանգ են պարունակում, այնպիսի վտանգ, որը կարող է «մեր ցեղը հասցնել անդունդի մը եզրը, ուրկե գահավեժ անկումը անխուսափելի ու վերջնական է»²⁶:

Որպես վերոհիշյալի ապացույց, պարբերականի էջերում լուսաբանվում էր խորհրդարանի այն նիստը, որը քննարկել էր հայկական գավառներ ուղարկվելիք «Քննիչ հանձնաժողովի» հարցը: Հանձնաժողովի անդամները թուրքեր էին (մեկ հայ կար՝ փաստաբան Հովհ. Շահնագարը): Խորհրդարանի թուրք պատգամավորները դեմ էին արտահայտվել, իսկ հայ պատգամավորներ Վարդգեսը (Սերենկյուլյան) ու Մուրատը (Համբարձում Պոյաճյան)՝ կողմ:

Ըստ պարբերականի՝ հույն պատգամավորները պահանջել էին, որ հարստահարությունները հետաքննող հանձնաժողով ուղարկվի նաև Բումելի (Օսմանյան կայսրության եվրոպական մաս - Գ.Հ.), որտեղ հույները մեծ թիվ էին կազմում: Թալեաթի առաջարկությամբ որոշվում է կառավարությունից թույլատրություն ուզել քննիչ հանձնաժողովի համար, իսկ մինչ այդ՝ քննիչ մարմնի մեկնումը հետաձգել: Հոդվածագրի եզրակացությունն այն է, որ իշխանությունները ձգտում են հարցը ձգձգելով, ի վերջո, չիրականացնել:

²⁶ «Չայն հայրենեաց», 1909, թիւ 15:

Շարունակելով այս թեման՝ պարբերականն ուշագրավ էր համարում այն հանգամանքը, որ իր ազգայնամոլությամբ հայտնի դարձած խորհրդարանի թուրք պատգամավոր Հյուսեին Ճահիտ բեյը, խոսելով հայկական գավառներ քննիչ հանձնաժողով ուղարկելու հարցի մասին, գրել է, որ օսմանյան խորհրդարանը մերժեց Քուրդիստան և Հայաստան քննիչ հանձնաժողով ուղարկելու առաջարկը: Այս կապակցությամբ, «Չայն հայրենեացի» խմբագրության տված ծանոթության մեջ շեշտվում էր այն հանգամանքը, որ վերոհիշյալ թուրք պատգամավորի կողմից «Էրմենիսթան» բառի գործածումն «ուշագրաւ անակնկալ մըն է»²⁷:

Պարբերականի էջերում լուսաբանվում էր նաև խորհրդարանի հայ պատգամավորների գործունեությունը, մատնացույց արվում Գր. Զոհրապի, Վարդգեսի և այլոց համարձակ ելույթները: Դրա հետ մեկտեղ պարբերականի էջերում նաև հայ պատգամավորներն էին քննադատվում: Օրինակ, «Արիւնտոս հայը» խմբագրականում Չապել Եսայանը ձաղկում էր այն հայ պատգամավորներին, որոնք ընդունել էին հրավերը և ներկա գտնվել սուլթանի պալատում (Յլդրզ) կազմակերպված ճաշկերույթին: Նա նշում էր Ռոդոսթոյից ընտրված Հակոբ Պապիկյանի, Իզմիրից՝ Սպարտալի, Սեբաստիայից՝ Տաղավարյանի (Նազարեթ Չատրճյան) անունները²⁸:

Կիլիկիո ջարդերի կապակցությամբ օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորների մեծ մասի զգուշավոր դիրքորոշումը Լարենցը համարում էր «վատաբարո ընթացք»: Ըստ նրա, խորհրդարանի «տասնեակ հայ երեսփոխաններէն հազիւ 4-ը

²⁷ «Չայն հայրենեաց», 1909, թիւ 17:

²⁸ «Չայն հայրենեաց», 1908, թիւ 8, 1909, թիւ 10:

համաձայն են... Ահմէտ Բիգայի սեղանին վրայ հանել դարուս մեծագոյն Ոճիքը և արդարութեան լիակատար գործադրութիւնը երեսփոխանական ժողովէն պահանջել... մնացեալները խոհեմութեան քարոզ կը կարդան ... պահպանելու համար օսմանէան զանազան տարրերու համերաշխութիւնը»²⁹:

Հայ պատգամավորների գործունեության մասին հաղորդում կա պարբերականի 1909 թ. հունվարի բացառիկ համարում: Այստեղ նշվում էր, որ ի պատասխան ներքին գործերի նախարար Հիլմի փաշայի խորհրդարանում արած հայտարարության առ այն, թե Ադանայի ու Էրզրումի գավառներում սովի մասին լուրերը չափազանցված են, Չոհրապն ու Հալաճյանն անհերքելի փաստերով ցույց էին տալիս հացի աննախադեպ թանկացումը և, դրա պատճառով, այդ գավառներում սովի առկայությունը: Նրանք կառավարությունից պահանջում էին անհապաղ օգնություն հասցնել սովյալներին³⁰:

«Ձայն հայրենեացում» ցույց էր տրվում նաև գավառի հայության շրջանում գոյություն ունեցող հետամնաց սովորություններն ու կանանց ստորադաս վիճակը, որոնք խոչընդոտում էին ժողովրդի հասարակական առաջընթացին³¹:

Պարբերականի էջերում քննադատության էին ենթարկվում պոլսահայության հոռի բարքերը: Թղթակից Լևոն Էսաճանեանն, անդրադառնալով հայ հոգևորականության թերի կողմերին, այն աստիճան է վրդովվում, որ Երուսաղեմն անվանում է «այր աւազակաց»³²:

²⁹ «Ձայն հայրենեաց», 1910, թիւ 12:

³⁰ «Ձայն հայրենեաց», 1909, թիւ 11-12:

³¹ «Ձայն հայրենեաց», 1910, թիւ 19:

³² «Ձայն հայրենեաց», 1910, թիւ 12:

Պարբերականի «Մեւ Հողերցի» ծածկանունով հեղինակը «Ցաւեր ունինք, դարմանողներ չունինք» հոդվածում քննարկման առարկա էր դարձրել արևմտահայ ազգային-կենտրոնական մարմինների անարդյունավետ գործունեության հարցը: Հոդվածագիրը դրա պատճառը համարում էր այն, որ այդ մարմիններում գավառահայությունից ընտրվում են այնպիսի անձինք, ովքեր իրականում «մեկ մտածում մը ունին՝ իրենց անձնական փառքն ու հանգիստը»³³: Նա գտնում էր, որ Հայոց ազգային երեսփոխանական ժողովն իր վարչություններով հանդերձ, դեռևս հեռու է ազգին ծառայելուց: Հոդվածագրի եզրակացությունն այն էր, որ հայ ժողովուրդը պետք է «հեռանայ աղայամուրթենէ» և ազգային մարմիններում ընտրի ոչ թե շահամուլ ու անարժան, այլ ազգային շահերը պաշտպանող անձանց³⁴:

Մեկ այլ հոդվածում («Նկարագրի ինկածութիւնը մեր մէջ») Մեւ Հողերցին հայ ժողովրդի «շատ մը ազնիւ յատկութիւնների թուլացման և այլասերումին» պատճառը համարում էր պետականության երկար ժամանակով կորուստը և հայ ժողովրդի՝ օտարներին հպատակությունը³⁵:

Պարբերականն արծարծում էր գավառահայության արտագաղթի ցավոտ թեման և ընդգծում դրա պատճառները: «Հայկական արտագաղթը» խմբագրականում նշվում էր, որ հակառակ օսմանյան սահմանադրության և թուրքական իշխանությունների տված խոստումներին, հայն արտագաղթում է: «Անիկա կը գաղթէ, որովհետեւ հաց չունի, գործ չունի իր

³³ «Չայն հայրենեաց», 1910, թիւ 12:

³⁴ «Չայն հայրենեաց», 1910, թիւ 33:

³⁵ «Չայն հայրենեաց», 1910, թիւ 25-26:

գաւառին մէջ: ... Անիկա կը գաղթէ, որովհետեւ ասով կ'ազատի, կը փախչի զինուորագրութենէ»³⁶:

«Չայն հայրենեացի» 1909-1910 թթ. հրապարակումներում առանձնահատուկ տեղ էր գրավում հայկական բարենորոգումների թեման: «Մասնավոր թե՛ ընդհանուր բարենորոգում թուրքիոյ մէջ» հոդվածում Մարկոս Նաթանյանը գրում էր, որ թուրքիայում ընդհանուր բարենորոգումներ անցկացնելու ժամանակը վաղուց հասունացել է: Նա շեշտում էր, որ հայկական նահանգներում անհետաձգելի առաջնահերթություն են դարձել մասնավոր բարենորոգումները, քանզի համիդյան շրջանում հայերը բոլորից շատ են տուժել³⁷:

«Բարենորոգում» ասելով հեղինակը հասկանում էր այն, որ «մեկընդմիշտ վերջ դրվեն հայերի կյանքի, գույքի և պատվի դեմ գործադրվող հարձակումները և նրանց կրած նյութական վնասները հատուցվեն»³⁸: Հոդվածագրի կարծիքով, եթե այդ հրատապ խնդիրը չլուծվի, ապա արևմտահայությունը չի կարող ապրել և կոչնչանա սովի ու վայրագ հարստահարիչների բռնություններից:

«Չայն հայրենեացի» որդեգրած հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանման գաղափարական ուղղությունը և ազգի սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանության հարցում բռնած վճռական կեցվածքը չէին կարող չհարուցել թուրքական իշխանությունների հակազդեցությունը: Դրա հետևանքը եղան Վերակազմյալ հնչակյան գործիչների և կուսակցության պարբերականների նկատմամբ կիրառված

³⁶ «Չայն հայրենեաց», 1910, թիւ 27:

³⁷ «Չայն հայրենեաց», 1909, թիւ 15:

³⁸ «Չայն հայրենեաց», 1909, թիւ 15:

հալածանքները: 1910 թ., ընդամենը մի քանի համար լույս տեսնելուց հետո, թուրքական իշխանությունների պահանջով, դադարեցվեց Վերակազմյալ հնչակյան ուղղության «Առաւօտ» թերթի հրատարակությունը: Այդ թվականի վերջին նույնը կատարվեց նաև «Չայն հայրենեաց» պարբերականի հետ:

Եզրակացություններ

Հայ ազգային կուսակցությունների գլխավոր նպատակը թուրքական տիրապետությունից արևմտահայության ազատագրությունն էր: Նրանց տպագիր օրգանների առաջնահերթ խնդիրը ազատագրական շարժման քարոզչությունն էր: Այդ նպատակին էր ուղղված նաև Վերակազմյալ հնչակյան կուսակցության օրգան «Չայն հայրենեացի» գործունեությունը 1899-1910 թթ.:

Պարբերականի բազմաբնույթ հրապարակումներում առաջնային տեղ էին գրավում թուրքական իշխանությունների որդեգրած հակահայկական քաղաքականության, Արևմտյան Հայաստանում իրականացվելիք բարենորոգումների, ազատագրական պայքարի մարտավարության շուրջ հայ ազգային կուսակցությունների միջև ծավալված բանավեճի, ռուսական իշխանությունների վարած հակահայ քաղաքականության թեմաները:

Թերթի համարձակ հրապարակումներն առաջացրին թուրքական իշխանությունների գայրույթը, որոնց պահանջով նրա հրատարակությունը դադարեցվեց:

«Չայն հայրենեացի» գործունեությունը նկատելի հետք է թողել հայ հրապարակախոսության և ազատագրական շարժման գաղափարախոսության մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ձայն հայրենեաց, Բնասոն, 1901, թիւ 76, 99, 103: 1902 թիւ 116, 118, 119: 1903 թիւ 200, 229, 243: 1904 թիւ 302, 308, 318, 319: 1905, թիւ 357: 1906, թիւ 387, թիւ 402: 1907, թիւ 460, 470: Կ.Պոլիս, 1908 թիւ 1, 2, 3, 8: 1909, թիւ 9, 10, 11-12, 14, 15, 17: 1910, թիւ 12, 19, 25-26, 27, 33:

Гегам А. Оганнисян, *Институт истории НАН РА, к.и.н., доцент*, Обсуждение армянских национально-политических проблем в периодическом издании «Дзайн айрениц».

Резюме

В конце XIX – начале XX вв. на подъёме национально-освободительного движения армянского народа пропаганда освободительной идеологии велась на страницах печатных органов армянских национальных партий. Среди них свое достойное место занимала газета «Дзайн айрениц» (Голос отечества), которая являлась печатным органом партии Вераказмял гнчакистов. Газета выходила в 1899-1908 гг. в Бостоне, а в 1908-1910 гг. – в Константинополе. Редактором был известный деятель этой партии Л. Ларенц.

В публикациях особое место занимали статьи, касающиеся социально-экономического положения западных армян и вопросов национально-освободительного движения. Значительное место также отводилось освещению деятельности партии Вераказмял гнчакистов.

После младотурецкого переворота в 1908 г. в газете была опубликована новая программа партии. «Дзайн айрениац» подвергала острой критике национальную и аграрную политику младотурецкого правительства. В 1910 году это стало поводом запрета ее издания. «Дзайн айрениац» оставила значительный след в истории публицистики и армянской общественно-политической мысли.

Ключевые слова: Гарегин Читчян, «Дзайн айрениац», западные армяне, Левон Ларенц, национальные проблемы, османский парламент, освободительное движение, реформы.

Gegham H. Hovhannisyan, *Institute of History of the NAS RA, PhD in History, Associate Professor, The discussion of Armenian national and political issues in the newspaper “Dzayn Hayreniats”.*

Summary

At the end of the 19th – the beginning of the 20th cc., during the rise of the national liberation movement of the Armenian people, the propaganda of the liberation ideology was carried out by the printed organs of the national parties. Newspaper “Dzayn Hayreniats” (“The Voice of the Homeland”) which was the organ of the Reorganized Hunchakian party had its rightful place among them. It was published in Boston from 1899 to 1908 and in Constantinople from 1908 to 1910. The editor of the newspaper first was Garegin Chitchyan, then Levon Larents.

The topics of the articles published in “Dzayn Hayreniats” were varied. Turkish-Kurdish violence in Western Armenia, issues of the

national liberation movement, coverage of the ideology and activities of the Reorganized Hunchakian party, as well as international political events were given a large place. After the Young Turk revolution of 1908, the newspaper discussed the new tactics of the party, the principles proclaimed by the Young Turk constitution and their application in the Armenian provinces.

In 1909, the newspaper's sharp criticism of the Turkish authorities in connection with the massacres of the Armenian people of Cilicia led to the banning of the newspaper. "Dzayn Hayreniats" left a significant trace in the history of Armenian public political thought and publishing.

Key words: Dzayn Hayreniats, Levon Larents, liberation movements, Western Armenians, reforms, Garegin Chitchyan, national issues, Ottoman Parliament.

ԱՐՄԵՆ Ռ. ԲԱԴԱԼՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ.

armbad@mail.ru

**ՀԿ(Ր)Կ ՂԵԿԱՎԱՐ ԴԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 1920-ԱԿԱՆ ԹԹ.
ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ***

Բանայի բառեր՝ դատական մարմիններ, ԺԿԽ, Խորհրդային Հայաստան, խորհուրդների համագումար, կառավարման ամբողջատիրական սկզբունք, ԿԳԿ, կոմկուսի համագումար, ՀԿ(Ր)Կ Կենտկոմ, տեղական իշխանություն:

Ներածություն

Ռուսաստանում խորհրդային իշխանության հաստատման հենց սկզբից բոլշևիկյան կուսակցությունը սկսեց ամրապնդել իր ղեկավար դերը երկրի կյանքի բոլոր ոլորտներում՝ որդեգրելով կառավարման ամբողջատիրական սկզբունքը: Այն դարձավ խորհրդային երկրի ղեկավարման և կառավարման իրական բարձրագույն մարմինը: Բնականաբար, Խորհրդային Հայաստանում այդ դերը ստանձնեց ՀԿ(Ր)Կ-ն:

Այդուհանդերձ, չնայած հետխորհրդային շրջանում առանձին աշխատությունների երևան գալուն¹, 1920-ական թթ. առաջին կեսին Խորհրդային Հայաստանի կառավարման համակարգում ՀԿ(Ր)Կ ղեկավար դերն ու գործունեությունը

* Ներկայացվել է 30.IX.2022 թ., գրախոսվել է 21.X.2022 թ., ընդունվել է տպագրության 15.XII.2022 թ.:

¹ Տե՛ս Ղազախեցյան 2006: Հակոբյան 2016: Մանուկյան 2002: Ժամհարյան 2019:

դեռևս նորովի, բազմակողմանի ու լիարժեք չի ուսումնասիրվել: Մինչդեռ, առանց կոմկուսի կառավարման սկզբունքի և կադրային քաղաքականության ձևավորման՝ պատմության ուսումնասիրության Խորհրդային Հայաստանի քաղաքական պատմության ներկայացումը կլինի թերի և ոչ լիարժեք:

ՀԿ(բ)Կ ղեկավար դերը գործադիր, օրենսդիր, դատական և տեղական իշխանության մարմինների ղեկավարման գործում

Խորհրդային Հայաստանում, 1920 թ. դեկտեմբերի 2-ի իշխանափոխությունից հետո, իր գործունեությունը վերականգնող ՀԿ(բ)Կ-ն կարճ ժամանակ անց սկսեց իշխանության ճյուղերը, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներն իրեն ենթարկելու քաղաքականություն վարել: Ի դեպ, սրա առաջին քայլն արդեն կատարվել էր, քանզի Խորհրդային Հայաստանի տվյալ պահի բարձրագույն իշխանությունը՝ Ռեզոլուցիոն կոմիտեն (ՌՀԿ), որը Խորհրդային Ադրբեջանից Հայաստան էր մտել նոյեմբերի 29-ին և Երևան հասել դեկտեմբերի 4-ին, կազմավորվել էր այնտեղ՝ ՀԿ(բ)Կ արտասահմանյան բյուրոյի կողմից:

Անցումային այդ ժամանակահատվածում իշխանության նախկին մարմինները լուծարվել էին, իսկ նորերը (հեղկոմներ, գավգործկոմներ և այլն) դեռևս չէին ստեղծվել: Իշխանության այդ նոր մարմինների ձևավորման աշխատանքներն իրականացնելու էր ՀԿ(բ)Կ-ը, որի Կենտկոմը, 1920 թ. մայիսյան զինված ապստամբության պարտությունից հետո գտնվում էր Ադրբեջանում և այնտեղից էր ղեկավարում կուսակցության ընդհատակյա գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում: Միայն Հայաստանի խորհրդայնացումից հետո ՀԿ(բ)Կ

ղեկավար գործիչները վերադարձան Խորհրդային Հայաստան և սկսվեց կուսակցության լեգալ գործունեությունը: Նշենք նաև, որ ՀԿ(բ)Կ-ն ինքնուրույն և անկախ կուսակցություն չէր, այլ ՌԿ(բ)Կ բաղկացուցիչ մաս: Այն ուներ մարզային կառույցի կարգավիճակ և, չունենալով սեփական ծրագիր ու կանոնադրություն, կրկնում էր ՌԿ(բ)Կ քաղաքականությունը Խորհրդային Հայաստանում:

ՀԿ(բ)Կ-ին միանգամից չհաջողվեց ձևավորել իշխանության բոլոր մարմինները, քանզի Հայհեղկոմի սխալ քաղաքականության պատճառով երկրում սկսվեց քաղաքացիական պատերազմ, որի ավարտից հետո ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը սկսեց իշխանությունների ձևավորման լիարժեք գործընթացը:

Այս ուղղությամբ առաջին քայլերից էր Հայռազմհեղկոմի վերակառուցումը ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի (ժողկոմխորհ կամ ԺԿԽ), որի կազմը ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության նիստում (արձանագրություն թիվ 2) քննարկվեց 1921 թ. մայիսի 18-ին: Լսելով ՀՍԽՀ կառավարության կազմավորման հարցը, նախնական որոշում կայացվեց ժողկոմների թեկնածուների ընտրության հարցում: Եվս մեկ օր քննարկելով հարցը, մայիսի 19-ին, ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը, լսելով Ս. Լուկաշինի զեկույցը, հաստատեց կառավարության վերջնական կազմը: ԺԿԽ նախագահ նշանակվեց Ա. Մյասնիկյանը, ներքգործժողկոմ՝ Պ. Մակինցյանը, արտգործժողկոմ՝ Ա. Մռավյանը, առևտրի և պարենժողկոմ՝ Ա. Բեկզադյանը, սոցապ և աշխատանքի ժողկոմ՝ Ա. Խաչիքը, արդարադատության ժողկոմ՝ Ա. Կարինյանը, հողժողկոմ՝ Ա. Երզնկյանը, առողջապահության ժողկոմ՝ Ս. Համբարձումյանը,

լուսժողկոմ՝ Ա. Հովհաննիսյանը, ֆինժողկոմ՝ Ս. Խանոյանը, փոստհեռագրի ժողկոմ՝ Դ. Տեր-Սիմոնյանը, ժողոտսխորհի նախագահ՝ Ս. Լուկաշինը, բանգյուղտեսչության ժողկոմ՝ Ա. Շավերդովը (Շահվերդյան): Կառավարության նախնական (մայիսի 18) և վերջնական (մայիսի 19) կազմերի միջև կային ոչ էական տարբերություններ: Կառավարության գործունեությունն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով նույն որոշմամբ ձևավորվեց կառավարության նախագահություն, որի անդամներն էին Ա. Մյասնիկյանը, Պ. Մակինցյանը, Ա. Բեկզադյանը, Ս. Լուկաշինը և Ա. Կարինյանը: Նրանք նաև ՀԿ(Բ)Կ ղեկավար գործիչներ էին²:

Այսպիսով, կառավարության կազմը կուսակցության վերադաս կառույցում հաստատելուց հետո, 1921 թ. մայիսի 21-ին ՌՀԿ-ն համապատասխան դեկրետով վերաձևավորեց և «հաստատեց» կառավարության կազմը³: Բնականաբար, այդ դեկրետով հրապարակված կառավարության կազմն ամբողջովին նույնական էր Կենտկոմի նախագահության հաստատածին:

ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահությունը ոչ միայն հաստատեց կառավարության կազմը, այլև՝ նրա նիստերի օրը: Այսպես, Կենտկոմի նախագահության 1921 թ. մայիսի 23-ի որոշմամբ, վերջինիս նիստերը կայանալու էին երկուշաբթի ժամը 18.00-ին, քարտուղարության նիստերը՝ երկուշաբթի ու հինգշաբթի ժամը 14.00-ին, ԺԿԽ նախագահության նիստերը՝ չորեքշաբթի և ուրբաթ ժամը 19.00-ին և ԺԿԽ-ի նիստերը՝ չորեքշաբթի (կոնկրետ ժամը նշված չէր)⁴: Ինչպես տեսնում ենք,

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 5, 8:

³ Տե՛ս Ղազախեցյան 2006, 227:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 9:

կարևորություն ներկայացնող բոլոր հարցերը նախապես քննարկվելու էին երկուշաբթի՝ Կենտկոմի նախագահության կամ քարտուղարության նիստերում (անհրաժեշտության դեպքում երեքշաբթի՝ ԺԿԽ նախագահության նիստերում) և նոր միայն չորեքշաբթի՝ կառավարության նիստում, երբ քննարկվելիք խնդիրներն արդեն լուծված էին լինելու:

Եթե սկզբնական շրջանում ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահությունը հաստատում էր գործադիր իշխանության առաջին դեմքերին, ապա, շատ կարճ ժամանակ անց, երկրորդ դեմքերի հաստատման հարցը նույնպես վերապահվեց նախագահությանը: Այսպես, օրինակ, ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության 1921 թ. հունիսի 20-ի որոշմամբ հաստատվեցին արտգործժողկոմի, պարենժողկոմի տեղակալները և նույն կարգավիճակի այլ պաշտոնյաներ⁵:

Այսպիսով, 1921 թ. ամռանը, ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը, իսկ անհրաժեշտության դեպքում նաև՝ քարտուղարությունը, արդեն հաստատում էին կառավարության ղեկավար առաջին և երկրորդ դեմքերին:

Օրեցօր ամրապնդելով իր դիրքերը, ՀԿ(բ)Կ-ն անցավ կառավարությանը կից մարմինների ստեղծման և դրանց կանոնադրությունները հաստատելու գործընթացին: Մասնավորապես, ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը, 1921 թ. հուլիսի 11-ի որոշմամբ, ոչ միայն ստեղծեց ԺԿԽ-ին կից «Փախստականների գործերի գլխավոր վարչությունը», այլև ներքգործժողկոմատին ու հողժողկոմատին հանձնարարեց կազմել նշյալ վարչության կանոնադրությունը: Նույն արձանագրության 3-րդ կետով որոշվեց Պարսկաստանից ու

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 17 և հակ.:

Հյուսիսային Կովկասից ընդունել փախստականների:⁶ Այսպիսով, ՀԿ(Բ)Կ ղեկավարությունը, ոչ միայն կառավարության կառուցվածքակադրային հարցերն էր լուծում, այլև, շրջանցելով նրա ղեկավարությանը, հանձնարարականներ տալիս ժողկոմներին: Իսկ մի քանի տարի անց, երբ էլ ավելի ամրապնդվեց ՀԿ(Բ)Կ ղեկավար դերը, Կենտկոմը փոփոխություններ էր կատարում արդեն ժողկոմատի կազմում: Այսպես, օրինակ. ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահության 1925 թ. սեպտեմբերի 8-ի որոշմամբ Ջրային տնտեսությունը դուրս բերվեց հողժողկոմատի կազմից և, որպես ինքնուրույն հիմնարկ-կազմակերպություն, կցվեց տնտեսական խորհրդին, իսկ վարչության նախագահը, վճռական ձայնի իրավունքով, ընդգրկվեց խորհրդի ղեկավար կազմում:⁷

Կառավարության գործունեության նկատմամբ ՀԿ(Բ)Կ հսկողությունն այնքան էր ուժեղացել, որ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահության 1921 թ. հուլիսի 16-ի որոշմամբ ԺԿԽ նախագահության նիստերին բացակայող անդամներին (Պ. Մակինցյան և Ա. Բեկզադյան) ուրիշներով (համապատասխանաբար՝ Ավիսով և Ա. Մռավյանով) փոխարինելու հարցն իր որոշմամբ լուծեց⁸: Անգամ այդ հարցը ԺԿԽ նախագահը չէր կարող իր որոշմամբ լուծել և անհրաժեշտ էր կուսակցական ղեկավարության հատուկ որոշում:

Կուսակցական որոշ գործիչների՝ գործադիր իշխանության նկատմամբ վերադաս լինելու գիտակցումն այնքան էր ամրապնդվել, որ նրանք, անգամ առանց կուսակցական

⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 23-26:

⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 31 և հակ.:

⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 27-28:

կառույցների քննարկման, միանձնյա որոշումներ էին կայացնում գործադիր իշխանության տարբեր կառույցների կառուցվածքային փոփոխությունների վերաբերյալ: Ասվածի լավագույն օրինակն է ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության 1921 թ. հուլիսի 19-ի նիստը, որի ժամանակ քննարկվեց պարենի և առևտրի ժողկոմ Ա. Բեկզադյանի արարքը: Վերջինս, առանց ՀԿ(բ)Կ Կենտկոմի գիտության, վերացրել էր Պարսկաստանում ՀՍԽՀ արտաքին առևտրի ներկայացուցչությունը և ՀՍԽՀ ներկայացուցչին նշանակել ՌՄԴԽՀ միացյալ արտաքին առևտրի մարմնի կազմում: ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը, կանգնած լինելով կատարված փաստի առջև, ստիպված ընդունեց այդ նշանակումը, իհարկե, Ա. Մռավյանին հանձնարարելով այդ հարցի կապակցությամբ պարզաբանումներ պահանջել Ա. Բեկզադյանից⁹: Ինչպես տեսնում ենք, ՀԿ(բ)Կ Կենտկոմին առավելապես հետաքրքրում էր հարցի այն կողմը, որ նշյալ գործողությունը կատարվել է առանց Կենտկոմի գիտության, և ոչ թե այն հանգամանքը, որ կատարվածի արդյունքում ՀՍԽՀ-ն զրկվել էր իր ինքնիշխանության մի գործիքից: Հարցի կապակցությամբ ավելացնենք, որ Ա. Բեկզադյանը չպատժվեց, իսկ Կենտկոմի նախագահությունը նույն որոշմամբ դիմեց Պարսկաստանում գործող առևտրի միացյալ մարմնի ներկայացուցչությանը՝ առաջարկելով տվյալ երկրում հետայսու առևտուր անելիս առաջնորդվել ՀՍԽՀ առևտրատնտեսական շահերով:

Մի քանի ամսվա ընթացքում ՀԿ(բ)Կ Կենտկոմն այնքան էր ամրապնդել իր դեկլարումը ԺԿԽ-ի նկատմամբ, որ 1921 թ.

⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 30-33:

օգոստոսի 2-ին ժողկոմներին արգելեց առանց Կենտկոմի գիտության և թույլտվության այցելել գավառներ¹⁰:

Կուսակցության և գործադիր իշխանության գործառույթներն այնպես էին միաձուլվել, որ ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը 1921 թ. օգոստոսի 7-ի որոշմամբ Դ. Տեր-Սիմոնյանին Ջանգեզուր գործուղեց որպես Կենտկոմի և ԺԿԽ-ի միացյալ ներկայացուցիչ¹¹:

Գործադիր իշխանությունն իր հսկողության տակ վերցնելուց հետո ՀԿ(բ)Կ-ն անցավ օրենսդիր իշխանությունը ձևավորելու և այն նույնպես իր վերահսկողության տակ վերցնելու քաղաքականությանը:

Չնայած արդեն մի քանի ամիս էր, ինչ երկրում ձևավորվել էր գործադիր իշխանության բարձրագույն մարմինը՝ ԺԿԽ-ը, ՀՄԽՀ գավառներում դեռևս շարունակում էին գործել հեղկոմները, որոնց միջոցով ժողկոմխորհը կառավարում էր երկիրը:

Իշխանությունը հեղկոմներից խորհուրդներին փոխանցելու գործընթացը, բնականաբար, պետք է տեղի ունենար կոմկուսի խիստ վերահսկողության ներքո: Նշյալ գործընթացի առաջին քայլը ՀԿ(բ)Կ ղեկավարությունը կատարեց 1921 թ. հունիսի 20-ին, երբ Կենտկոմի նախագահությունը հանձնարարեց ներքգործժողկոմատին, որի ենթակայության ներքո էին տեղական իշխանության մարմինները, մինչև հուլիսի 5-ը ներկայացնել գյուղխորհուրդների ընտրության ծրագիրը¹²: Հասկանալի է, որ վերջինս ոչ թե քաղաքական բնույթ ունեցող նախընտրական մրցակցային ծրագիր էր, այլ ընդամենը՝ աշխատան-

¹⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 50-53:

¹¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 54-56:

¹² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 17 և հակ.:

քային ժամանակացույց, թե հեղկոմներից գյուղխորհուրդների անցման որ քայլը որից հետո է կատարվելու: Չպետք է մոռանալ, որ այլ կուսակցությունների գործունեությունը ՀՍԽՂ տարածքում արգելված էր, և ընտրությունները ոչ թե ընտրողների ձայները ստանալու նպատակով բազմակուսակցական պայքար, այլ՝ նախապես որոշված և հաստատված թեկնածուների կողմից պատգամավորական մանդատ ստանալու գործընթաց էին: Նշենք միայն, որ տեղական իշխանության մարմիններ գավիհեղկոմների ղեկավարությունը նույնպես պաշտոնների էր նշանակվում կամ պաշտոնազրկվում ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության կամ էլ քարտուղարության որոշմամբ: Այսպես, 1921 թ. մայիսի 23-ին, Հկ(բ)Կ Կենտկոմի նախագահության որոշմամբ, Ալեքսանդրապոլի հեղկոմի նախագահ նշանակվեց Մանուցյանը, հեղկոմի անդամներ՝ Ամատունին, Աբրամյանը, Կուրդինյանը և Ա. Հանեսոլյանը, Լոռու գավիհեղկոմի նախագահ Պ. Սաֆրազբեկովը փոխարինվեց Բ. Սահակյանով, Դարալագյազի արտակարգ կոմիսար նշանակվեց Դ. Տեր-Սիմոնյանը¹³: Հեղկոմներից խորհուրդներին անցնելու հաջորդ ազդեցիկ քայլը կատարվեց 1921 թ. հոկտեմբերի 4-ին, երբ ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը ՆԳՏԿ-ին հանձնարարեց կազմել երկրի խորհրդայնացման գործընթացի ծրագիրը, որը պիտի հաշվի առներ նախկինում կատարված աշխատանքները¹⁴:

Խորհուրդների ընտրությունները և դրանց համագումարները տեղի ունեցան 1921 թ. դեկտեմբեր – 1922 թ. հունվարին: Ընտրվեցին երկու քաղաքային (Երևան և Ալեքսանդրապոլ) ու մոտ 800 գյուղական խորհուրդներ: Ձևա-

¹³ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 9 և հակ.:

¹⁴ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 1, ց.1, գ. 40, թ. 95-96:

վորվեցին տեղական իշխանության գործադիր մարմինները: Չնայած հեղկոմները խորհուրդների վերակազմավորելուն, դրանց նկատմամբ ՀԿ(բ)Կ ղեկավար լինելու սկզբունքը չփոխվեց: Վերջինիս ապացույցն է ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության 1922 թ. ապրիլի 14-ի որոշումը, որով Մեղրիի գավգործկոմի նախագահ նշանակվեց Տ. Աստվածատրյանը¹⁵:

Ավարտելով խորհուրդների ձևավորման գործընթացը, ՀԿ(բ)Կ-ն նախաձեռնեց խորհուրդների հանրապետական համագումարի՝ ՀՄԽՀ դե յուրե բարձրագույն իշխանության կազմավորման աշխատանքները: ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը 1921 թ. դեկտեմբերի 13-ին, խորհուրդների կայանալիք համագումարից առաջ, որոշեց հրավիրել կուսակցական խորհրդակցություն, որի ժամանակ քննարկվելու էին համագումարի օրակարգը և դրանից բխող մյուս հարցերը¹⁶: Մի քանի օր անց՝ դեկտեմբերի 16-ին, համագումարի անցկացման նախապատրաստական աշխատանքները լուծելու նպատակով, Կենտկոմի նախագահությունը, Սաֆրազբեկովի գլխավորությամբ, ստեղծեց հանձնաժողով¹⁷:

1921 թ. դեկտեմբերի 31-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը որոշեց հաջորդ տարվա հունվարի 25-ին հրավիրել ՀԿ(բ)Կ համագումար, որից հետո, միայն երեք օր անց, խորհուրդների համագումար: Ինչպես տեսնում ենք, կուսակցական համագումարը նախորդելու էր պատգամավորների խորհրդի համագումարին, ինչը նշանակում էր, որ բոլոր կարևոր հարցերը նախապես լուծվելու էին կուսակցության համա-

¹⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 5, թ. 12:

¹⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. ց. 1, գ. 40, թ. 106-107:

¹⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. ց. 1, գ. 40, թ. 108:

գումարում, իսկ խորհուրդների համագումարը միայն «ընդունելու և հաստատելու» էր արդեն լուծված հարցերը: Ավելին, նույն որոշման 2-րդ կետով Գ. Սաֆրազբեկովի գլխավորած հանձնաժողովը Կենտկոմի հաստատման էր ներկայացնելու խորհուրդների համագումարի անցկացման շենքի (դահլիճ, միջանցքներ և այլն) գեղարվեստական ձևավորման հարցը, այսինքն, թե որ պատին քաղաքական ինչ պաստառ պետք է փակցնել:

Խորհուրդների համագումարի բացումից մի քանի օր առաջ՝ 1922 թ. հունվարի 16-ին, ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը հաստատեց օրակարգը. այն է՝ 1) ԺԿԽ-ի հաշվետվություն (Ա. Մյասնիկյան), 2) հողային քաղաքականություն և գյուղատնտեսության հերթական խնդիրներ (Ա. Երզնկյան), 3) Կարմիր բանակի խնդիրներ (Ավիս) և այլն¹⁸: Օրակարգի բոլոր հարցերը նախապես արդեն քննարկվել էին կուսակցության համապատասխան մարմիններում և ընդունվել համապատասխան որոշումներ:

1922 թ. հունվարի 28-ին հրավիրված խորհուրդների համագումարի 252 պատվիրակների ճնշող մեծամասնությունը կոմունիստներ էին, որը մեկ անգամ ևս փաստում էր պետության կառավարման գործում կուսակցության ղեկավար դերը¹⁹:

Համագումարն ընտրեց կենտգործկոմ՝ 75 անդամի և 17 թեկնածուի կազմով: ԿԳԿ-ն հանրապետության բարձրագույն իշխանությունն էր խորհուրդների համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում: ԿԳԿ-ի նախագահ ընտրվեց Սաքո Համբարձումյանը, որի թեկնածությունը նախապես

¹⁸ Տե՛ս ՀԱՍ, ֆ. ց. 2, գ. 3, թ. 1:

¹⁹ Տե՛ս Ղազախեցյան 2006, 229:

հաստատվել էր ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության 1922 թ. հունվարի 30-ի նիստում: Իհարկե, հաստատվել էր նաև ԿԳԿ բոլոր անդամների և թեկնածուների կազմը²⁰:

Չնայած ԿԳԿ-ն երկրի իշխանության բարձրագույն մարմինն էր, սակայն մի քանի օր անց, ևս մեկ փաստով, ցուցադրվեց նրա ենթակայությունը կուսակցությանը: ԿԳԿ-ի նախագահության անդամ էր ընտրվել Հ. Ազատյանը, որն անձնական խնդիրներից ելնելով, հրաժարական ներկայացրեց նախագահության կազմից: Սակայն, օրեր անց, տեղի ունեցած Կենտկոմի նախագահության նիստում, հրաժարականը միաձայն մերժվեց: Կրկին հաստատվեց նրա անդամությունը ԿԳԿ նախագահությանը: Այսպիսով, անգամ ԿԳԿ նախագահության անդամները երկրի իրական ղեկավար մարմին էին համարում ՀԿ(բ)Կ Կենտկոմի և ոչ թե ԿԳԿ նախագահության նիստերը:

Շուտով, ԺԿԽ նախագահ Ա. Մյասնիկյանը ղեկավար աշխատանքի տեղափոխվեց Թիֆլիս, իսկ հանրապետության կառավարության նախագահ դարձավ Ս. Լուկաշինը, որի թեկնածությունը հաստատվեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության 1922 թ. ապրիլի 18-ի նիստում: Ի դեպ, այս դեպքում թեկնածուն պետք է ստանար նաև Անդրերկկոմի թույլտվությունը, ինչը ցույց էր տալիս ամրապնդվող ՌԿ(բ)Կ աստիճանակարգը, որը, տվյալ դեպքում, Մոսկվայից Թիֆլիսով ձգվում էր Երևան:

ՀՄԽՀ կառավարման համակարգում կոմկուսի առաջնահերթությունը երևում էր նաև ֆինանսական ոլորտում: ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը 1923 թ. փետրվարի 6-ին առաջարկեց (հասկանալ՝ պահանջեց) Անդրֆինժողկոմի ՀՄԽՀ ներկայացուցչին (պաշտոնը համարժեք է ՀՄԽՀ ֆինանսների

²⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. ց. 2, գ. 3, թ. 2:

ժողկոմին) իր ծախսերը ֆինասավորել առաջնակարգ սկզբունքով՝ արտահերթ²¹:

Հետագա գործունեության ողջ ժամանակաշրջանում ԿԳԿ-ն շարունակեց մնալ ՀԿ(բ)Կ փաստացի ենթակայության ներքո, որի օրինակները բազմաթիվ են: Այսպես, օրինակ, ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը 1924 թ. ապրիլի 22-ին հաստատեց ԿԳԿ-ի հերթական նստաշրջանի օրակարգը (մի քանի օրենսգրքերի ընդունում, ինչպես նաև՝ պետական և ազգային փոքրամասնությունների լեզվի օգտագործման կարգի մասին հարցեր և այլն): Այդ մարմնի 1925 թ. մարտի 16-ի որոշմամբ էլ հաստատվեցին ԿԳԿ նախագահության (նախագահ՝ Ս. Համբարձումյան, տեղակալ՝ Հ. Ազատյան, քարտուղար՝ Ա. Թաթյան) և կառավարության (ԺԿԽ նախագահ՝ Ս. Լուկաշին, նախագահի տեղակալ՝ Ա. Մռավյան, ժողկոմներ՝ Ա. Երզնկյան, Օ. Դուրգարյան և այլն) կազմերը²²:

ՀԿ(բ)Կ ղեկավարությունը երկրի գործադիր և օրենսդիր իշխանության ճյուղերն իրեն ենթարկելուն զուգընթաց, սկսեց իշխանության երրորդ՝ դատաիրավական մարմինների ենթարկեցման գործընթացը: ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը 1923 թ. հունվարի 23-ին որոշեց ՀՄԽՀ դատական համակարգի կառուցվածքը²³: Մեկ տարի անց՝ 1924 թ. ապրիլի 10-ին, ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը, լսելով արդարադատության ժողկոմատի գործունեության մասին հարցը, Կենտկոմի կազմակերպչական-հրահանգչական բաժնին հանձնարարեց կարճ ժամանակահատվածում ժողկոմատի աշխատակազմը

²¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. ց. 3, գ. 7, թ. 6-7:

²² Տե՛ս ՀԱԱ, ֆ. ց. 5, գ. 9, թ. 15:

²³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. ց. 3, գ. 7, թ. 1-2:

համալրել կոմունիստներով, ինչպես նաև՝ դատախազներին (հասկանալի է՝ մասնագետ- իրավաբաններին) փոխարինել կոմունիստ-ընկերներով²⁴:

Այսպիսով, ՀԿ(բ)Կ-ն, փաստացի իրեն ենթարկելով իշխանության բոլոր ճյուղերը, սկսեց իրավական տեսք տալ այդ գործընթացին: Մասնավորապես, ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը 1924 թ. մայիսի 24-ին, դատաօրենսդրական ոլորտին վերաբերող հարցերի քննարկման ժամանակ, որոշեց քաղաքացիական ու հողային իրավունքի և աշխատանքային օրենսդրության կիրառման ժամանակ առաջնորդվել դասակարգային (իմա՝ կուսակցական) մոտեցմամբ:

Եզրակացություններ

1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո, երկրի ղեկավարումը ստանձնած Հայկոմկուսը սկսեց իրեն ենթարկել իշխանության բոլոր ճյուղերը՝ գործադիր, օրենսդիր և դատական, ինչպես նաև՝ տեղական իշխանությունը:

ՀԿ(բ)Կ ղեկավարությունը նշանակում ու ազատում էր վերոնշյալ մարմինների ղեկավար պաշտոնյաներին, կատարում կառավարչակառուցվածքային փոփոխություններ՝ ստեղծում կառավարման համար անհրաժեշտ մարմիններ կամ լուծարում դրանք:

Չնայած Խորհրդային Հայաստանի՝ իրավական տեսակետից բարձրագույն իշխանության մարմինը խորհուրդների համագումարն էր (դրանց միջև ընկած ժամանակահատվածում՝ ԿԳԿ-ն), սակայն քաղաքական տեսակետից, իշխանու-

²⁴ Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. ց. 4, գ. 10, թ. 24 և հակ.:

թյան իրական տերը ՀԿ(բ)Կ-ն էր՝ իր համագումարներով, պլենումներով, Կենտկոմի նախագահությամբ և քարտուղարությամբ: Ընդունելով տարբեր օրենքներ՝ ՀԿ(բ)Կ-ն ղեկավարման իր սկզբունքին սկսեց նաև իրավական տեսք տալ:

1920-ական թթ. սկզբներին ձևավորված այս համակարգը հետագա տասնամյակների ընթացքում ավելի հղկվեց ու կարծրացավ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 5, 8:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 9 և հակ.:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 17 և հակ.: ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 23-26:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 27-28:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 30-33: ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 31 և հակ.:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 50-53:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 54-56: ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 95-96: ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 106-107:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 108: ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 3, թ. 1: ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 3, թ. 2: ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 5, թ. 12: ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 7, թ. 1-2:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 7, թ. 6-7: ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 10, թ. 24 և հակ.:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 9, թ. 15:

Ղազախեցյան Վ. 2006, Հայաստանը 1920-1940 թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 564 էջ:

Հակոբյան Ա. 2016, Միակուսակցական վարչակազմի ձևավորումը Խորհրդային Հայաստանում (1920-ական թվականներ), Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 366 էջ:

Մանուկյան Ա. 2002, Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ., Երևան, «Գիտություն», 192 էջ:

Ժամհարյան Գ. 2019, Հայաստանի խորհրդային ժամանակաշրջանի արտեակականության պատմության դրվագներ (1920-1930-ական թվականներ), Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 142 էջ:

Армен Р. Бадалян, *Институт истории НАН РА, к.и.н.*,
Руководящая роль КП(б) Армении в системе управления Советской Армении в первой половине 1920-х годов.

Резюме

После смены власти в Республике Армения 2 декабря 1920 г., взявшая на себя руководство Коммунистическая партия Армении начала подчинять себе все ветви власти – исполнительную, законодательную, судебную, а также местную.

Руководство КП(б)А назначало и увольняло руководящих деятелей вышеназванных органов, производило административно-структурные изменения, создавало необходимые для управления органы или распускало их.

Несмотря на то, что с правовой точки зрения высшим органом власти Советской Армении был съезд Советов (в промежутке между ними – ЦИК), с политической точки зрения, реальным хозяином власти была КП(б) Армении со своими съездами, пленумами, председательством и Секретариатом ЦК.

Принимая различные законы, КП(б) Армении также начала придавать правовой вид своему принципу руководства.

Эта система, сформировавшаяся в начале 1920-х годов, не изменилась и в последующие десятилетия, а стала лишь более усовершенствованной и устойчивой.

Ключевые слова: местная власть, СНК, Советская Армения, судебные органы, съезд компартии, съезд советов, тоталитарный принцип правления, ЦИК, ЦК КП(б)А.

Armen R. Badalyan, *Institute of History of the NAS RA, PhD in History, The leading role of the Communist (bolshevik) Party of Armenia in the governing system of Armenia in the first half of 1920s.*

Summary

After the transition of power in the Republic of Armenia on the 2nd of December the Communist (bolshevik) Party of Armenia took the rule of the executive, judicial and legislative branches of the government as well as the local government.

The Communist (bolshevik) Party of Armenia appointed and dismissed the leading figures of the above-mentioned branches of the Government, made managerial and structural changes, created institutions necessary for governing, or dissolved them.

Though the Congress of Soviets of Armenia was the supreme authority from the legal point of view (between them - Central Executive Committee), from the political view it was the Communist (bolshevik) Party of Armenia with its conferences, plenum, presidency, and secretariat of the Central Committee.

Setting different laws the Communist (bolshevik) Party of Armenia made its rule legal. This system created in the early 1920s didn't change in the following decades, however, it has become more elaborated and sustainable.

Key words: CPC, CEC, congress of Soviets, congress of the Communist Party, judiciary, local government, principle of totalitarian governance, Soviet Armenia, the Central Committee of C(b)PA.

ԳԱԳԻԿ Ա. ԺԱՄՀԱՐՅԱՆ

ԳՄԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ.,

zhamharyangagik@yandex.ru

**ՎԱՆԱԶՈՐՑԻՆԵՐԻ 1970–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԷԹՆԻԿ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ–
ԱՂԻԲԵՋԱՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՅ–ՌՈՒՍԱԿԱՆ ՇՓՈՒՄՆԵՐԻ
ՕՐԻՆԱԿՈՎ (ԲԱՆԱՎՈՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ)***

*Բանայի բառեր*¹ ադրբեջանցիներ, ազգային գիտակցություն, ազգային քաղաքականություն, ավանդույթ, բանավոր պատմություն, խորհրդային առօրյա, խորհրդային ժողովուրդ, հարցազրույց, հիշողություն, միջէթնիկ շփում, ռուսներ:

Ներածություն

Բազմազգ պետության մեջ ազգային գիտակցության առանձնահատկությունների դրսևորման բնութագրիչ գործոն են միջէթնիկ հարաբերությունները: ԽՍՀՄ փորձի ուսումնասիրությունն այս հարցում շատ կարևոր է այն իմաստով, որ այնտեղ այդ շփումները կարգավորվում էին կոմունիստական կուսակցության պատկերացումներով: 1970–ական թթ. պետությունը փորձում էր ազգային հարցերին տալ համապարփակ լուծումներ՝ առաջնորդվելով դասակարգային մոտեցմամբ¹: Այս քաղաքականության արտահայտություն պետք է համարել նաև

* Ներկայացվել է 23.X.2022 թ., գրախոսվել է 02.XI.2022 թ., ընդունվել է սպագրության 15.XII.2022 թ.: Հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ-ի սրբամադրած ֆինանսավորմամբ՝ 21T-6A274 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

¹ Бабаков, Семенов 1996, 19.

«խորհրդային ժողովուրդ» հասկացության շրջանառումը², ինչը հավակնում էր, եթե ոչ ջնջել, ապա գոնե «թուլացնել» խորհրդային մարդկանց ազգային և էթնիկ ինքնության սահմանները՝ խորհրդային ազգությունների փոխշփումներում դրանց որոշիչ ազդեցությունները հասցնելով նվազագույնի:

Թե ինչ հաջողություն էր ունենում այս քաղաքականությունը գործնականում՝ փորձենք հասկանալ հայ-ադրբեջանական և հայ-ռուսական միջէթնիկ շփումների օրինակով՝ բանավոր պատմության նյութերի միջոցով: Դրանցում բանասացները ներկայացրել են միջէթնիկ փոխհարաբերությունների իրենց փորձառությունը՝ բացահայտելով իրողություններ, որոնք հարստացնում են մեր պատկերացումները խորհրդահայ քաղաքացիների ազգային մտածողության վերաբերյալ:

Միջէթնիկ շփումներ: Ադրբեջանցիները և ռուսները բանասացների հիշողություններում

Ըստ բանասացների, 1970–ական թթ. Լոռու տարածաշրջանում ադրբեջանցիները բավական մեծ թիվ են կազմել և բնակվել են հիմնականում գյուղական կամ գյուղատիպ բնակավայրերում: Բուն Վանաձորում (նախկինում՝ Կիրովական) նրանց թիվը մեծ չի եղել, սակայն քաղաքի Խնձորուտ թաղամասում և մերձակա Վարդանլու, Արջուտ գյուղերում հիմնականում բնակվել են ադրբեջանցիներ: Թեև առանձին ադրբեջանցիներ պետական հիմնարկներում էին աշխատում՝ նրանց հիմնական մասը զբաղված էր գյուղատնտեսական աշխա-

² istmat.org/files/uploads/52747/22_sezd._chast_1._1962.pdf (մուտք՝ 10.09.2022).

տանքներում: Բանասաց Ռոբերտ Սահակյանը նրանց հիշում էր³ նաև որպես Վանաձորի փողոցները մաքրողներ:

Դատելով բանասացների վկայություններից՝ աղբբեջանցիները քաղաքային կյանքում ակտիվություն չեն ցուցաբերել: Աչքի են ընկել համեստ կենցաղավարությամբ, տեղացիների հետ շփումներում եղել են բավական բարեհամբույր ու պատրաստակամ: Հայտնի էին որպես էժան գյուղմթերք վաճառող, առևտրի մեջ եղել են ազնիվ ու զիջող: Բանասացները համակարծիք էին, որ նրանց հետ միշտ էլ հնարավոր էր պայմանավորվել գնի շուրջ:

1970-ական թթ.աղբբեջանցիների մոտ ազգային թշնամանքի դրսևորումներ չեն նկատվել: Նրանք եղել են խաղաղասեր և ազգայնական տրամադրություններին տուրք չեն տվել: Սակայն, պետք է նշել, որ աղբբեջանցիների նման պահվածքը բանասացներն ընկալում էին որպես արտաքին դրսևորում: Նրանք հետաքրքիր մեկնաբանություններ էին տալիս հայ-աղբբեջանական հարաբերություններում առկա խութերին: Աղբբեջանցիների բարեհամբույր և զգուշավոր պահվածքի վերաբերյալ Ռոբերտ Սահակյանն ուներ իր կարծիքը: «Վախկոտ ժողովուրդ են,- նշում էր նա,- դեռ երեխա ժամանակ, երբ ընկնում էինք հետևներից, փախչում էին: Մենք նրանց միշտ վերևից ենք նայել, եթե մի խնդիր էր լինում, ասում էինք՝ «ադե մի ռադոս քաշի, է՛, այ թուրք: Իրենք էլ ասում էին՝ «ա ինչի՞» էս տենց բան ասում»: Նա չէր հիշում մի դեպք, երբ աղբբեջանցիներն ագրեսիվ պահվածք ցուցաբերեին: Ինչքան էլ նրանց դուր չէր գալիս իրենց «թուրք» անվանելը, միշտ հանդուրժում էին:

³ Հարցազրույց Ռ. Սահակյանի հետ, հեղինակի անձնական արխիվ:

Ռոբերտ Սահակյանը պատմում էր, որ Վարդանյու գյուղում, տեղի դպրոցի տնօրենի հետ զրուցելիս, չիմանալով, որ նա ադրբեջանցի է՝ անեկդոտ էր պատմել Արցախի հայերի մասին, որում օգտագործել էր արցախցիների մեջ տարածված «թօրքը մնում ա թօրք» արտահայտությունը: Տնօրենը, մի քիչ սրտնեղած, ասել է, որ իրենք այդ թուրքերի հետ կապ չունեն, որ իրենք լավ մարդիկ են:

Ռոբերտ Սահակյանը հիշում էր խորհրդային ժամանակների նամականիշներից մեկը, որում ԽՍՀՄ-ում բնակվող տարբեր ազգությունների ներկայացուցիչներ էին պատկերված՝ բոլորն իրենց էթնոնիմներով, իսկ ադրբեջանցի անվանում չկար: Դրա փոխարեն նամականիշում գրված է եղել թաթար: Դրանից նա եզրակացրել է, որ ադրբեջանցիներն ինքնուրույն ազգություն չեն: «Ես հասկացա, որ սրանք, փաստորեն, էն նույն թուրքերն են», - նշում էր նա: Թե է՞րբ են ադրբեջանցիներին տեղացի հայերն սկսել «թուրք» անվանել, դժվար է ասել: Ըստ Սահակյանի, դա եղել է 1965 թ. ազգային զարթոնքից հետո: Այս պնդումը ճշտելու կարիք ունի, թեև 1965 թ. զարթոնքը միջէթնիկ հարաբերությունների վրա որոշակի ազդեցություններ ունեցել է: Ռոբերտ Սահակյանը և մյուս բանասաց Ռոբերտ Սապոնջյանը⁴ նշում էին, որ Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի հետ կապված խնդիրների մասին իրենք իմացել են հենց այդ տարիներին:

Հիշենք, որ 1966 թ. Խորհրդային Հայաստանի իշխանությունները ԼՂԻՄ-ը և Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը Խորհրդային Հայաստանին փոխանցելու արդարացի

⁴ Հարցազրույց Ռ. Սապոնջյանի հետ, հեղինակի անձնական արխիվ:

պահանջով դիմել էին ԽՄԿԿ XXIII համագումարին⁵: Թերևս, այս նամակի, ինչպես նաև հայ մտավորականության՝ ազգային խնդիրների բարձրաձայնման հարցում ակտիվության հանրային արձագանքներն էին արտացոլված բանասացների նշված պնդման մեջ: Ռոբերտ Սահակյանը նույնիսկ նշեց, որ մինչև այդ իրադարձություններն ինքը կարծել է, որ և՛ Ղարաբաղը, և՛ Նախիջևանը ադրբեջանական «պապական» հողեր են:

Խորհրդային Հայաստանում ազգային զարթոնքով պայմանավորված հանրային տրամադրություններն ադրբեջանցիները չէին կարող չզգալ: Ռոբերտ Սահակյանը հիշում էր, որ մշտապես վախ և լարվածություն է նկատել ադրբեջանցիների մոտ, որոշակի անհանգստություն, ինչը նրանց ստիպել է զգուշավոր պահվածք ցուցաբերել: Ադրբեջանցիների երկյուղների մասին մեր ձեռքի տակ գտնվող մեկ այլ տվյալ ևս հաստատում է այս վկայությունը: Դեպքը տեղի է ունեցել 1966 թ. Վայոց Ձորի Շատին գյուղում: Տեղի բնակիչներից մեկը Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին վեց խարույկ է վառել գյուղի շրջակա բլրակների վրա՝ ինչը լրջորեն վախեցրել է մոտակա ադրբեջանական գյուղերի բնակիչներին: Վերջիններս, կարծելով, թե հայերը պատրաստվում են հարձակվել իրենց վրա՝ ահազանգել են շրջանի ղեկավարությանը⁶:

Ռոբերտ Սահակյանն ու Ռոբերտ Սապոնջյանը վստահ էին, որ ադրբեջանցիները տեղյակ էին երկու ժողովուրդների պատմական շփումների նրբություններին և լավ գիտեին, թե ինչպես ու երբ են Արցախն ու Նախիջևանը հայտնվել իրենց

⁵ Տե՛ս Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար 2011, 61-74:

⁶ Ժամհարյան 2021, 151:

ձեռքում և, թե ինչպես են իրենք հայտնվել Հայաստանում, իսկ հայերը՝ Ադրբեջանում և այլն: Սահակյանը Վանաձորում բնակված ադրբեջանցիների վերաբերյալ այն կարծիքին էր, որ նրանց պայմանները չէին թույլ տալիս դրսևորելու իրենց իրական վերաբերմունքը հայերի հանդեպ:

Ադրբեջանցիների հետ բանասացների շփումը չի սահմանափակվել միայն Վանաձորով: Ռոբերտ Սահակյանն, օրինակ, նրանց հետ շփվել է նաև Բաքվում: Նա նշում էր, որ այնտեղ շատ է հանդիպել, իր բառերով ասած՝ «նորմալ» մարդկանց: Տպավորված էր Ֆարման անունով ադրբեջանցու հետ ծանոթությունից, որը նրան պատմել է, որ հայրը տասնյակ տարիներ ապրել է Հայաստանում, եղել է հանրապետական ռադիոյի հաղորդավար, հաղորդումներ վարել գրական հայերենով:

Ռոբերտ Սահակյանը հիշեց մի դեպք, որը նույնպես տեղի էր ունեցել Բաքվում: Իր ընկերոջ թեկնածուական ատենախոսության պաշտպանության օրերին նրանք հացկերույթի սեղանի շուրջ շփվում են ադրբեջանցի գիտնականների հետ: Սահակյանն իր բաժակաճառում, անդրադառնալով հայ-ադրբեջանական ազգամիջյան լարվածությանը, շեշտում է փոխադարձաբար իրար հարգելու, թշնամանքը վերացնելու անհրաժեշտությունը: Ի զարմանս իրեն՝ ներկա գտնվող ադրբեջանցիներից մեկը ներողություն է խնդրում, և ասում, որ իրենք մեղավոր չեն, և որ ամեն ինչում մեղավոր են իրենց նախնիները: Սահակյանի ընկերն անհանգստանում է, որ իր ատենախոսության պաշտպանությունը կձախողվի, սակայն ամեն ինչ բարեհաջող է ավարտվում: Այս դրվագը Ռոբերտ Սահակյանի մոտ մնում է որպես խորհրդային տարիներին ադրբեջանցիների հետ շփումների մասին վառ հիշողություն:

Բանասացների հետ հարցազրույցների ընթացքում մենք եզրակացրինք, որ Վանաձորի աղբբեջանցիների մասին նրանց հիշողություններն ավելի աղքատիկ են, և որ այդ ժողովրդի հետ միջէթնիկ շփումների նրանց փորձառությունը տպավորությունների, մտածելակերպի համեմատության և, սրանով պայմանավորված, հոգեբանական գնահատականների առումով, ավելի հարուստ է եղել Վանաձորից դուրս, մասնավորապես՝ Արցախում և Ադրբեջանում:

Բանասաց Թերեզա Շահվերդյանի պատմությունը⁷ ևս հաստատում է սա: Նա պատմում էր, որ Վանաձորի պետական համալսարանի (նախկինում՝ Կիրովականի պետական մանկավարժական ինստիտուտ) դասախոսների 1974 թ. Արցախ կատարած այցելության ժամանակ իրենց հյուրընկալած Ապիկոն անունով արցախցու կինն աղբբեջանուհի էր: Շահվերդյանն այդ կնոջ ընդունելությունից ու հյուրասիրությունից ոգևորված բացականչում է. «Այ, այսպե՛ս պետք է ընդունել հյուրերին»: Նա հիշում էր. «Չնայած, որ առաջին անգամ էր տեսնում մեզ՝ Հայաստանից եկած այցելուներիս, դիմավորեց աստիճանների կանգնած և բոլորիս հատիկ-հատիկ գրկեց: Մի քանի օր այն էլ ինչպիսի՛ արտակարգ հյուրասիրություն տվեց...»:

Թերեզա Շահվերդյանը պատմում էր, որ նրանց դուստրն ամուսնացած էր վրացու հետ, և որ իր համար նրանք ինտերնացիոնալ ընտանիքի վառ օրինակ էին: Սակայն, ինչպես ԽՍՀՄ ինտերնացիոնալ մեծ ընտանիքում, այստեղ ևս միջէթնիկ հարաբերություններում առկա էին խոր կնճիռներ: Պարզվում է, որ աղբբեջանուհու եղբայրները, որոնք Բաքվում հայտնի

⁷ Հարցազրույց Թ. Շահվերդյանի հետ, հեղինակի անձնական արխիվ:

պրոֆեսորներ էին, հայի հետ ամուսնանալու պատճառով, քրոջ հետ խզել էին հարաբերությունները:

Հյուրընկալ ադրբեջանուհու մասին Թերեզա Շահվերդյանի հակասական տպավորություններն ամբողջանում են մի հետաքրքիր դրվագում: «Այսպիսի մի բան էլ եղավ,- հիշում էր նա,- մեկն էդ կնոջը հարց տվեց, որ եթե հանկարծ հայ-ադրբեջանական հարաբերությունները հասնեն ծայրահեղության, դու ի՞նչ դիրքորոշում կունենաս: Նա պատասխանեց, որ ամեն ադրբեջանցու մի հայ է հասնում, ես էլ Ապիկոնին կսպանեմ, այսինքն, իր ամուսնուն»: Տարիների հեռավորությունից անգամ վերհիշելով այս դրվագը՝ բանասացը լիակատար վստահություն չուներ՝ այս խոսքերը կատակո՞վ ասվեցին, թե՞ ոչ:

Արցախում հայ-ադրբեջանական միջէթնիկ լարվածության արձագանքներն ըստ բանասացների դեռևս 1960-70-ական թթ. էին հասել Վանաձոր: Սրա մասին Ռոբերտ Սահակյանն ուներ հիշողություններ, որոնք կապված էին Արցախում բնակվող իր ազգականների հետ: Ըստ բանասացի, Վանաձոր այցելած ժամանակ նրանք դժգոհում էին ոչ թե տնտեսական դժվարություններից, այլ ադրբեջանական իշխանությունների խտրական ազգային քաղաքականությունից և իրենց իրավունքների մշտական ոտնահարումներից:

Ռոբերտ Սապոնջյանի մոտ այսօրինակ հիշողություններ կային՝ կապված Շամխորի շրջանի հայկական գյուղերից մեկի հետ, որտեղ նա այցելել էր 1970-ական թթ.: Նրա պատմածով, ադրբեջանական իշխանություններն անընդհատ ձգձգել էին այդ գյուղի դպրոցի կառուցումը՝ չցանկանալով այդտեղ հայկական դպրոց ունենալ: Ի վերջո, ըստ Սապոնջյանի, դպրոցը կառուցվել է այն ժամանակ, երբ ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Կ.

Դեմիրճյանի հրահանգով՝ Հայաստանից դպրոցի շինարարության համար շինաքար և այլ շինանյութ է ուղարկվել:

Հայ-ադրբեջանական շփումներում առկա միջէթնիկ հեռավորության մասին է վկայում նաև երկու ժողովուրդների միջէթնիկ ամուսնությունների պրակտիկան և դրա նկատմամբ վերաբերմունքը: Այս հարցին վերաբերող մեկ դրվագ արդեն ներկայացրինք Թերեզա Շահվերդյանի հուշերից: Թեման շարունակելով նշենք, որ հայերի և ադրբեջանցիների ամուսնությունները եղել են բացառություններ և երկու հանրություններում բացասաբար են ընդունվել:

Բանասաց Սեյրան Հակոբյանի պատմածից⁸ պարզվում է, որ Վանաձորի հասարակության ընկալումներում սա բավական նրբազգաց հարց է եղել: «Մեր աղջիկներն ադրբեջանցի տղա ուզել են, բայց մենք ադրբեջանցի աղջիկ չենք ուզել, դա բացառվել է», - նշում էր Սեյրան Հակոբյանը: Նա պատմում էր նաև, որ բոլոր այն դեպքերում, երբ հայ աղջիկն ամուսնացել է ադրբեջանցի տղայի հետ՝ ստիպված է եղել դեմ գնալ իր մերձավոր հարազատների կամքին: Դրանք չեն եղել ամուսնություններ հայկական հարսանեկան ավանդույթների պահպանմամբ: Հակոբյանը նաև պնդում էր, որ այսպես ամուսնացել են այն աղջիկները, որոնք հանրության աչքում եղել են բարոյապես վարկաբեկված:

Թեմային առնչվող հետաքրքիր դեպք էր հիշում նաև Ռոբերտ Սապոնջյանը: Այն կատարվել է Ղարաբաղյան շարժման օրերին: Վանաձորի միլիցիայի բաժանմունքի ադրբեջանցի աշխատակիցը, որն ամուսնացած էր հայուհու հետ և ուներ յոթ զավակ, շարժման հասունացման օրերին լքում է ընտանիքը և

⁸ Հարցազրույց Ս. Հակոբյանի հետ, հեղինակի անձնական արխիվ:

փախչում Ադրբեջան: Ըստ բանասացի, հավանաբար, Բաքվի իշխանություններն այդ օրերին «պետքական» ադրբեջանցիներին կանչում էին՝ ինչ-ինչ հակահայ գործընթացներում օգտագործելու նպատակով: Այս պատմության մեջ բնութագրականն այն է, որ ադրբեջանցին լքել էր իր հայ կնոջն ու յոթ զավակներին և իր հետ Ադրբեջան չէր տարել:

Ի տարբերություն ադրբեջանցիների՝ ռուսների հետ ամուսնությունների մասին Վանաձորում եղել է տրամագծորեն հակառակ ընկալումը: Բանասացները հիշում էին, որ դրանք տարածված են եղել և շահարկումների առիթ չեն տվել: Սեյրան Հակոբյանն այս առթիվ նշեց. «Ռուսների հետ այս հարցում խնդիր չկար, նրանք խնդիր չունեին»:

Վանաձորում ապրած ռուսների մասին բանասացների հիշողություններն ավելի ընդհանրական էին ու սուղ: Դատելով նրանց վկայություններից՝ ուղղակի առնչություններ չեն եղել: Մակայն, ի տարբերություն ադրբեջանցիների, բուն քաղաքում ապրող ռուսներն ավելի շատ են եղել և ներկայացված են եղել քաղաքի հասարակական կյանքում: Ռոբերտ Սահակյանն ու Թերեզա Շահվերդյանը հիշեցին և՛ «Կոմունիստ» թերթի թղթակցի, և՛ անվանի բժիշկների, և՛ կուսակցական աշխատողների, և՛ դասախոսների, և՛ ուսուցիչների:

Ռոբերտ Սահակյանը նշեց, որ Վանաձորում բնակվող ռուսները հիմնականում մտավորականներ էին: Տեղացիների հետ հարաբերություններում նրանք եղել են զուսպ ու հարգալից: Ընդհանուր առմամբ, Սահակյանը նրանց դրական էր բնութագրում: Նույնիսկ ավստոսանքով էր հիշում Ռեշետով ազգանվամբ մի բժշկի, որի մասնագիտական որակներն այնքան բարձր էին, որ գործընկերների մոտ մասնագիտական խանդ էր

առաջացել: Ռեշետովին, բանասացի բնութագրմամբ, «նեղացրել էին», և նա «խռովել» ու գնացել էր Ռուսաստան: Սակայն, այս իրադարձությունը պետք է բացառություն համարել, քանզի բնութագրական չի եղել 1970-ականների Վանաձորին:

Ռուսների հետ կապված հիշողություններում բանասացների խոսքում առկա էր այդ ժամանակ ռուսական ազդեցության աճի արձագանքը: Դա երևում էր նրանց՝ «Կիրովականում ռուսներն իրենց լավ էին զգում», «մեզ վերևից էին նայում», «ռուսները մեզ մոտ խնդիրներ չեն ունեցել», «ռուսները մեզ մոտ իրենց արտոնյալ էին զգում» և նմանօրինակ այլ արտահայտություններից:

Ռոբերտ Սապոնջյանը նշում էր, որ ռուսների հոգեբանության մեջ նկատել է մեծամտություն, ինչն ըստ նրա պայմանավորված էր նրանց այն գիտակցությամբ, որ ԽՍՀՄ հանրապետությունները ղեկավարվում, հովանավորվում և պաշտպանվում էին Ռուսաստանի կողմից: Նրա կարծիքով, հայերի հանդեպ ռուսների վերաբերմունքը կառուցվում էր «ձեռքներս քաշենք՝ կորած եք» կանխադրույթի հիման վրա:

Այս տպավորությունն ուներ նաև բանասաց Թերեզա Շահվերդյանը: Հայ բանասիրության մասնագետի համար հատկապես դժվար էր համակերպվել այն իրողության հետ, որ հանրային կյանքի տարբեր ոլորտներում հայոց լեզուն ստորադասվում էր ռուսերենին: Իր աշխատավայրում՝ Վանաձորի պետական համալսարանում, նա մշտապես պայքարել է այս երևույթի դեմ: Զայրացել է, երբ, օրինակ, ռուս մաքրուհին, երկար տարիներ այդտեղ աշխատելով հանդերձ, չի սովորել հայերեն: «Նրան բոլորը ռուսերեն էին բարևում: Ես իրեն միշտ

հայերեն էի բարևում, իսկ ուրիշներից էլ նեղանում էի, ասում էի ինչի՞ չեք իրեն հայերեն բարևում», - ասում էր Շահվերդյանը:

Նա նաև հիշում էր, որ մշտապես զայրացել է ռուս գործընկերուհու վրա, որն աշխատանքի շուրջ 30 տարվա ընթացքում այդպես էլ հայերեն խոսել չի սովորել: Քննությունների նրա տեղեկագրերը ստիպված էին լինում անընդհատ թարգմանել: «Ասում էի, ա՛յ Սվետա, բա դու 36 տարի էստեղ եկել, հայի հացը ուտում էս, 36 տառն ի՞նչ է, որ չես սովորում»:

1970-ական թթ. Խորհրդային Հայաստանում, ցավոք, ռուսերենի իմացությունը դարձել էր սոցիալական բարձր վարկանիշի, ընտրախավային կարգավիճակի բացառիկ չափանիշ: Այս ընկալումը հայ հասարակության մեջ զանգվածային էր, ուստի, օր-օրի աճում էր ռուսական դպրոցների և իրենց երեխաներին այնտեղ ուսման տվող ծնողների թիվը: Թերեզա Շահվերդյանի բնորոշմամբ՝ այդ տարիներին Վանաձորում երեխային հայկական դպրոց էին ուղարկում կամ միջին խավի մարդիկ, կամ բացառիկ հայրենասերները:

Ռուսերենին տիրապետելն անխուսափելի էր այն դեպքերում, երբ երեխայի համար ձգտում էիր ապահովել որակյալ կրթություն և բարձր աշխատավարձով «հարգի» մասնագիտություն: «Բոլոր մտավորականները կարծում էին, որ իրենց երեխան տաղանդավոր է և պետք է ատենախոսություն գրի», - հիշում էր Թերեզա Շահվերդյանը: Իսկ քանի որ Հայաստանում գրվող բոլոր ատենախոսությունները հաստատվում էին Մոսկվայում՝ ԽՍՀՄ բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից, պետք է շարադրվեին ռուսերենով:

Թերեզա Շահվերդյանը հիշում էր, թե ինչ տառապանքով է ստիպված եղել իր թեկնածուական ատենախոսությունը տպագ-

րել ռուսերեն: «Ես իմ աստենախոսությունը շարադրելու վրա,-
ասում էր նա,- ավելի քիչ ժամանակ եմ ծախսել, քան տպագ-
րելու: Աշխատանքի մեջ բերված բոլոր օրինակները գրաբարով
էին: Դե պատկերացրու՝ աստենախոսության տեքստը գրել եմ
ռուսերեն, օրինակները՝ գրաբար, և այդ ամենն առանց համա-
կարգչի»: Ահա, թե մեր բանասացները ինչպես էին ներկա-
յացնում ինդրո առարկա միջէթնիկ հարաբերությունները

Եզրակացություններ

Հիմնվելով հարցազրույցների արդյունքների վրա՝ կարող
ենք պնդել, որ 1970-ական թթ. Վանաձոր քաղաքի հայ և ադրբե-
ջանցի ազգաբնակչությունն ապրել է խաղաղ համակեցային
մթնոլորտում, սակայն փոխադարձ շփումներում նրանց միջև
միջէթնիկ հեռավորությունը պահպանվել է: Վանաձոր քաղա-
քում այն ավելի շատ պայմանավորվել է ավանդական, մշակու-
թային և լեզվական պատնեշներով: Ազգային հողի վրա բա-
խումներ չեն եղել: Այնուհանդերձ, հայ-ադրբեջանական հարա-
բերություններին բնորոշ միջէթնիկ լարվածությունը չի վերացել:
Ուղղակի, 1970-ական թթ. այն սուր դրսևորումներ չի ունեցել:

Վանաձոր քաղաքում բնակված ռուսների հետ եղել են
բարիդրացիական հարաբերություններ: Միջէթնիկ հեռավորու-
թյունն այստեղ ավելի քիչ է արտահայտված եղել: Այս հարաբե-
րություններում, սակայն, նույնպես առկա են եղել «կնճիռներ»:
Վանաձորցիներին դուր չի եկել ռուսների մեծամիտ լինելու
հանգամանքը: Ռուսաց լեզվին գերիշխող կարգավիճակ տալու
քաղաքականությունն էլ, հայ ազգային արժեքների պահպան-
ման և մայրենի լեզվի հեղինակության առումով, առաջացրել է
որոշակի մտահոգություններ: Այդ են վկայում նաև բանասաց-

ների հիշողությունները: Սակայն, առօրյա կենցաղային փոխհարաբերությունների մակարդակում այս «կնճիռները» էական նշանակություն չեն ունեցել:

Քանի որ ներկա ուսումնասիրությունը վերաբերում է միայն Վանաձոր քաղաքին, իսկ հետազոտությանը մասնակցել են սահմանափակ քանակությամբ բանասացներ, այն հավակնություն չունի լուսաբանելու հայ մարդկանց խորհրդային տարիների ազգային մտածողության բոլոր շերտերն ու առանձնահատկությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ժամհարյան Գ. 2021, Խորհրդային Հայաստանում «ազգային զարթոնքի» գաղափարական վերահսկողության և սոցիալական արձագանքների հարցի շուրջ, «Հայոց պատմության հարցեր», №2/23, էջ 143-160:

Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար (փաստաթղթերի և նյութերի ժողովածու) 2011, կազմողներ՝ Խաչատրյան Կ., Աբրահամյան Հ., Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 175 էջ:

Бабаков В., Семенов В. 1996, Национальное сознание и национальная культура (методологические проблемы), Москва, Институт философии РАН, 71 с.

Հարցազրույցներ

Վանաձոր քաղաքի բնակիչ Թերեզա Շահվերդյանի հետ, ծնվ. 1945 թ., ՎՊՀ դասախոս (հարցազրույցը՝ 31.03.2022 թ.),

Վանաձոր քաղաքի բնակիչ Ռոբերտ Սահակյանի հետ, ծնվ. 1937 թ., ՎՊՀ դասախոս (հարցազրույցը՝ 17.03.2022 թ.),

Վանաձոր քաղաքի բնակիչ Ռոբերտ Սապոնջյանի հետ, ծնվ. 1951 թ., թոշակառու (հարցազրույցը՝ 25.03.2022 թ.),
Վանաձոր քաղաքի բնակիչ Սեյրան Հակոբյանի հետ, ծնվ. 1942 թ., թոշակառու (հարցազրույցը՝ 25.03.2022 թ.):

Гагик А. Жамгарян, *Институт истории НАН РА, к.и.н.,*
Опыт межэтнических отношений жителей Ванадзора на примере армяно-азербайджанских и армяно-русских отношений в 1970-х годах (материалы устной истории).

Резюме

Изучение советского периода армянской истории остается актуальной исследовательской проблемой по ряду причин. Среди них необходимость пересмотра идеологических подходов исследования советского прошлого, а также использования методологических практик и исследователского опыта сравнительно новых историографических направлений, таких как история повседневности, микроистория, устная история, без которых не представляется возможным всеобъемлющее изучение советской социальной жизни.

Представленное исследование проводилось в рамках методологии одного из вышеназванных направлений – устной истории. На основе результатов проведенных среди группы жителей города Кировакан (ныне Ванадзор) исследовательских интервью освещается национальное сознание армянского населения в 1970-х годах в контексте бытовых национальных представлений и межэтнических отношений. Акцент ставится, в частности, на

армяно-азербайджанские и армяно-русские межэтнические отношения, исходя из того, что традиционно эти отношения интерпретировались в рамках антитезы «дружественные – враждебные».

Автор ставит своей целью проанализировать влияние национальной политики советских властей на общественное восприятие этих отношений.

Ключевые слова: азербайджанцы, интервью, межэтнические отношения, национальная политика, национальное сознание, память, русские, советская повседневность, советский народ, традиции, устная история.

Gagik A. Zhamharyan, *Institute of History of the NAS RA, PhD in History, Experience of inter-ethnic relations of Vanadzor residents on the example of Armenian-Azerbaijani and Armenian-Russian relations in the 1970s (materials of oral history).*

Summary

The study of the Soviet period of Armenian history remains a relevant research issue for several reasons. Among them is the need to revise ideological approaches of research of the Soviet past, as well as the use of methodological practices and research experience of relatively new historical directions, such as the history of everyday life, microhistory, oral history, without which no comprehensive study of Soviet social life is possible.

The presented research was conducted according to the methodology of one of the above-mentioned directions – oral history. Based on research interviews conducted among a group of

residents of the city of Kirovakan (now Vanadzor), the national consciousness of the Armenian population in the 1970s in the context of everyday national perception and inter-ethnic relations is highlighted. In particular, emphasis is put on the Armenian-Azerbaijani and Armenian-Russian inter-ethnic relations based on the fact that traditionally these relations have been interpreted within the antithesis “friendly – hostile relations”.

The author aims to analyse the impact of the national policy of the Soviet authorities on the public perception of these relations.

Key words: Azerbaijanis, inter-ethnic relations, interview, memory, national consciousness, national politics, oral history, Russians, Soviet daily life, Soviet people, traditions.

ՌՈՒԲԵՆ Լ. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ

r.azizbekyan@mail.ru

**ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ
ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ 1991-2008 ԹԹ.***

Բանալի բառեր՝ Հայաստան, գիտական, եկեղեցական, հոգևոր, հումանիտար, տեղեկատվական կապեր, համագործակցության ոլորտներ, Ռուսաստան:

Ներածություն

Արդի ժամանակափուլում յուրաքանչյուր երկրի հաջողությունն ու միջազգային վարկը պայմանավորված են ոչ միայն նրա ռազմական ներուժով կամ տնտեսական համագործակցության առաջարկվող նմուշօրինակների գրավչությամբ, այլև հումանիտար ու հոգևոր բնույթի գործոններով և այդ բնագավառներում արտաքին շփումների ինտենսիվությամբ ու համադրությամբ: Այս տեսանկյունից Հայաստանի և Ռուսաստանի համար խիստ կարևոր հումանիտար ոլորտում 1991-2008 թթ. երկու երկրների փոխգործակցության համապարփակ ծավալումն ակնբախ դրսևորվում էր նաև գիտական, տեղեկատվական, ինչպես նաև հոգևոր կապերի ընդլայնմամբ¹: Դրանք

* Ներկայացվել է 19.IX.2022 թ., գրախոսվել է 6.X.2022 թ., ընդունվել է տպագրության 15.XII.2022 թ.:

¹ Խնդրո առարկա ժամանակաշրջանում ՀՀ և ՌԴ միջև կրթամշակութային կապերի զարգացմանն անդրադարձել ենք «Հայոց պատմության հարցեր» ամսագրի նախորդ՝ 1 (24) համարում տպագրված մեր հոդվածում (տե՛ս Ազիզբեկյան 2022, 165-187):

հայ-ռուսական բազմակողմ հարաբերությունների զարգացման անբակտելի բաղադրիչներից էին:

Գիտական կապերի զարգացումը

Քննվող ժամանակաշրջանում ՀՀ և ՌԴ միջև գիտական ու գիտատեխնիկական ավանդական կապերն աստիճանաբար վերականգնվում ու զարգանում էին: Դրան զգալիորեն նպաստեց երկու երկրների միջև 1993 թ. հունվարի 11-ին կնքված «Գիտատեխնիկական համագործակցության մասին» համաձայնագիրը²: Նույն թվականից վերսկսվեցին Հայաստանի գիտությունների ազգային և Ռուսաստանյան գիտությունների ակադեմիաների լայնածավալ շփումները, իսկ 2004 թ. սկիզբ առավ համագործակցությունը ՀՀ ԳԱԱ-ի և ՌԴ Հարավային գիտական կենտրոնի միջև³: Աշխուժացավ փոխգործակցությունը նաև առանձին գիտական հաստատությունների ու կազմակերպությունների միջև: Վերջինիս արգասիքը դարձավ երկու երկրների նույնապրոֆիլ գիտական հաստատությունների համագործակցության վերահաստատումն ու խորացումը, ինչի շնորհիվ, հատկապես բնական գիտությունների շատ ճյուղերում, իրականացվում էին համատեղ հետազոտական ծրագրեր: 2004 թ. Սևանա լճի վրա սկսեց գործել հայ-ռուսական ջրակենսաբանական արշավախումբը⁴: ՌԳԱ մակաբուծաբանության ինստիտուտում գործում էր ՀՀ ԳԱԱ կենդանաբանության ինստիտուտի հետ համատեղ փորձարարական մակաբուծաբանության լաբորատորիան⁵:

² Տե՛ս ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995 թթ. 2002, 94-95:

³ Տե՛ս sci.am/about.php?langid=1 (մուտք՝ 10.08.2022):

⁴ Տե՛ս Григорян 2018, 89:

⁵ Տե՛ս sci.am/about.php?langid=1 (մուտք՝ 10.08.2022):

Երևանի Գիտության և մշակույթի ռուսական կենտրոնի հենքի վրա 2000-ականների վերջին բացվեց ռուս-հայկական համագործակցության նորարարական կենտրոնը⁶ և այլն:

Հայ-ռուսական սերտ փոխգործակցությամբ և գրեթե լիակատար փոխըմբռնմամբ աչքի էր ընկնում հումանիտար գիտությունների, հատկապես, պատմագիտության բնագավառը: Դա, մասնավորապես, դրսևորվում էր նաև համատեղ ձեռնարկների և ժողովածուների հրատարակմամբ: Այս առումով հատկանշական էր, որ Հայաստանում պատմության համար Ռուսաստանի դեմ «պատերազմ» չէր մղվում, ինչը բնորոշ էր հետխորհրդային մի շարք պետությունների: ՀՀ-ում հայոց պատմության որոշ իրադարձությունների գնահատականները չէին հակադրվում մեր ժողովրդի պատմության մեջ Ռուսաստանի ունեցած դերին: 1941-1945 թթ. իրադարձությունները Հայաստանում լույս տեսած պատմագիտական աշխատություններում և դասագրքերում հիմնականում անվանվում էին Հայրենական Մեծ պատերազմ⁷, մինչդեռ ԱՊՀ մասնակից պետություններում այն մեծամասամբ ոչ միայն որպես Երկրորդ համաշխարհային պատերազմի մաս էր դիտարկվում, այլև ԽՍՀՄ-ը մեղադրվում էր իրենց տարածքների «բռնագավթման» մեջ: Հայկական հրատարակություններում հստակորեն նշմարվում էր հեղինակների հավասարակշռված և բազմակողմանի գնահատականների մշակման ձգտումը: Ընդգծվում էր Ռուսաստանի դրական ազդեցությունն Արևելյան Հայաստանի տնտեսական և մշակութային զարգացման վրա: Հայ պատմաբանները,

⁶ Стé u Poccийско-армянское гуманитарное сотрудничество 2011, 12 октября:

⁷ Հայաստանում հատուկ ուշադրություն էր հատկացվում նաև հանրապետության տարածքում տեղադրված Հայրենական Մեծ պատերազմին ու ռուս-պարսկական պատերազմներին նվիրված հուշարձանների պահպանմանը:

հաստատելով ռուսական կայսրության ազգային փոքրամասնությունների՝ իրենց ներքին կյանքն ինքնուրույնաբար կազմակերպելու իրավունքի բացակայությունը, միաժամանակ շեշտում էին, որ հենց ռուսների օգնությամբ հայերը ծանոթացան ժամանակակից քաղաքակրթության նվաճումներին⁸:

Հումանիտար գիտությունների բնագավառում սերտ կապեր էին հաստատվել նաև հայագիտական ուղղվածությամբ ՀՀ հաստատությունների և ՌԴ-ում հումանիտար ոլորտի գիտակրթական ու ակադեմիական կառույցների շրջանակներում գործող հայագիտական կենտրոնների միջև: Վերջիններիս թվում էին՝ ՌԳԱ Արևելյան ձեռագրերի ինստիտուտի հայկական ֆոնդը, Ուրալի դաշնային, Նիժնի Նովգորոդի պետական ու Ռյազանի պետական համալսարանների հայագիտական կենտրոնները և այլն, որտեղ իրականացվում էին հայագիտական տարատեսակ ուսումնասիրություններ, կատարվում վերլուծություններ: Դրանք արտացոլվում էին մենագրություններում, ինչպես նաև հայաստանյան գիտնականների համահեղինակությամբ կոլեկտիվ աշխատություններում⁹, գիտական հոդվածներում, ժողովածուներում, պարբերականներում ու զեկույցներում: Այդ կենտրոններում իրականացվող գիտահետազոտական աշխատանքներն ամփոփվում էին նաև ատենախոսությունների ու մագիստրոսական թեզերի մեջ, որոնց նախապատրաստման աշխատանքներում և պաշտպանության գոր-

⁸ St' u Освещение общей истории России и народов постсоветских стран в школьных учебниках истории новых независимых государств 2009, 86-88, 150-151:

⁹ St' u Колобов, Корнилов, Симонян 2001: Асатрян, Колобов, Корнилов 2010: Егиазарян, Корнилов 2010 և այլն:

ծում ներդրում էին ունենում նաև հայաստանցի մասնագետները:

Ռուսաստանյան հայագիտական կենտրոնները կազմակերպում էին նաև հայոց պատմությանն ու լեզվին, հայ մշակույթին, գրականությանը, ազգագրությանը, կրոնին, հայկական սփյուռքին, հայ և ռուս ժողովուրդների պատմական, մշակութային ու քաղաքակրթական առնչություններին նվիրված, ինչպես համառուսաստանյան, այնպես էլ միջազգային գիտաժողովներ, որոնց մասնակցում էին նաև մասնագետներ Հայաստանից: Իրենց հերթին, ռուսաստանցի հայագետները մասնակցում էին Հայաստանում անցկացվող նման գիտաժողովներին և միջոցառումներին: Որպես կանոն, նշյալ գիտաժողովների զեկույցները հրատարակվում էին առանձին ժողովածուներով¹⁰: Ռուսաստանի հայագիտական կենտրոնները հրատարակում էին նաև պարբերականներ: Մասնավորապես, Նիժնի Նովգորոդի պետական համալսարանի հայագիտական կենտրոնը 2004 թվականից հրատարակում էր «Նաիրի» տարեգիրքը՝ Հայաստանի և Սփյուռքի մասին¹¹:

1990-2000-ականներին ՀՀ և ՌԴ միջև կրթագիտական բնագավառում համապարփակ համագործակցության վառ արգասիքներից էր 2001 թ. սեպտեմբերի 15-ին կառավարությունների միջև ստորագրված «Կրթության, գիտական աստիճանների և կոչումների վերաբերյալ փաստաթղթերի փոխադարձ ճանաչման մասին» համաձայնագիրը¹²: Այն ոլորտում կողմերի բարձր մակարդակի փոխվստահության վկայություններից էր:

¹⁰ Տե՛ս Проблемы и перспективы внешней политики Республики Армения и Спюрка 2009, Армения в диалоге цивилизаций 2011 և այլն:

¹¹ Տե՛ս Հովյան 2015:

¹² Տե՛ս ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1999-2001 թթ. 2002, 379-382:

Համագործակցություն տեղեկատվական բնագավառում

1991-2008 թթ. ՀՀ և ՌԴ միջև համագործակցություն էր ծավալվում նաև այս ասպարեզում: Վերջինիս ամուր հենքն էր երկու երկրների միջև առկա լայն իրավապայմանագրային դաշտը: Միայն 1997-2001 թթ. Հայաստանի և Ռուսաստանի միջև կնքվեցին տվյալ ոլորտում երկկողմ համագործակցության ապահովմանը նպատակաուղղված 5 միջկառավարական և միջգերատեսչական համաձայնագրեր: Դրանց թվում նաև ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև 1997 թ. հուլիսի 1-ին ստորագրված «Ռուսաստանյան հեռուստառադիոհաղորդակցման կազմակերպությունների ծրագրերը Հայաստանի Հանրապետության տարածքում ընդունման և տարածման կարգի ու պայմանների մասին»¹³, նույն թվականի օգոստոսի 29-ին երկու երկրների կառավարությունների կողմից կնքված «Տեղեկատվական մշակութային կենտրոնների հիմնման և գործունեության պայմանների մասին»¹⁴, 2000 թ. սեպտեմբերի 25-ին ստորագրված «ՀՀ-ում ՌԴ զանգվածային լրատվության միջոցների թղթակիցների և ՌԴ-ում ՀՀ զանգվածային լրատվության միջոցների թղթակիցների կարգավիճակի մասին»¹⁵ միջկառավարական համաձայնագրերը, ՀՀ կառավարությանն առընթեր տեղեկատվության և գրահրատարակչության վարչության և ՌԴ մամուլի, հեռուստառադիոհեռարձակման և զանգվածային հաղորդակցության միջոցների գործերի նախարարության միջև 2001 թ. նոյեմբերի 16-ին ստորագրված «Գրահրատարակչու-

¹³ Տե՛ս Ռուսաստան-Հայաստան ընկերություն, ստուգված դարեր շարունակ 2017, 100-101:

¹⁴ Տե՛ս ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1996-1998 թթ. 2002, 415-419:

¹⁵ Տե՛ս ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1999-2001 թթ. 2002, 246-248:

թյան, գրատարածման, տպագիր ԶԼՄ-ների և պոլիգրաֆիայի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը¹⁶: Տեղեկատվական բնագավառում նման իրավական համապարփակ դաշտի ստեղծումը տվյալ ոլորտում արդյունավետ համագործակցության զարգացման ծանրակշիռ հիմք դարձավ: Դրանում ՌԴ շահագրգռվածությունը հիմնականում բխում էր Հայաստանի մշակութատեղեկատվական դաշտում ռուսաց լեզվի դիրքերի պահպանման և ամրապնդման տեսանկյունից, ինչին մեծապես նպաստում էր ռուսալեզու ԶԼՄ-ների ազատ գործունեությունը: Հանրապետությունում վերոնշյալ ստորագրված համաձայնագրերի շնորհիվ քննվող ժամանակաշրջանում Հայաստանի տարածքում սփռվում էին «OPT-СНГ», «РТР-Планета», «Культура» և «Мир» հեռուստաալիքների ծրագրերը: Կաբելային հեռուստատեսությամբ հեռարձակվում էին ռուսաստանյան գրեթե բոլոր ալիքները, որոնք մեծ պահանջարկ էին վայելում: Հայաստանում 2009 թ. անցկացվեցին Ռուսաստանյան հեռուստատեսության օրեր: Այդ ընթացքում մի կողմից՝ «Հեռուստատեսության ռուսաստանյան ակադեմիա» հիմադրամի, իսկ մյուս կողմից՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի, «Հայկական երկրորդ հեռուստաալիք», «Շանթ հեռուստաընկերություն» և «Արմենիա TV» ԲԲԸ-ների միջև ստորագրվեց համագործակցության մասին հուշագիր¹⁷: Հանրապետության ռադիոէթերում իրենց ուրույն տեղն ունեին մի շարք ռուսաստանյան ռադիո-

¹⁶ Տե՛ս ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1999-2001 թթ. 2002, 386-389:

¹⁷ Տե՛ս Григорян 2018, 94-95:

կայաններ: Որոշ հայկական ռադիոհեռուստատեսային ընկերություններում առկա էին ռուսալեզու խմբագրություններ:

Միաժամանակ, Մոսկվայում և Երևանում հիմնվեցին թղթակցային կետեր: Հայաստանի տեղեկատվական դաշտում ներկա էին «Новости–Армения» գործակալությունը հիմնած РАМИ «РИА «Новости», ИТАР-ТАСС, «Регнум», «Интерфакс» և այլ տեղեկատվական գործակալություններ: Հանրապետությունում տեղական ներդիրներով հրատարակվում էին «Комсомольская правда», «МК Арабат», «Аргументы недели», «Аргументы и факты» թերթերի տարածաշրջանային մեկնակերպերը: Սակայն, ըստ ՌԴ ԱԳՆ-ի, ընդհանուր առմամբ, այստեղ ռուսական պարբերականները թույլ էին ներկայացված¹⁸: ՀՀ-ում 2000-ականներին հրատարակվում էր 9 ռուսալեզու թերթ և 1 ամսագիր, բայց աստիճանաբար պարբերականների բաժանորդների թվաքանակը կրճատվում էր: Ընդ որում, ոչ միայն ռուսալեզու, ինչը պայմանավորված էր թե՛ ընթերցողների նյութական միջոցների սղությամբ, և թե այլընտրանքային համացանցային հրատարակությունների առկայությամբ¹⁹:

ՌԴ տարածքում հայկական ՋԼՄ-ներից տարածվում էին «Республика Армения» թերթը և «Голос Армении» պարբերականի լրաքաղը²⁰: Ռուսաստանում հրատարակվում էին նաև մի շարք հայկական ռուսալեզու թերթեր ու պարբերականներ: Սակայն, ՌԴ-ում հայալեզու թերթերը և ամսագրերը, ռադիո ու

¹⁸ St' u Из доклада Министерства Иностранных дел Российской Федерации «Русский язык в мире», www.mid.ru:

¹⁹ St' u МИД России о борьбе и гибели русских СМИ в странах бывшего СССР 2010:

²⁰ St' u Հետխորհրդային երկրների հայկական համայնքների ինքնության խնդիրները և տեղեկատվական ռեսուրսները 2010, 164-169:

հեռուստահաղորդումները, սակավության և եղածների ոչ բարձր որակի պատճառով, շոշափելի ազդեցություն չէին թողնում տեղի հայերի ազգային նկարագրի պահպանման ու զարգացման վրա: Այդ տեսանկյունից հրատապ էր ռուսաստանյան տեղեկատվական հարթակում Հայաստանի պատշաճ մակարդակով ներկայացվածության ընդլայնումը:

Քննվող ժամանակաշրջանում կանոնավոր բնույթ ստացան երկու երկրների ՋԼՄ ներկայացուցիչների անմիջական շփումները, որոնք դրսևորվում էին փոխայցելություններով, համատեղ սեմինարների կազմակերպմամբ, տեղեկատվական նախագծերի մշակմամբ ու իրականացմամբ և այլն: Դրանք հանգեցրին երկու կողմերի զանգվածային լրատվամիջոցներում Հայաստանի ու Ռուսաստանի հիմնականում սոցիալ-տնտեսական կացությանը, քաղաքական իրադարձություններին, մշակութային կյանքին, ինչպես նաև պատմության էջերին և ժողովուրդների դարավոր բարեկամությանն ու ազգային արժեքներին առնչվող հարցերի պարբերաբար լուսաբանմանը:

Սակայն, տեղեկատվության բնագավառում հայ-ռուսական փոխգործակցությունում առկա էր դեռևս չօգտագործված ներուժ: Մասնավորապես, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի, որի կարևորագույն դերակատարներից էր Ռուսաստանը, ՀՀ-ում և ՌԴ-ում առկա սոցիալ-տնտեսական խնդիրների, երկկողմ տնտեսական նախագծերի իրականացման և նման այլ հարցերի ոչ բավարար լուսաբանման ֆոնի վրա՝ ՋԼՄ-ներն առավելապես անդրադառնում էին երկու երկրներում տեղի ունեցող պաշտոնական իրադարձություններին: Մինչդեռ, արդիական էր դարձել հատկապես ՀՀ և ՌԴ միջև փոխհարաբերություններին առնչվող առանցքային

խնդիրների հնարավորինս համակողմանի ու մատչելի ներկայացումը: Դա երկու երկրների հանրություններին հնարավորություն կտար առավել օբյեկտիվ պատկերացնելու հայ-ռուսական ռազմավարական գործընկերության խորացման անհրաժեշտությունը:

Հոգևոր առնչությունները

Հայ-ռուսական հոգևոր առնչությունների ծավալման կարևորագույն բաղադրիչներից էր Հայ առաքելական և Ռուս ուղղափառ քույր եկեղեցիների բազմադարյան փոխհարաբերությունների զարգացումը: Քննվող ժամանակաշրջանում ՌԴ տարածքում գործում էր շուրջ 40 հայկական եկեղեցի: Հայ առաքելական եկեղեցին Ռուսաստանում ուներ երկու թեմ՝ Ռուսաստանի և Նոր Նախիջևանի ու Հարավային Ռուսաստանի²¹: Մոսկվան 1996 թ. դարձավ Հայ առաքելական եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի կենտրոնը, որը ներառում էր 40-ից ավելի ծխական համայնք, այդ թվում, 27-ը՝ ՌԴ տարածքում (թեմի մեջ մտնում էին նաև Հայ առաքելական եկեղեցու Մոլդովայի, Բելառուսի, Լատվիայի և Ուզբեկստանի ծխական համայնքները): Նույն թվականին Մոսկվայի կենտրոնում սկսվեցին հայկական եկեղեցական համալիրի շինարարական աշխատանքները: Այդ համալիրի բացման արարողությունը տեղի ունեցավ 2013 թ. սեպտեմբերի 17-ին՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի գլխավորությամբ ու Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Կիրիլ Ա-ի մասնակցությամբ: Մոսկվայի հայկական տաճարային համալիրը Հայ առաքելա-

²¹ Տե՛ս Ծրագիր ԱՊՀ տարածաշրջանի Հայ համայնքների կրթամշակութային խնդիրների լուծմանն օժանդակության 2015, 2:

կան եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդանիստն է: Այն ներկայումս Հայ առաքելական եկեղեցու Ռուսաստանում գլխավոր կենտրոնն է և Հայաստանից դուրս գտնվող հայկական ամենամեծ կրոնական համալիրը:

Հայաստանի տարածքում գործում էր Ռուս ուղղափառ 5 եկեղեցի, որոնցից 2-ը՝ Երևանում, 2-ը՝ Գյումրիում և 1-ը՝ Վանաձորում: 2010 թ. մարտի երկրորդ տասնօրյակում պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Կիրիլ Ա-ն Երևանում, Գարեգին Բ-ի աղոթակցությամբ, կատարեց Ռուս ուղղափառ եկեղեցու հիմնարկեքի արարողությունը: Այդ այցի շրջանակներում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Հայ առաքելական և Ռուս ուղղափառ եկեղեցիների առաջնորդները ստորագրեցին համատեղ հայտարարություն, որում մեծ նշանակություն էր տրվում երկու եկեղեցիների միջև հաղորդակցության զարգացմանը: Հայտարարության մեջ առանձնահատուկ շեշտվում էր նաև աստվածաբանական, եկեղեցական, հովվական և հասարակական կյանքին վերաբերող հարցերի շուրջ համատեղ քննարկումների ու երկխոսությունների շարունակականության անհրաժեշտությունը²²: Այդ տեսանկյունից հատկանշական էր, որ նման համատեղ քննարկումների սկիզբը դրվել էր դեռևս 2001 թ. փետրվարի կեսին, երբ Գարեգին Բ-ի ու Մոսկվայի և Համայն Ռուսիո նախորդ պատրիարք Ալեքսիյ Բ-ի նախաձեռնությամբ ու օրհնությամբ՝ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցած հանդիպման ժամանակ քննարկվեցին հասարակական նշանակություն ունեցող խնդիրներ: Համատեղ քննարկումների երկրորդ հանդիպումը կայացավ 2008 թ. փետրվարի սկզբներին՝

²² Տե՛ս <https://armenpress.am/arm/> 2010, 18 մարտի (մուտք՝ 15.08.2022):

դարձյալ Սուրբ Էջմիածնում²³:

Կանոնավոր բնույթ էին կրում նաև միջկրոնական տարբեր խորհուրդների և համաժողովների շրջանակներում երկու եկեղեցիների առաջնորդների շփումները, ինչպես նաև Ռուս ուղղափառ եկեղեցու նախաձեռնությամբ՝ պարբերաբար կազմակերպվող Հարավային Կովկասի հոգևոր առաջնորդների եռակողմ և քառակողմ հանդիպումները: Դրանք միտված էին տարածաշրջանում խաղաղության հաստատմանը:

Հատկանշական էր, որ 2021 թ. հոկտեմբերին Ռուս ուղղափառ եկեղեցու Սինոդը որոշում ընդունեց ՀՀ տարածքում՝ Երևանում, աթոռանիստով թեմ ստեղծելու վերաբերյալ: Մինչ այդ, Հայաստանում Ռուս ուղղափառ եկեղեցու թեմ երբևիցե գոյություն չէր ունեցել, այլ սուսկ առկա էին ծխական համայնքներ: Հայաստանյայց առաքելական եկեղեցին ողջունեց Ռուս ուղղափառ եկեղեցու թեմի հիմնումը ՀՀ-ում: Սակայն, հանրապետության հասարակայնության որոշ շրջանների ներկայացուցիչներ Սինոդի վերոնշյալ որոշման հիմքում կրոնականից զատ քաղաքական դրդապատճառներ էին տեսնում: Ըստ նրանց, քանի որ ուղղափառները Հայաստանում շատ փոքրաքանակ էին, ուստի, ՀՀ-ում արքեպիսկոպոսական մակարդակով Ռուս ուղղափառ եկեղեցու ներկայացուցչության հիմնումը պայմանավորված չէր կրոնական խնդրով, այլ հիմնականում Կրեմլից Երևանի կախվածության մեծացման հետևանք էր: Նրանց կարծիքով՝ այդ էին վկայում նաև Հայաստանում ռուսական դպրոցների վերաբացման մասին մոսկովյան բարձ-

²³ Տե՛ս <https://armenpress.am/arm/> 2008, 8 փետրվարի (մուտք՝ 15.08.2022):

րաստիճան պաշտոնյաների կողմից ավելի ու ավելի հաճախ հնչող հայտարարությունները²⁴:

Չնայած այս ամենին, ըստ էության, Հայ առաքելական և Ռուս ուղղափառ քույր եկեղեցիներն առաջնորդվելով դարավոր ավանդույթներով, 1990-2000-ականներին իրենց զգալի նպաստն էին բերում երկու բարեկամ ժողովուրդների հոգևոր-մշակութային կապերի ամրապնդման ու զարգացման գործին:

Եզրակացություններ

Այսպիսով, Խորհրդային Միության փլուզմամբ պայմանավորված՝ հայ-ռուսական հարաբերությունների զարգացման մեջ առաջացած որոշակի դադարից հետո, ուսումնասիրվող ժամանակաշրջանում Հայաստանի և Ռուսաստանի միջև աստիճանաբար սկսեց վերականգնվել ու ընդլայնվել բազմակողմ հումանիտար փոխգործակցությունը: Այն մասնավորապես ընդգրկում էր նաև գիտության, տեղեկատվական և հոգևոր-եկեղեցական ոլորտները, որոնք երկու երկրների ռազմավարական դաշնակցային հարաբերությունների ամրապնդման կարևորագույն բաղադրիչներից էին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ազիզբեկյան Ռ. 2022, ՀՀ և ՌԴ միջև կրթամշակութային կապերի զարգացումը 1991-2008 թթ., «Հայոց պատմության հարցեր», №1(24), էջ 165-187:

Ծրագիր ԱՊՀ տարածաշրջանի Հայ համայնքների կրթամշա-

²⁴ Տե՛ս <https://www.azatutyun.am/a/31519461.html> Հայաստանյայց առաքելական եկեղեցին ողջունում է Ռուս ուղղափառ եկեղեցու թեմի հիմնումը Հայաստանում 2021, 19 հոկտեմբերի (մուտք՝ 17.08.2022):

կութային խնդիրների լուծմանն օժանդակության 2015: Հավելված №1 ՀՀ կառավարության 2015 թ. փետրվարի 26-ի նիստի №8 արձանագրային որոշման, 8 էջ:

Հետխորհրդային երկրների հայկական համայնքների ինքնության խնդիրները և տեղեկատվական ռեսուրսները, Ռուսաստանի Դաշնություն, Հայկական լրատվամիջոցները 2010, Երևան, ՀՀ սփյուռքի նախարարություն, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, 251 էջ:

ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995 թթ. 2002, ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր, հրատարակության 1-ին տարի №1 (1) 12 հունիսի, 731 էջ:

ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1996-1998 թթ. 2002, ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր, հրատարակության 1-ին տարի, №2 (2), 12 հունիսի, 601 էջ:

ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1999-2001 թթ. 2002, ՀՀ արտաքին գործերի նախարարության պաշտոնական տեղեկագիր, հրատարակության 1-ին տարի №3 (3), 12 հունիսի, 413 էջ:

Հովյան Վ. 2015, Հետխորհրդային երկրների հայագիտական կենտրոնները, «Գլոբուս» վերլուծական հանդես, №1, noravank.am/arm/journals/details.php?ELEMENT_ID=13161 (մուտք՝ 16.02.2015):

Ռուսաստան – Հայաստան ընկերություն, ստուգված դարեր շարունակ. Պատմական և վավերագրական ցուցահանդեսի գրացուցակ, 2017, Մոսկվա, 247 էջ:

Армения в диалоге цивилизаций, 2011, Материалы международной научной конференции, 28 апреля 2011 г., Нижний Новгород, 208 с.

Асатрян Ю.С., Колобов О.А., Корнилов А.А. 2010, Геополитика Армении на Кавказе: генезис, историческая эволюция, перспективы, Н.Новгород-Саров, изд-во СГТ, 228 с.

Григорян Г. 2018, Гуманитарное измерение армяно-российских отношений «Россия и новые государства Евразии», Национальный исследовательский институт мировой экономики и международных отношений им. Е.М. Примакова, №1(38), с. 82-105.

Егиазарян А.О., Корнилов А.А. 2010, Армянские общины в странах Ближнего Востока: история, идентичность, институты, Н.Новгород-Саров; изд-во СГТ, 139 с.

Из доклада Министерства Иностранных дел Российской Федерации «Русский язык в мире», Москва, www.mid.ru.

Колобов О.А., Корнилов А.А., Симонян А.Г. 2001, Российско-армянские отношения, Исторический опыт, стратегические вызовы и перспективы развития, Н.Новгород-Ереван, ИСИ ННГУ, 160 с.

МИД России о борьбе и гибели русских СМИ в странах бывшего СССР; Армения, Ереван, 2010, 10 августа, REGNUM, <https://regnum.ru>.

Освещение общей истории России и народов постсоветских стран в школьных учебниках истории новых независимых государств, Москва, 2009, Государственный клуб, 389 с.

Проблемы и перспективы внешней политики Республики Армения и Спюрка, 2009, Материалы международной научной конференции, Нижний Новгород, 72 с.

Российско-армянское гуманитарное сотрудничество, 2011, справ-
ка ДИП МИД РФ, 12-10, архив МИД РФ, archive.mid.ru.
sci.am/about.php?langid=1; armenpress.am/arm/2010, 18 մարտի;
armenpress.am/arm/2008, 8 փետրվարի.

Հայաստանյայց առաքելական եկեղեցին ողջունում է Ռուս
ուղղափառ եկեղեցու թեմի հիմնումը Հայաստանում,
azatutyun.am/arm/: 2021, 19 հոկտեմբերի:

**Рубен Л. Азизбемян, *Институт истории НАН РА, к.и.н.,
доцент, Армяно-российское взаимодействие в гуманитарной и
духовной сферах в 1991-2008 гг.***

Резюме

На современном этапе успех каждой страны и ее междуна-
родная репутация во многом зависят не только от ее военного
потенциала или привлекательности предлагаемых моделей эконо-
мического сотрудничества, но и от комплекса факторов гума-
нитарного и духовного характера, включающих интенсивность и
системность соответствующих контактов.

В этом отношении в исследуемый период в развитии ар-
мяно-российских многосторонних связей важную роль играло
взаимодействие двух стран в гуманитарной и духовной сферах,
которое, в частности, охватывало, как области науки и ин-
формации, так и межцерковные взаимоотношения. Оно проявля-
лось в восстановлении и дальнейшем расширении традиционных
научно-технических связей, приведшим к воссозданию сов-
местных научных центров и лабораторий, а также в реализации

практических шагов направленных на эффективное взаимное информационное присутствие сторон в Армении и в России.

Регулярное общение представителей СМИ двух государств проявлялось в взаимных визитах, организованных совместно семинарах, разработанных и реализованных информационных проектах и т.п., а также в неизменном развитии многовековых связей между Армянской Апостольской и Русской Православной.

Все это имело большое значение для сторон, поскольку гуманитарный блок являлся одним из важнейших компонентов укрепления стратегических союзнических отношений между Арменией и Россией.

Ключевые слова: Армения, гуманитарный, духовный, информационный, научный, церковные связи, Россия, сферы сотрудничества.

Ruben L. Azizbekyan, *Institute of History at National Academy of Sciences of Armenia, PhD in History, Associate Professor, Armenian-Russian interaction in the humanitarian and spiritual spheres in 1991-2008.*

Summary

At the present stage, the success of each country and its international reputation largely depend not only on its military potential or the attractiveness of the proposed models of economic cooperation but also on a complex of humanitarian and spiritual factors including the intensity and consistency of contacts.

In this regard, during the studied period, the interaction of the two countries in the humanitarian and spiritual spheres played an essential role in the development of the Armenian-Russian multifaceted contacts, which covered both the fields of science and information and inter-church relations. It manifested itself in the restoration and further expansion of traditional scientific and technical ties, which led to the re-establishment of joint scientific centers and laboratories; the implementation of practical steps aimed at the effective mutual information presence of both sides in Armenia and Russia, regular communications between the mass media representatives of the two states, which, in particular, were expressed by mutual visits, jointly organized seminars, developed and implemented information projects, etc. This interaction was also reflected in the constant development of centuries-old ties between the Armenian Apostolic and Russian Orthodox Churches.

All of this was of great importance to the parties since the humanitarian bloc was one of the crucial components of strengthening the strategic allied relations between Armenia and Russia.

Keywords: Armenia, humanitarian, information, inter-church, scientific, spiritual relations, Russia, cooperation spheres.

ՀՐԱՄԻՆ Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԵՊՀ պատմության ֆակուլտետ
vardanyanhratsin@gmail.com

**«ՄՓՅՈՒՌՔ» ՀԱՄԿԱՅՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ,
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ
ՄՓՅՈՒՌՔԻ ՊԱՐԱԳԱՆ***

*Բանալի բառեր*¹ ազգային պետություն, էթնիկ խումբ, ինքնություն, համայնք, հայկական սփյուռք, հարացույց, պետական սահման, սփյուռքի սահմանում, տեսություն, քաղաքակրթական հեռանկար:

Ներածություն

1980-ականների վերջից և, հատկապես, 1990-ականների սկզբից սկսած աշխարհի տարբեր երկրներում կտրուկ աճել է «սփյուռք» երևույթի նկատմամբ գիտական շրջանակների հետաքրքրությունը: Արվել են լայնածավալ տեսական և փորձնական ուսումնասիրություններ: Ակնհայտորեն, հետաքրքրության նման աճի հիմնական պատճառները պայմանավորված են նրանով, որ սփյուռքներն թե՛ հայրենի և ընդունող պետությունների հետ հարաբերություններում, այնպես էլ եռակողմ հարաբերություններում կարող են ունենալ զգալի դերակատարում: Նշանակալի է նաև արդի աշխարհում սփյուռքների տնտեսական, սոցիալական և մշակութային ազդեցության աճը:

Եթե մինչև 1980-ականների ավարտը կատարվում էին հիմնականում հրեական, հայկական, հունական և այլ սփյուռք-

* Ներկայացվել է 5.X.2022 թ., գրախոսվել է 11.XI.2022 թ., ընդունվել է տպագրության 15.XII.2022 թ.:

ների պատմությանը, համայնքներին, հայրենիքի հետ նրանց հարաբերություններին նվիրված ուսումնասիրություններ, ապա 1980-ականների վերջից գիտության մեջ նոր էր սփյուռքի վերաբերյալ տեսական միտքը, տեսաբանումը, որի ելակետային հարցերից է «սփյուռք» եզրույթի սահմանումը, այն՝ թե հայրենիքից դուրս բնակություն հաստատած տարաբնույթ խմբերից որոնք կարելի է համարել սփյուռք, որոնք՝ ոչ: Թեև հայկական սփյուռքն այս առումով գիտական բանավեճի առարկա չէ և մշտապես դիտարկվում է իբրև «դասական» կամ «հին» սփյուռքի օրինակ, նրա պարագայում ևս սփյուռքի տեսության դիտանկյունից առկա են ուշադրության արժանի որոշ հարցեր, որոնց կանդրադառնանք ստորև:

«Սփյուռք» հղացքի իմաստաբանական փոփոխությունները

1965 թ. հետո մի շարք դիսկուրսիվ և արտադիսկուրսիվ գործոններ¹ աշխարհում և, մասնավորապես, արևմտյան ակադեմիական շրջանակներում, փոխել են «սփյուռք» հասկացության իմաստաբանական տիրույթի ընդգրկումը, որպես սփյուռք ներկայացվող խմբերի շարքն ու բազմազանությունը: «Սփյուռքը», որպես եզրույթ, ենթարկվել է իմաստային ընդլայնման: Եթե նախկինում այն կիրառվում էր հիմնականում հրեաների, հայերի և հույների վերաբերյալ, ապա ներկայումս առկա է միտում՝ այդ բառով բնութագրելու հայրենիքից կամ ծագման երկրից դուրս հաստատված յուրաքանչյուր նմանատիպ խմբի: Այսօր «սփյուռքը» կիրառվում է նվազագույնը երեք տասնյակ ցրոնքների (dispersions) և անդրազգային (transnational) համայնքների համար՝ ընդգրկելով այնպիսի հասկացություններ,

¹ Նշված գործոնների վերաբերյալ մանրամասն տե՛ս Վարդանյան 2016, 95-108:

ինչպիսիք են ներգաղթյալ (immigrant), վտարանդի (expatriate), փախստական (refugee), հյուր աշխատող (guestworker), արքային համայնք (exile community), անդրծովյա համայնք (overseas community), էթնիկական համայնք և այլն²: Փոխվել է նաև սփյուռք հասկացության՝ տեղահանության և կորստի հետ զուգորդող բացասական երանգավորումը և այն առավելապես դիտվում է որպես ուժի ու հնարավորության աղբյուր:

Նախատիպային համարվող հրեական սփյուռքի պարագայում սփյուռքի գաղափարը կապված է Աստվածաշնչի Երկրորդ Օրինաց գրքում (28:28) առկա նախազուշացման հետ՝ Աստծո կամքին չենթարկվելու դեպքում հրեաներին աշխարհով մեկ սփռելու վերաբերյալ: Եբրայերենում կա ևս երկու բառ՝ *gôla* և *galût*, որոնք նշանակում են «վտարում» և «արքայ»: Ժամանակակից եբրայերենում *diaspora*-ն, հենց հրեական սփյուռք իմաստով, արտահայտվում է *galût* բառով, որում ակնհայտորեն առկա է բացասական երանգ՝ «արտաքսում»³: Այն բնիկ սեմական բառ է, որի պարզ արմատն է *gala*՝ «բնակիչներին վտարելով երկիրը դատարկել» իմաստով (եբրայերեն՝ *galut* «արքայ տարվելը, արքայականներ, գաղթականներ»)⁴:

Հին Հունաստանում «սփյուռք» բառով (*διασπορά*) բնութագրվում էր իշխող քաղաք-պետության քաղաքացիների տեղաշարժը հայրենի երկրից՝ կողոպուտի և ռազմական նվաճման միջոցով գրավյալ տարածքներն ընդարձակելու ու տեղի բնակչությանը ձուլելու նպատակով⁵:

² Տե՛ս Tölölyan 1991, 3-7, նաև՝ Tölölyan 1996, 3-36:

³ Տե՛ս Милитарев 1999, 24-33:

⁴ Աճառյան 1971, 505:

⁵ Տե՛ս Բեժանյան 2013, 211-227:

1980-ականների վերջից, երբ սկսեցին հրապարակվել սփյուռքի վերաբերյալ տեսական ուսումնասիրություններ, որոնցում քննվող առանցքային հարցերից էր «սփյուռք» եզրույթի սահմանումը, ամերիկացի քաղաքագետ Վ. Քոննորը «սփյուռքի» առաջին սահմանումներից մեկը տվեց հետևյալ կերպ՝ *մարդկանց այն հատվածը, որն ապրում է հայրենիքի սահմաններից դուրս*⁶: Այս սահմանումը, որը շատ լայն է և ընդգրկում է հայրենիքից կամ ծագման երկրից դուրս ապրող մարդկանց ամենատարբեր խմբեր, սփյուռքի մի շարք տեսաբաններ՝ Վ. Սաֆրանը, Ռ. Քոհենը, Գ. Շեֆֆերը, Խ. Թոլլյանը և ուրիշներ, չեն ընդունում: Նրանք, սփյուռքի սահմանման համար առաջարկում են որոշակի բնութագրիչներից բաղկացած հարացույցներ, միայն որոնց համապատասխանելու դեպքում, համարում են, որ տվյալ խումբը կարող է սփյուռք համարվել:

Պետք է շեշտել, որ «սփյուռք» եզրույթի այսպիսի սահմանափակ կիրառության կողմնակից տեսաբանները սփյուռքը սահմանելու համար բնութագրիչներ թվարկելիս դրանք ածանցում են «հին» սփյուռքներից, որոնց թվում է նաև հայկական սփյուռքը:

Մասնավորապես, սփյուռքի տեսաբան, ամերիկացի սոցիոլոգ Ռ. Քոհենի մոտեցմամբ, սփյուռքը սահմանելիս պետք է նկատի առնվեն հետևյալ իրողությունները.

1. Սփյուռք հասկացությունը պետք է ներառի ոչ միայն ցավագին (տրավմատիկ) իրադարձությունների, հալածանքների, այլև կամավորապես՝ աշխատանքային, կայսերական և առևտրային շահեր հետապնդելու արդյունքում հայրենիքից հեռացած խմբերին:

⁶ Տե՛ս Connor 1986, 16-46:

2. Էթնիկ, ազգային և անդրազգային ինքնությունների միջև եղած հակադրումները կարող են հանգեցնել առավել կառուցողական և ստեղծարար զարգացումների: Օտար պետության մեջ ապրելու իրողությունն առաջացնում է որոշակի բարդություններ, որոնք կարող են մոտիվացնել սփյուռքին և մղել ստեղծարարության: Էթնիկ համայնքի ներկայացուցիչները կարող են, օր., ընդունող երկրում մեծ ձեռքբերումներ ունենալ գիտության, մշակույթի, տնտեսության և այլ ոլորտներում:

3. Սփյուռքը հավաքական ինքնություն է ձևավորում ոչ միայն բնակության վայրում կամ հայրենիքում ապրողների, այլև սովյալ էթնիկ խմբի՝ այլ երկրներում ապրող ներկայացուցիչների հետ:

4. «Սփյուռք» հասկացությունը կարող է օգտագործվել անդրազգային կապերը նկարագրելու համար, նույնիսկ, եթե հայրենիքի, պատմական տարածքի գաղափարը շատ ամուր չէ: Այնպիսի գլոբալ դարաշրջանում, երբ տարածություն ասելով նկատի է առնվում նաև կիբերտարածությունը, սփյուռքը կարող է ձևավորվել երևակայապես՝ մշակույթի, արտեֆակտների, ընդհանուր պատկերացումների միջոցով: Սա վերաբերում է այն խմբերին, որոնք ենթարկվել են բազմակի տեղահանումների և նրանց համար հայրենիքը բոլոր գործնական առումներով կորցրել է նշանակությունը⁷:

Հիմնվելով վերոնշյալ դիտարկումների, ինչպես նաև Խ. Թոլոյանի և Գ. Շեֆֆերի տեսական ընդհանրացումների վրա՝ Ռ. Քոհենն առաջարկել է սփյուռքի սահմանման հետևյալ հարացույցը՝

⁷ Տե՛ս Cohen 2008, 6-8:

1. ծագման երկրից սփռում դեպի երկու կամ ավելի օտար երկրներ՝ հիմնականում աղետի հետևանքով,

2. սփռում աշխատանքի, առևտրային, գաղութատիրական նպատակներով,

3. հայրենիքի մասին հավաքական հիշողություն կամ միջ՝ ներառյալ նրա տեղակայումը, պատմությունը և նվաճումները,

4. նախնիների ենթադրյալ հայրենիքի իդեալականացում կամ կոլեկտիվ հանձնառություն նրա պահպանման, վերականգնման, անվտանգության, բարեկեցության և, նույնիսկ, նրա ստեղծման համար,

5. վերադարձի շարժման զարգացում, որը հավաքական հավանության է արժանանում,

6. էթնիկական խմբին պատկանելու ուժեղ գիտակցություն, որը երկար ժամանակ պահպանվել է և հիմնված է սեփական առանձնահատկության զգացողության, ընդհանուր պատմություն և ճակատագրի նկատմամբ հավատի վրա,

7. ընդունող հասարակությունների հետ ոչ ներդաշնակ հարաբերություններ, ինչը ենթադրում է առնվազն ընդունված լինելու պակաս կամ հավանականություն, որ խմբին կարող է մեկ այլ աղետ պատահել,

8. կարեկցանքի և համերաշխության զգացում բնակության երկրներում ապրող տվյալ էթնիկ խմբի ներկայացուցիչների միջև,

9. բազմակարծության հանդեպ հանդուրժողականության շնորհիվ ստեղծագործական, բարգավաճ կյանքի հնարավորություն ընդունող երկրներում⁸:

⁸ Տե՛ս Cohen 2008, 17:

Ինչպես նկատելի է, Ռ. Քոհենի՝ սփյուռքի սահմանման հարացույցի բոլոր կետերը բնորոշ են հայկական սփյուռքին կամ, ինչպես ընդունված է ասել՝ սփյուռքագիտական ուսումնասիրություններում. այն սփյուռքի տիպական կամ հարացուցային օրինակ է:

Այսպիսով, թեև մի շարք տեսաբաններ փորձում են «սփյուռք» եզրույթին տալ հստակ սահմանում և այդ կերպ՝ սահմանափակ կիրառություն, այն սկսել է կիրառվել հայրենիքից դուրս բնակվող տարաբնույթ խմբերի վերաբերյալ: Սա մեծապես պայմանավորված է նրանով, որ ներկայումս, միգրացիոն հոսքերի աճի հետևանքով, աշխարհում աստիճանաբար ավելանում է այն մարդկանց թիվը, որոնք բնակվում են իրենց հայրենիքից դուրս: Սփյուռքի իմաստաբանական և հայեցակարգային փոփոխությունը դրսևորվում է նրանով, որ այն այլևս չի գուգորդվում տկարության, կորստի, հայրենագրկման հետ, քանզի ժամանակակից աշխարհում սփյուռքները՝ տիրապետելով զգալի տնտեսական, քաղաքական, մշակութային ներուժի, էլիտաների կողմից համապատասխան ուղղորդումների դեպքում գործնականում ունակ են փոխակերպելու հարաբերություններն ուժի, տեղի և ինքնության միջև:

Վերջին մի քանի տասնամյակների պատմական գործընթացները, քաղաքական իրադարձությունները, հայրենիքից դուրս ապրող բազմաթիվ ազգերի քաղաքական և մտավորական վերնախավի ներկայացուցիչների մղել են ներկայանալու որպես սփյուռք: Այլ կերպ ասած՝ սփյուռքյան կերպարը, կեցվածքը քաղաքականություն մշակողների համար դիտվում է իբրև հայրենի պետությունից (ծագման երկրից) դուրս որոշակի

համազգային շահերի և նպատակների հետապնդման արդյունավետ ուղի:

«Միյուռք» հասկացությունը հայկական սփյուռքի պատմության համատեքստում

Ինչպես նշվեց, սփյուռքի վերաբերյալ տեսական ուսումնասիրություններում հայկական սփյուռքը, որպես կանոն, հիշատակվում է որպես հնագույն, «դասական» սփյուռքներից մեկը:

Հայտնի է, որ հայ գաղթաշխարհը սկսել է ձևավորվել վաղ միջնադարում օտար նվաճողների իրականացրած բռնագաղթերի և դրանց զուգահեռ օտար տիրապետության պայմաններում ստեղծված ծանր կենսապայմանների պատճառով արտագաղթի հետևանքով⁹: Դեռևս III-IV դ., Սասանյան Արտաշիր I և Շապուհ II արքաների օրոք, տեղի են ունեցել հայ բնակչության առաջին զանգվածային բռնագաղթերը դեպի Իրան¹⁰: Սկսած IV դ. վերջից մինչև XIII դ.՝ հայ բնակչության մեծաթիվ զանգվածներ գաղթել են Բյուզանդիա¹¹: Հայ ազնվականության և զինվորականության շարունակական արտագաղթի հետևանքով բյուզանդական պետական համակարգի տարբեր օղակներում կարելի է տեսնել կառավարիչների, դիվանագետների, բարձրաստիճան զինվորականների, նույնիսկ՝ ծագումով հայ կայսրերի, երբ իշխում էր մակեդոնական կամ հայկական կոչվող դինաստիան¹²:

VII-XV դդ. արաբների, սելջուկների, մոնղոլների և այլ արշավանքների հետևանքով հայերը գաղթում էին Ասորիք,

⁹ Տե՛ս Եղիազարյան 2013, 3-22:

¹⁰ Տե՛ս Աբրահամյան 1964, 17-26:

¹¹ Տե՛ս Աբրահամյան 1964, 30:

¹² Տե՛ս Աբրահամյան 1964, 55-56, նաև՝ Եղիազարյան 2013, 3-22:

Միջագետք, Ղրիմ, Ռուսինիա, Լեհաստան, Հունգարիա, Բուլղարիա, Կիևյան Ռուսիա, Փոքր Ասիայի ծովամերձ շրջաններ՝ ձևավորելով հայկական համայնքներ¹³:

Ընդհանուր առմամբ, սփռման առաջին խոշոր շրջանը կարելի է համարել 1045-1453 թթ., երբ երկրի ավերումից ու Բագրատունյաց հայկական պետության կործանումից հետո փախուստի դիմած հայությունը հաստատվում էր երկու շրջաններում՝ Սև ծովի (ներկայիս Ուկրաինա ու Հարավային Լեհաստան) և Կիլիկիայի: Առաջինում հիմնականում արհեստավորական և առևտրական համայնքներ էին՝ ենթակա տեղաբնիկ կառավարիչներին: Երկրորդում հաստատվել էր ազնվականության և բարձր հոգևորականության մեծ մասը՝ ենթակա բնակչության հետ միասին: Այն գերիշխանություն հաստատեց տեղի մասնատված ժողովուրդների նկատմամբ և պետություն հիմնեց: Ափամերձ շրջաններում հայության հաստատումը և ծովային ժողովուրդների հետ շփումը արագացրեց նրա վերնախավի ձևավորումն ու զարգացումը¹⁴:

1453-1604 թթ. կարելի է համարել Մերձավոր Արևելքի խոշոր կայսերական քաղաքներում հարմարակման շրջան: 1453 թ. Կ.Պոլիսը նվաճելուց հետո սուլթան Ֆաթիհ Մեհմեդի (1444-1446 թթ. և 1451-1481 թթ.) հրավերին՝ ուղղված տարբեր քրիստոնյա ժողովուրդների, նաև՝ հրեաների, բնակություն հաստատելու Օսմանյան կայսրության նոսր բնակեցված տարածքներում, արձագանքում են բազմաթիվ հայեր՝ Կիլիկիայից, Սևծովյան տարածաշրջանից (ներկայիս՝ Բուլղարիա, Ռուսինիա, Ղրիմ) և այլ վայրերից: Մուլթանական հրովարտակով հայ համայնքը

¹³ Տե՛ս Tölölyan 2005, 35-46, նաև՝ Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 7:

¹⁴ Տե՛ս Tölölyan 2000, 107-136:

դառնում է միլլեր¹⁵: 1603-1604 թթ. տասնյակ հազարավոր հայեր բռնի տեղահանվում և բնակություն են հաստատում Նոր Ջուղայում ու շուրջը հիմնված հայկական գյուղերում¹⁶:

1605-1784 թթ. հայկական առևտրային սփյուռքը ծաղկում է տարբեր երկրներում, մասնավորապես, Իրանում և Հնդկաստանում: Հայկական առևտրային կապիտալի պարտությունը ֆրանսիական, հոլանդական, հատկապես, բրիտանական կապիտալից, մշակութային համախմբման և ազգայնական գաղափարների ձևավորման ազդակ են դառնում: Այս առումով, նշանակալի էր Մադրասի ու Կալկաթայի մտավորականների և հայ կաթոլիկ Մխիթարյան միաբանների ներդրումը¹⁷:

1784-1923 թթ. աստիճանաբար ձևավորում է «միասնության» ավելի աշխարհիկ, լեզվական և ազգային տեսակը: Այն համալրում, ապա վիճարկում և, ի վերջո, փոխարինում է (առանց լիովին դուրս մղելու) նախկին համակարգին, որում առաջնային տեղը գրավում էր եկեղեցին: Առաջնորդող վերնախավի որոշ հատվածներ գաղթավայրերին մղում, պարտավորեցնում են հայրենիքի քաղաքական ազատագրմանը: Այդպիսի փորձերը ճնշվում են Օսմանյան Թուրքիայի, ինչպես նաև ցարական ու համայնավարական Ռուսաստանի կողմից: Օս-

¹⁵ «Միլլեր» արաբերեն է, նշանակում է ազգ, ազգություն: Օսմանյան կայսրությունում այն ուներ այլ իմաստ՝ մատնանշում էր մարդու դավանական և ազգային պատկանելությունը, մասնավորապես՝ ոչ-մուսուլման լինելը: Օսմանյան վարչական համակարգը բաղկացած էր երկու հիմնական բաժանումներից՝ տարածքային (պրովինցիա) և դավանական: Օսմանյան կայսրության ոչ մուսուլման բնակչությունը, որը XVI-րդ դարի կեսերին կազմում էր բնակչության 40%-ը, բաժանված էր դավանական երեք համայնքների՝ միլլերների՝ հույն-ուղղափառ, հայ-առաքելական և հրեա (տե՛ս Մակարյան 2016, 111-132):

¹⁶ Տե՛ս Tölölyan 2000, 107-136:

¹⁷ Տե՛ս Tölölyan 2000, 107-136:

մանյան պետությունը 1915-1923 թթ. իրականացնում է ցեղասպանություն, որից վերապրածների մի մասը միանում է ռուսական, իսկ հետո խորհրդային գերիշխանության տակ գտնվող իրենց ազգակիցներին, մյուսները՝ հաստատվում են արդեն գոյություն ունեցող հայկական համայնքներում, իսկ մի մասն էլ բնակվում է այնպիսի շրջաններում, որտեղ չկար նշանակալի հայ բնակչություն¹⁸:

1923-1965 թթ. ընթացքում Սփյուռքում հայկական ինքնությունը մնում է ազգային-աքսորային, քանի որ այդ ուղղությամբ սփյուռքյան հին և նոր վերնախավերի կողմից մեծ ջանքեր էին գործադրվում: Գաղթականների մի մասն աստիճանաբար գնում է դեպի ձուլում, մի մասը ձեռք է բերում էթնիկ խմբի կարգավիճակ: Մյուսները՝ կախված բնակավայրից, կա՛մ նախընտրում են մնալ, կա՛մ չեն ունենում այլընտրանք, քան մնալ անկլավներում (առանձնաթաղ), որտեղ ողջ քաղաքականությունը և մշակույթի մեծ մասը հիմնականում ուղղորդվում էր սփյուռքյան հաստատությունների կողմից: Բեյրութի Բուրջ Համուդ թաղամասն ամենաքիչ փոխակերպվածն է այսպիսի անկլավներից, թեև այն նույնպես Լիբանանի երկրորդ քաղաքացիական պատերազմից հետո սկսել է փոխվել¹⁹:

1965-1988 թթ. մարտահրավերների շրջան էր, քանզի Սփյուռքում տեղի ունեցող փոխակերպումները սկսում են վտանգել նախորդ շրջանի ձեռքբերումները, ազգային արժեքները, մասնավորապես՝ լեզվի պահպանության միջավայրը: Վերականգնվում են կապերը Խորհրդային Հայաստանի հետ: Սկիզբ է առնում սերունդների պայքար, որն արտահայտվում էր

¹⁸ Տե՛ս Tölölyan 2000, 107-136:

¹⁹ Տե՛ս Tölölyan 2000, 107-136:

ցեղասպանությունը վերապրածների ու Հայաստանի խորհրդայնացումից հետո հայրենից արտաքսվածների միջև գաղափարաբանական հակասություններով: Այն առնչվում էր նաև Խորհրդային Հայաստանի նկատմամբ թշնամական կամ բարեկամական մոտեցումների առկայությանը²⁰:

ԽՍՀՄ փլուզումից հետո առաջացած իրավիճակը մոտ 2 մլն. մարդու հարկադրում է արտագաղթել Հայաստանից: Նրանք զգալի տեղաշարժեր են առաջացնում Սփյուռքում՝ ազդելով նաև Հայաստան-Սփյուռք առնչությունների վրա²¹: Հայ ազգային-քաղաքական կուսակցությունների վերադարձը Հայաստան և հայրենիքում ներքին զարգացումները (հատկապես, ՀՅԴ-ի դեպքում), որոնց բնորոշ եղան դառնությունն ու հիասթափությունը, հայրենիքի և սփյուռքի ղեկավարությունների բերեցին այն եզրակացության, որ թեև ճգնաժամը միավորել է ազգի տարբեր հատվածները, սակայն նրանք չունեն քաղաքական միևնույն նպատակներն ու սկզբունքները²²:

Այսպիսով, հայության սփռումը և այլ երկրներում վերաբնակեցումները սկսվել են III-IV դ. սկսած: Սակայն, իբրև ինքնաբնութագրող բառ՝ «սփյուռքը», որը diaspora-ի համարժեքն է և նույնն է նաև ծագումը՝ բնիկ հնդեվրոպական spheres «ցրել» արմատից²³, հայության շրջանում սկզբնապես չի գործածվել: Հայ պատմագիտության մեջ, ինչպես հայտնի է, ընդունված է սփռված հայության պատմությունը բաժանել հայ գաղթաշխարհի և հայ սփյուռքի (Սփյուռքի)՝ հիմք ընդունելով ցեղասպանության իրողությունը, որից հետո հայ գաղթաշխարհը ձեռք

²⁰ Տե՛ս Tölölyan 2000, 107-136:

²¹ Տե՛ս Եղիազարյան 2014, 33-51:

²² Տե՛ս Tölölyan 2000, 107-136:

²³ Տե՛ս Ջահուկյան 2010, 698:

բերեց նոր դիմագիծ, ստանձնեց նոր խնդիրներ, աշխարհայացքային և կազմակերպական առումներով անցում կատարեց դեպի որակապես տարբերվող նոր հարթություն²⁴:

Անդրադառնալով հայության շրջանում «սփյուռքի», որպես ինքնաբնութագրող բառի կիրառության հարցին, պատմաբան Է. Մելքոնյանը նշել է, որ 1920-ականների կեսին է պատմական այդ նոր իրականությունն արտերկրի հայկական հրապարակումներում աստիճանաբար սկսել անվանվել «սփյուռք»՝ համապատասխան հունական diaspora-ին: Վկայակոչելով «Նոր բառգիրք Հայկազեան Լեզուի»-նը, նա կարևորել է, որ ո՛չ այնտեղ, ո՛չ նրանից առաջ՝ հայ միջնադարյան պատմիչների շարադրանքներում, ո՛չ էլ ավելի վաղ այդ բառը չի գործածվել հայերի վերաբերյալ²⁵: Է. Մելքոնյանը դա բացատրել է նրանով, որ հայ ազգը չի եղել սփռված և, չնայած գաղթերին (նախաեղեռնյան շրջանի), հայության ճնշող մեծամասնությունը մշտապես ապրել է իր հայրենիքում²⁶: Նկատենք, որ վերոհիշյալ բառարանը, որը հայ բառարանագրության մեջ կոթողային և ուղենշային աշխատություն է, այս դեպքում հետաքրքրական է նաև այն առումով, որ նրա հեղինակները հեռավոր Վենետիկում հաստատված Մխիթարյան միաբաններն էին, ովքեր, փաստորեն, իրենց չէին համարում սփյուռքային²⁷:

Ավելի վաղ, պատմաբան Հ. Մելիքսեթյանը, փորձելով ճշգրտում կատարել «գաղութահայ» և «սփյուռքահայ» հասկա-

²⁴ Տե՛ս Եղիազարյան 2014, 33, նաև՝ Մելիքսեթյան 1985, 3, Մելքոնյան 2003, 9:

²⁵ Բառը բացատրվում է «Սփռումն. տարածություն ամենայն վայր կամ կողմն. և Ազգ ցրուեալ»: Ապա՝ բերվում են օրինակներ, որոնք վերաբերում են հրեաներին (տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի 1837, 765-766):

²⁶ Տե՛ս Դյառլով, Մելկոնյան 2009, 42:

²⁷ Տե՛ս Վարդանյան 2016, 124-128:

ցությունների հարցում, որոնք հավասարապես գործածվում էին հայրենիքից դուրս ապրող հայկական համայնքների վերաբերյալ, գտել է, որ «հին և նոր հայկական համայնքներն իրարից տարբերվում են ոչ միայն իրենց ծագումով, այլև հայ իրականության մեջ ունեցած դերով ու բնույթով: Ուստի, տարաշխարհի ներկա համայնքների համար ավելի նպատակահարմար է գործածել սփյուռքահայ բառը: Հայկական նախկին գաղութներն առաջացել և գոյություն են ունեցել այն ժամանակ, երբ դեռ հայոց գերակշիռ մեծամասնությունն ապրում էր իր հայրենիքում: Մինչդեռ, ժամանակակից հայկական սփյուռքը ձևավորվեց թուրքական կառավարության կազմակերպած գենոցիդի (ցեղասպանություն) հետևանքով, արևմտահայության զանգվածային տեղահանությունից հետո, երբ հայ ժողովրդի պատմական հայրենիքի մի մեծ մասն ուղղակի հայազրկվեց»²⁸:

Նշենք, որ հայության շրջանում «սփյուռքի», որպես ինքնաբնութագրող բառի, առաջին կիրառություններից է Ե. Օսյանի վեպի խորագրում հունական տարբերակը՝ «Հայ Տիասբորան»²⁹: Իսկ հետագայում, բառի դիրքերի ամրապնդման և տարածման հարցում մեծ է եղել Բեյրութում 1958 թ. Ս. Միմոնյանի հրատարակած «Սփյուռք» շաբաթաթերթի ազդեցությունը³⁰:

Ակնհայտ է, որ գաղթաշխարհ-սփյուռք առանձնացումը հայ պատմագիտության մեջ վերաբերում է բացառապես դրանց որակական տարբերություններին և կատարվել է նախքան սփյուռքի արդի տեսությունների և, մասնավորապես, «սփյուռք» եզրույթի սահմանման վերաբերյալ գիտական բանավեճի ի

²⁸ Մելիքսեթյան 1985, 49:

²⁹ Տե՛ս Օսյան 1999:

³⁰ Խաչիկ Թոլոյան, Սփյուռքները և սփյուռքագիտությունը վերջին տասնամյակում, <http://www.arteria.am/hy/1331123076>, (մուտք՝ 28.09.2022):

հայտ գալը: Օտարալեզու, մասնավորապես, անգլերեն ուսումնասիրություններում diaspora-ն՝ սփյուռքը, կիրառվում է նաև նախաեղեռնյան իրականության համար: Կարծում ենք, պատճառն այն չէ, որ անգլերենում չկա «գաղթաշխարհ» բառի համարժեքը: Սփյուռքի տեսության պրիզմայով դիտարկելու դեպքում ակնհայտ է, որ իբրև սոցիալական ձևավորում հայ գաղթաշխարհը տիպիկ սփյուռքային երևույթ է: Ասվածը փաստելու համար կարելի է դիտարկել հետևյալ ցայտուն օրինակը. սփյուռքը այլ սփռված խմբերից (եթնիկ փոքրամասնություններ, փախստականներ, հյուր աշխատողներ և այլն) տարբերակող ամենակարևոր հատկանիշներից մեկն այն է, որ «սփյուռքի» դեպքում խումբն ազգային, էթնիկական հատկանիշները պահպանելուց զատ ունի կազմակերպական այնպիսի մակարդակ, որ կարող է ստանձնել հայրենիքի բարգավաճմանը, զարգացմանը նպաստելու քաղաքական հանձնառություն: Ավելին, ծագման երկրում պետականության բացակայության դեպքում սփյուռքը կարող է հետամուտ լինել դրա վերահաստատմանը: Մա նախաեղեռնյան հայկական սփյուռքի (հայ գաղթաշխարհի) պարագայում դրսևորվեց XVIII-XX դդ., երբ գաղթավայրերում սկսեցին մշակվել Հայաստանի ազատագրության գաղափարները³¹:

Այս համատեքստում կարևոր են պատմաբան Ա. Եղիազարյանի այն դիտարկումները, որ գաղթաշխարհն անհրաժեշտ է դիտարկել ոչ թե դրա հիմնական բաղադրիչների՝ առանձին գաղթօջախների ձևավորման և պատմական ընթացքի, այլ ընդհանրական գործընթացների, հայկականության հենքային արժեքների պահպանության և դեպի ապագա միտվածության

³¹ Տե՛ս Tölölyan 2000, 107-136:

առումով: Քաղաքակրթական իմաստով, հայ գաղթաշխարհը ոչ թե հայ գաղթավայրերի սուկական ամբողջությունն է, այլ ազգային հիմնարար արժեքների պահպանության և զարգացման միջավայրը, գաղթաշխարհի հայության հոգևոր ամբողջականությունը՝ հիմնված համակեցության այնպիսի հենքային արժեքների վրա, ինչպիսիք են անկախությունը, ազգային պետությունը, մշակույթը, լեզուն, ազգի պատմական հեռանկարին առնչվող չափորոշիչները: Ուստի, հայ գաղթաշխարհի պատմությունը պետք է դիտարկել Հայաստանի պատմության ընթացքի, հայոց պատմության զարգացումների ծիրում, զարգացումներ, որոնք հանգեցրին գաղթաշխարհում Հայաստանի ազատագրության գաղափարների ծննդին³²: Հարկ է հավելել նաև, որ, առհասարակ, ոչ բոլոր սփյուռքյան համայնքներն են իրենց պատմության ընթացքում ամեն ժամանակ ի հայտ բերում սփյուռքը սահմանող առանցքային բնութագրիչները, այլ՝ վարքագծերի և փորձառությունների այդ կազմաձևը ժամանակի ընթացքում բնութագրում է տևականություն ունեցող սփյուռքներին³³:

Սփյուռքի արդի տեսության մեջ «սփյուռք» եզրույթի ընդգրկման հարցը քննարկվում է նաև պետական սահմանների վերաձևման համատեքստում: Մասնավորապես, Խորհրդային Միության հանրապետություններում բնակվող մի շարք խմբեր, նրա փլուզումից հետո առանց բնակության վայրից տեղաշարժվելու, հայտնվեցին այլ պետության տարածքում, այսինքն՝ սփյուռքի կարգավիճակում: Այսպիսի խմբերին ամերիկացի սոցիոլոգ Ռ. Բրուբեյքերն անվանել է «պատահական

³² Տե՛ս Եղիազարյան 2013, 3-22:

³³ Տե՛ս Tölölyan 2006, 54:

սփյուռքներ» (accidental diaspora)³⁴: Միաժամանակ, կա տեսակետ, որ պետք չէ սփյուռք համարել այն դեպքերը, երբ տվյալ էթնիկ հանրությունը հայրենի պետությունից դուրս է գտնվում պետական սահմանների վերաձևման հետևանքով³⁵:

Վերոնշյալ հարցը հայկական սփյուռքի պարագայում կարևորվում է, ոչ միայն Խորհրդային Միության փլուզման հետևանքով այլ պետությունների տարածքում հայտնված հայության պարագայում, որը խորհրդային տարիներին անվանվում էր ներքին սփյուռք, այլև ներկայիս Թուրքիայի Հանրապետությունում և Վրաստանում՝ պատմական Ջավախքում³⁶, բնակվող այն հայերի, որոնք կամ իրենց նախնիները բնակության նախնական վայրից սփռման չեն ենթարկվել: Այս համատեքստում, հատկանշական է մասնավորապես Թուրքիայի իշխանությունների կողմից «սփյուռք» բառի վերաիմաստավորման կամ վերասահմանման ռազմավարությանը: Ըստ դրա, թուրքական սփյուռք հասկացության մեջ ընդգրկվում են Օսմանյան կայսրության, այնուհետև, հանրապետական Թուրքիայի տարածքից գաղթած բոլոր մարդիկ՝ անկախ ազգությունից, այդ թվում՝ ցեղասպանությունից փրկված հայերը³⁷: «Սփյուռքի» այս

³⁴ Տե՛ս Brubaker 2000, 1-19:

³⁵ Տե՛ս Козлов 1988, 26:

³⁶ Ներկայիս Վրաստանի երկու մարզերը՝ Սամցխե-Ջավախքն ու Քվեմո-Քարթլիի մի մասն ընդգրկող պատմական Ջավախքը Մեծ Հայքի Գուգարք աշխարհի ինը գավառներից մեկն էր: Այսօր այն Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հանրապետություններից դուրս գտնվող ամենամիատարր հայաբնակ երկրամասն է, որը քաղաքական, սոցիալ-տնտեսական ծանրագույն պայմաններում շարունակում է ապրել հայաշունչ կյանքով (մանրամասն տե՛ս Մելքոնյան 2003, 350-359):

³⁷ Թուրքիայի քաղաքական որոշակի շրջանակներ սփյուռք հասկացության մեջ փորձում են ներառել նաև Կենտրոնական Ասիայում, Բալկաններում, ՌԴ-ում ապրող թուրքական ժողովուրդներին: Այնուամենայնիվ, Թուրքիայում

նոր ըմբռնումը 2011 թ. դեկտեմբերի 23-ին Թուրքիայի ԱԳՆ-ում կազմակերպված գիտաժողովի ընթացքում ներկայացրել է արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն՝ իր ելույթում նշելով, որ ԱՄՆ կատարած այցի ժամանակ տեղի թուրք դեսպանին տվել է հետևյալ հրահանգը. «Մենք պետք է փոխենք «սփյուռք» հասկացությունը: Անկախ կրոնից և հավատքից՝ Անատոլիայի հողերից գաղթած յուրաքանչյուր անհատ մեր սփյուռքն է: Որտեղ մեկ հայ կա, գնալու և խոսելու ենք նրա հետ մեր համատեղ պատմության մասին, այն մասին, թե ինչպես ենք 10 դար միասին ապրել: Նախ, շահելու ենք հայերի, մեր հայ բարեկամների սիրտը: Զրուցելու ենք ամեն մի հայի հետ»³⁸: Փաստորեն, այս դեպքում, սփռման համար որպես ելման կենտրոն է ընդունվում ոչ թե հայրենիքի, այլ՝ պետության գաղափարը: Մինչդեռ, սփյուռք հասկացությունը ենթադրում է ոչ միայն բնակության նախնական վայրից պարզապես սփռում, այլև նույն էթնոսի՝ այլ երկրներում հաստատված համայնքների հետ կապերի պահպանում, էթնիկ ինքնության որոշակի տարրերի պահպանում սերունդների ընթացքում, ինչպես նաև քաղաքական հանձնառություն հայրենիքի վերաշինման, հզորացման կամ, նույնիսկ, անկախ պետականության հռչակման գործում: Ուստի, նշված մոտեցումը, ակնհայտորեն, ավելի շատ ունի քաղաքական, քան գիտական ենթատեքստ³⁹:

վերջիններիս բնորոշելու համար ընդունված է օգտագործել *akraba toplulukları* (բարեկամ հասարակություններ) բառակապակցությունը (տե՛ս Պողոսյան, Կարապողոսյան 2016, 15-16):

³⁸ Տե՛ս Հովսեփյան 2015, 25-34, նաև՝ Aydın 2014, 28, Պողոսյան, Կարապողոսյան 2016, 14-15:

³⁹ Նշենք, որ Թուրքիայում ևս, ինչպես աշխարհի մի շարք այլ երկրներում, սփյուռքի նկատմամբ ակադեմիական շրջանակների հետաքրքրությունը աճել է: Մասնավորապես, վերջերս՝ 2021 թ. հիմնվել է «Սփյուռքագիտական թուր-

Եզրակացություններ

Ամփոփելով նշենք, որ հայ պատմագիտության մեջ համապատասխանաբար նախաեղեռնյան և հետեղեռնյան իրականություններն անվանելու համար հայ գաղթաշխարհ և հայ սփյուռք (Սփյուռք) բաժանումն ակնհայտորեն նպատակ ունի ընդգծելու միևնույն երևույթի պատմականորեն որակապես տարբեր փուլերը և արվել է նախքան Արևմուտքում կծավալվեր գիտական խոսույթը, թե որ խմբերը կարելի է կոչել «սփյուռք», որը՝ ոչ: Չնայած այն հանգամանքին, որ «սփյուռքը», որպես ինքնաբնութագրող բառ, հայության շրջանում սկսել է կիրառվել միայն 1920-ականներից, հայ գաղթաշխարհը, որպես սոցիալական ձևավորում, տիպիկ սփյուռքային երևույթ է, երբ այն դիտում ենք սփյուռքի արդի տեսության, երևույթի բնութագրման համար ընտրված չափորոշիչների դիտանկյունից, որի համատեքստում շեշտադրելի են հատկապես այն գործընթացները, որոնք ընթանում էին Հայաստանի ազատագրման նպատակով: Հայ գաղթաշխարհն այդ տեսանկյունից դիտարկելը և պատմության իմաստավորումը կարևորվում է ներկայումս հայության քաղաքակրթական հեռանկարին, հայ ինքնության տարրերի պահպանությանը և ապագային միտված օրակարգերի մշակմանն առնչվող հարցերի համատեքստում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Ա. 1964, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա, Երևան, «Հայպետհրատ», 486 էջ:

Աճառյան Հր. 1971, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 698 էջ:

Բեժանյան Ա. 2013, Սփյուռքի մասին տեսությունների համառոտ ակնարկ, «Լրաբեր Հասարակական Գիտությունների», №1, էջ 211-227:

Եղիազարյան Ա. 2013, Հայ գաղթաշխարհի պատմության պարբերացման փորձ, «Սփյուռքագիտություն», տարեգիրք, №2, էջ 3-22:

Եղիազարյան Ա. 2014, Հայ սփյուռքի պատմության պարբերացումը, «Հայագիտության հարցեր», №2, էջ 33-51:

Թռլոյան Խ., Սփյուռքները և սփյուռքագիտությունը վերջին տասնամյակում, <http://www.arteria.am/hy/1331123076>:

«Հայ Սփյուռք», հանրագիտարան, Երևան, Հայկական Հանրագիտարան հրատ., էջ 732:

Հովսեփյան Ա. 2015, Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականության արդի դրսևորումները Թուրքիայում, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», №1 (16), էջ 25-34:

Մակարյան Վ. 2016, Հայկական միլլեթի կազմավորումը և Կ.Պոլսի հայոց պատրիարքների իրավասությունները (ԺԵ.-ԺԹ. դդ.), Պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, Օգոստոս, էջ 111-132:

Մելիքսեթյան Հ. 1985, Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Երևան, Երևանի համալսարանի հրատ., 476 էջ:

- Մելքոնյան Էդ. 2003, Սփյուռք, «Հայ Սփյուռք», հանրագիտարան, Երևան, Հայկական Հանրագիտարան հրատ., 732 էջ:
- Պողոսյան Ն., Կարապողոսյան Ս. 2016, Թուրքիայի Հանրապետության և թուրքական սփյուռքի համագործակցության հակահայկական ուղղվածությունը, Երևան, ԵՊՀ հրատ., 146 էջ:
- Ջահուկյան Գ. 2010, Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, «Աստղիկ» հրատ., 819 էջ:
- Վարդանյան Հ. 2016, Գաղթականությանը վերաբերող մի քանի բառերի եզրութային արժեքը հայերենում, ԵՊՀ ՈւԳԸ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, №15 (15), էջ 124-128:
- Վարդանյան Հ. 2016, Սփյուռքի սահմանումը և եզրույթի իմաստային ընդլայնման պատճառները ըստ Խաչիկ Թեոլեոլեանի, «Հայագիտության հարցեր», №2 (8), էջ 95-108:
- Օտյան Ե. 1999, Հայ Տիասրորան (ժամանակակից աստանդական կեանքէ), Երևան, Գրականության և արվեստի թանգարանի հրատ., 448 էջ:
- Дятлов В., Мелконян Э. 2009, Армянская диаспора: очерки социокультурной типологии, Ереван, Институт Кавказа, 207 с.
- Козлов В. И. 1988, Диаспора. Свод этнографических понятий и терминов. Москва, "Наука", 1988, 225 с.
- Милитарев А. 1999, О содержании термина «диаспора» (к разработке дефиниции), Диаспоры, №1, с. 24-33.
- Aydın Y. 2014, «The New Turkish Diaspora Policy: Its Aims, Their Limits and the Challenges for Associations of People of Turkish Origin and Decision-makers in Germany», SWP Research Paper, Berlin, 28 p.
- Brubaker R. 2000, Accidental Diasporas and External "Homelands". In Central and Eastern Europe: Past and Present, IHS Political

Science Series 71, p. 1-19.

Cohen R., *Global Diasporas: An Introduction*, Routledge, 2008, 219 p.

Connor W. 1986, *The Impact of Homelands upon Diasporas*, *Modern Diasporas in International Politics*, ed. Sheffer G., New York, p. 16-46.

Dufoix S. 2008., *Diasporas*, Berkeley, University of California Press, 160 p.

Tölölyan Kh. 1991, *The Nation-State and its Others: In Lieu of a Preface*. *Diaspora*, №1 (1), p. 3-7.

Tölölyan Kh. 1996, *Rethinking Diaspora(s): Stateless Power in the Transnational Moment*, *Diaspora*, № 5 (1), p. 3-36.

Tölölyan Kh. 2000., *Elites and Institutions in the Armenian Transnation*, *Diaspora: A Journal of Transnational Studies*, №9 (1), p. 107-136.

Tölölyan Kh. 2005, *Armenian Diaspora*. In *Encyclopedia of Diasporas, Immigrant and Refugee Cultures Around the World*. Ed.: Ember M., Ember C., Skoggard I., New York, p. 35-46.

Tölölyan Kh. 2006, *The Armenian Diaspora as a transnation actor and as a potential contributor to conflict resolution*, *Univeristy for Peace, Capacity Building for Peace and Development: Rols of Diaspora*, Toronto, Canada, 54 p.

Грацин В. Варданян, ЕГУ, факультет истории, Смысловые, концептуальные изменения понятия «диаспора» и пример армянской диаспоры.

Резюме

С конца 1980-х и особенно с 1990-х годов резко возрос интерес научных кругов разных стран мира к феномену «диаспоры», были проведены масштабные теоретические и эмпирические

кие исследования. Очевидно, что основные причины такого роста интереса связаны с тем, что диаспоры способны играть значительную роль как в отношениях со своими странами происхождения и пребывания, так и в трехсторонних отношениях.

Одним из основных вопросов теории диаспоры является определение термина «диаспора». В частности, исследовательский интерес представляет вопрос, какая из различных групп, осевших за пределами родины, может считаться диаспорой, а какая нет. Хотя армянская диаспора в этом смысле не является предметом научных дискуссий и всегда рассматривается как пример «классической» или «старой» диаспоры, есть некоторые вопросы, заслуживающие внимания с точки зрения сравнения ее с теорией диаспоры, которая связана с цивилизационной перспективой армян.

Ключевые слова: определение диаспоры, теория, парадигма, армянская диаспора, идентичность, цивилизационная перспектива, этнос, государственная граница, община, национальное государство.

Hratsin V. Vardanyan, YSU Faculty of History, Semantic, conceptual changes of the concept of "diaspora" and the case of the Armenian diaspora.

Summary

Since the end of the 1980s and especially since the 1990s, the interest of scientific circles in different countries to the "diaspora" phenomenon has increased dramatically, and large-scale theoretical and empirical studies have been carried out. Obviously, the main

reasons for such an increase in interest are due to the fact that diasporas are able to play a significant role both in relations with their countries of origin and residence, as well as in trilateral relations.

One of the basic issues of diaspora theory is the definition of the term "diaspora". In particular, of research interest is the question which of the various groups who have settled outside their homeland can be considered a diaspora and which cannot. Although the Armenian diaspora is not a subject of scientific debate in this sense and is always considered as an example of "classic" or "old" diaspora, there are some issues worthy of attention in terms of comparing it with the theory of diaspora, which is related to the civilizational perspective of Armenians.

***Key words:** Armenian diaspora, civilizational perspective, community, definition of diaspora, ethnic group, identity, nation-state, paradigm, state border, theory.*

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ՝ ՀԱԿՈՒԲ ԶՈՐՅԱՆ



Հակոբ և Էսթեր Զորյաններ

Պատմաբան, հնագետ, սոցիոլոգ և տնտեսագետ, պրոֆեսոր Հակոբ Զորյանը անցյալ դարի 20-30-ական թթ. խորհրդահայ պատմագիտության և բարձրագույն կրթության բնագավառների նշանավոր դեմքերից է:

Ծնվել է Տրապիզոնի վիլայեթի Օրդու քաղաքում: 1900-1908 թթ. սովորել է ծննդավայրի, իսկ 1908-1912 թթ. Կ.Պոլսի Պերպերյան վարժարանում: 1919-1920 թթ. ուսումը շարունակել է Լոզանի համալսարանի փիլիսոփայության, ապա՝ 1920-1925 թթ. Բեռլինի համալսարանի քաղաքատնտեսության ֆակուլտետներում, մասնագիտացել սոցիոլոգիայի, քաղաքատն-

տեսության, փիլիսոփայության ու պատմագիտության մեջ: Բեռլինի համալսարանում Ջորյանի քաղաքատնտեսության գծով պաշտպանած ավարտական աշխատությունը դոկտորի աստիճանով (թեման՝ «Սոցիալական շերտավորումը միջնադարյան Հայաստանում») շարադրվել է պրոֆեսորներ Վ. Ջոմբարտի և Յու. Մարկվարտի մոտ: 1925 թ. ամռանից սկսել է աշխատակցել Բեռլինում ՀՀ դիվանագիտական առաքելությանը, որը գլխավորում էր Ջեյմս Գրինֆիլդը: Այստեղ նա ծանոթացել է հայոց ցեղասպանության գլխավոր հանցագործներին՝ ահաբեկող «Նեմեսիս» գործողության կազմակերպիչ, ԱՄՆ-ից ժամանած Շահան Նաթալիի հետ: Ջորյանն անդամակցել է հույժ գաղտնի այն խմբակին, որը առաջադրանք էր ստացել ահաբեկչական ակտ կազմակերպել Մեհմեդ Թալեաթ փաշայի դեմ: Բացի Ջորյանից խմբակի մեջ էին մտնում Սողոմոն Թեհլիրյանը, Լիպարիտ Նազարյանը, Հրաչ Փափազյանը և Վահան Ջաքարյանը: Ջորյանն է ճանաչել Թալեաթին և Թեհլիրյանի համար բնակարան վարձել նրա տան դիմաց: 1921 թ. մարտի 15-ին Բեռլինի Շառլոտենբուրգ պողոտայի Հարդենբերգ փողոցում Թեհլիրյանը գնդակահարել է դահճին:

1925 թ. հոկտեմբերին Խորհրդային Հայաստանի կառավարությունը Ջորյանին հրավիրել է Երևան՝ դասավանդելու Պետական համալսարանում: Մինչև 1937 թ. դասավանդել է «Հայ ժողովրդի պատմություն» և «Քաղաքատնտեսություն» առարկաները: 1929-1937 թթ. եղել է Հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ, 1931-1937 թթ.՝ պատմության ֆակուլտետի դեկան: Համատեղությամբ վարել է նաև Հանրային գրադարանի տնօրենի (1928-1929), Երևանի պետհամալսարանի սոցիալ-տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի (1928-1930),

Կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտի տնօրենի (1930-1931), ՀԽՍՀ գիտությունների ինստիտուտի գիտնական-քարտուղարի (1931), ՀԽՍՀ լուսժողկոմատի կուլտուրայի պատմության ինստիտուտի տնօրենի (1932-1935), Պատմության պետական թանգարանի տնօրենի (1936-1937) պաշտոնները:

1926 թ. ընտրվել է ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի պատմահասարակագիտական բաժնի թղթակից-անդամ, նրան 1929 թ. շնորհվել է դոցենտի, 1936 թ.՝ պրոֆեսորի կոչում: 1928-1931 թթ. եղել է Մարքսիստ-պատմաբանների հանրապետական ընկերության հիմնադիր նախագահ: 1930 թ. ընդունվել է ՀամԿ(բ)Կ շարքերը:

Հ. Զորյանի գրչին են պատկանում քսանից ավելի գիտական հոդվածներ, որոնք վերաբերում են հայ ժողովրդի հին ու միջնադարյան պատմության քաղաքական և հասարակական-տնտեսական կյանքի հիմնախնդիրների լուսաբանմանը: 1935 թ., Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի հանձնարարությամբ, Զորյանի գլխավորությամբ ստեղծվել է հեղինակային խումբ, որը ձեռնամուխ է եղել միջնակարգ դպրոցների համար հայ ժողովրդի պատմության դասագրքի ստեղծման աշխատանքներին:

Ստալինյան բռնաճնշումների տարիներին հայրենասեր վաստակաշատ գիտնական-մանկավարժն անակնկալ հայտնվեց «ժողովրդի թշնամիներ» հորջորջված մտավորականների «սև ցուցակում», դարձավ անհատի պաշտամունքի կամայակա-նությունների անմեղ զոհ: Զորյանը ձերբակալվեց 1937 թ. օգոստոսի 8-ին, դատապարտվեց Երևանի պետական համալսարանի «Պրոֆեսորների գործով», իբր «Հայաստանում գոյություն ունեցող ճյուղավորված ապստամբական հակախորհր-

դային դաշնակցական կազմակերպության 18 ակտիվ անդամներից մեկը, որը, հավաքագրվելով գերմանական հետախուզության կողմից, ուղարկվել էր Խորհրդային Միություն՝ լրտեսական-հետախուզական աշխատանքի համար»՝ ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 63, 67 և 68-րդ հոդվածներով նախատեսված մեղադրանքով¹: Անդրկովկասի զինվորական տրիբունալի 1939 թ. սեպտեմբերի 6-ի որոշմամբ Ջորյանը դատապարտվել է մահապատժի: 7 ամիս մահապարտների խցում մնալուց հետո՝ 1940 թ. մարտի 17-ին, ԽՍՀՄ Գերագույն դատարանի զինվորական տրիբունալի կողմից վերոհիշյալ դատավճիռը բեկանվել է և N6585 գործը վերադարձվել լրացուցիչ քննության:

Ի վերջո, ԽՍՀՄ ՆԳԺԿ Հատուկ խորհրդակցության 1941 թ. սեպտեմբերի 3-ի որոշմամբ, Հ. Ջորյանը դատապարտվեց ազատազրկման՝ ուղղիչ-աշխատանքային ճամբարում 8 տարի ժամկետով, տեղափոխվելով Ուրալ՝ Չելյաբինսկից ոչ հեռու գտնվող քաղբանտարկյալների կալանավայրերից մեկը: Այստեղ էլ նա 1942 թ. վախճանվեց: Միայն 1955 թ. ապրիլի 2-ին ԽՍՀՄ Գերագույն դատարանի զինվորական կոլեգիան վերանայեց Հ. Ջորյանի մեղադրական գործը, չեղյալ հայտարարեց ՆԳԺԿ Հատուկ խորհրդակցության որոշումը և հանցակազմի բացակայության պատճառով նրան լիովին արդարացրեց (տե՛ս ՀԱԱ, ֆ. 571, ց. 5, գ. 935, թ. 17-29):

Ստալինյան բռնաճնշումների ակիքը հարվածեց նաև Հակոբ Ջորյանի կնոջը՝ Էսթեր Ջորյանին: Ամուսնու հետ Խորհրդային Հայաստան վերադառնալուց հետո, Է. Ջորյանը 1929 թ. հոկտեմբերից մինչև 1936 թ. աշխատել է Երևանի պետական համալսարանում որպես օտար լեզուների դասախոս: ՀԽՍՀ

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 1, գ. 1091-1107, հ. 1, թ. 169-172:

ՆԳԺԿ-ի որոշմամբ 1937 թ. հոկտեմբերի 22-ին կալանավորվել է այն բանի համար, «որ նրա ամուսին՝ Հակոբ Զորյանը, լինելով նախկին դաշնակ, միաժամանակ հանդիսացել է Հայաստանի միացյալ հակասովետական նացիոնալիստական կազմակերպության անդամ և եղել է օտարերկրյա հետախուզության գործակալ: Բացի այդ, դատապարտյալ Էսթեր Զորյանը 1913-1923 թ. արտասահմանում եղած ժամանակ հանդիսացել է դաշնակցական պարտիայի անդամ, եղել է դատապարտյալ Զաբել Եսայանի ընկերուհին և տարել է հակասովետական ազիտացիա»²: Վերը շարադրված մեղադրանքի համար ԽՍՀՄ ՆԳԺՑ-ին կից Հատուկ խորհրդակցության 1939 թ. հուլիսի 8-ի որոշմամբ Է. Զորյանը դատապարտվել է ազատազրկման 5 տարի ժամկետով: Այն լրանալուց հետո (12 օգոստոսի 1946 թ.) սեպտեմբերի 3-ին եկել է Հայաստան՝ առանց Երևանում բնակվելու իրավունքի: 1948 թ. ապրիլի 16-ից մինչև 1949 թ. փետրվարի 28-ը աշխատել է Սևանի ջրակենսաբանական կայանում որպես արտահաստիքային լաբորանտ: Երկրորդ անգամ ձերբակալվել է 1949 թ. մարտի 5-ին և ԽՍՀՄ ՊԱՍ կից Հատուկ խորհրդակցության 1949 թ. մայիսի 18-ի որոշմամբ դատապարտվել է արտաքսման՝ Հայաստանի սահմաններից դուրս՝ Կրասնոյարսկ³:

ՀԽՍՀ Գերագույն դատարանի քրեական գործերի դատական կոլեգիան իր 1956 թ. փետրվարի 4-ի որոշմամբ վերանայեց Էսթեր Զորյանի մեղադրական գործը, չեղյալ հայտարարեց

² ՀԱԱ, ֆ. 571, ց. 4, գ. 2515, թ. 20:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 571, ց. 4, գ. 2515, թ. 21:

հատուկ խորհրդակցությունների որոշումները և, հանցակազմի բացակայության պատճառով, նրան լիովին արդարացրեց⁴:

Ստորև առաջին անգամ հրապարակվում են Հակոբ Զորյանի կյանքի ու գործունեության վերաբերյալ փաստաթղթեր, որոնք պահվում են Հայաստանի ազգային արխիվում:

ՄՏԵՓԱՆ Գ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ
ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ.

Հակոբ Զորյանի Մոսկվա գործուղման հաշվետվությունը

26 նոյեմբերի 1928 թ., Երևան

1927 թ. ամառը, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսներին, պետհամալսարանի կողմից գործուղվեցի Մոսկվա՝ Երևանում սովորած ռուսերեն լեզուն ավելի խորացնելու և իմ մասնագիտության վերաբերյալ ռուսերեն գրականությանը ծանոթանալու:

Առաջադրած նպատակս աշխատեցա հետևյալ կերպ իրագործել.

ա. հուլիսի 15-ից մինչև օգոստոսի 15-ը աշխատեցա Կոմունիստական ակադեմիայի և Մոսկվայի համալսարանի գրադարաններում: Մույն գրադարաններում աշխատել եմ օրական 6 ժամ: Ծանոթացել եմ, գլխավորաբար, «Под знаменем

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 571, ց. 4, գ. 2515, թ. 24, 25: Տե՛ս նաև՝ Կ. Թերզյան, Հին ու Նոր օրերի հետ.- Վերածնված Հայաստան, 1989, թիվ 3, էջ 18-23: Ա. Հովհաննիսյան, Ս. Ղարիբջանյան, ԿԳԲ-ի նկուղներում. «Գեաստապոյի գործակալներ» Էսթեր և Հակոբ Զորյաններ.- Հայություն, 1994, հունվար, թիվ 1, էջ 4-5: Հակոբ Զորյան, Պատմագիտական ուսումնասիրություններ: Հրատարակության պատրաստեց Պ.Հ. Հովհաննիսյանը, Երևան, 2015:

марксизма», «Вестник Комакадемии», «Историк-марксист» и «Новый Восток» պարբերականներում լույս տեսած հոդվածների հետ:

Իմ այս ընթերցումներին զուգընթաց, լեզուն սովորելու տեսակետից, մեծապես օժանդակել է նաև այն միջավայրը, ուր գտնվել եմ այդ ամիսների ընթացքում: Ապրել եմ գիտական աշխատավորների տանը, ուր ամեն տեսակի հնարավորություն կար այս տեսակետից:

բ. օգոստոսի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ը աշխատել եմ Լենինի անվան հանրային գրադարանում: Սույն գրադարանում ամեն օր աշխատել եմ 10-12 ժամ: Հավաքել եմ Հայաստանի միջին դարերի պատմության համար բավականին առատ նյութ: Սկզբնական շրջանում նյութեր եմ հավաքել ակադեմիկոսներ Բարտոլդի և Մառի աշխատություններից: Վերջին շրջանում նյութեր եմ հավաքել նաև եվրոպական լեզուներով գոյություն ունեցող գրականությունից:

Իմ այս հավաքած նյութերի մի մասը օգտագործել եմ «Գյուղացիական ապստամբությունը ֆեոդալական Հայաստանի X դարում» վերնագիրը կրող ուսումնասիրության մեջ, որը տպագրվել է Պետհամալսարանի N4 տեղեկագրում [տե՛ս ՀՄԽՀ Պետ. համալսարանի տեղեկագիր, 1928, N4, էջ 83-108 - Ս.Ղ.]:

Նյութերի մի մասը օգտագործվելու են ուսումնասիրության համար, որը նպատակ ունի ֆեոդալական Հայաստանի XI-XV դարերում քաղաքների անկման պատճառները լուսաբանելու:

Սույն գործուղումից հետո կարողացել եմ իմ մասնագիտությանը վերաբերող ռուսական գրականությունը օգտագործել:

Դասախոս՝ Հակոբ Զորյան

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 20, ց. 10, Գ. 200, թ. 7:
Ինքնագիր:

Հակոբ Զորյանի դիմումը ՀՍԽՀ Պետական համալսարանի
վարչությանը՝ իրեն Լենինգրադ գործուղելու խնդրանքով

15 մայիսի 1929 թ., Երևան

1929/30 ակադեմիական տարում ինձ հանձնվեց հայոց պատմության 11-րդ դարուց մինչև 18-րդ դարը ժամանակաշրջանի կուրսը կարդալ: Կարդալու համար հարկավոր է մի շարք գիտահետազոտական աշխատություններ կատարել Հայաստանում ֆեոդալիզմի քայքայման պրոցեսի և առևտրական կապիտալի զարգացման շուրջ:

Բացի Հայաստանում գոյություն ունեցող հայկական աղբյուրների ուսումնասիրությունից, հարկավոր է կարդալ բազմաթիվ օտար աղբյուրներ, մասնավորաբար, 17-րդ և 18-րդ դարերի վերաբերյալ: Սույն հրատարակությունների մեծագույն մասը գոյություն չունի Հայաստանում: Ուստի, խնդրում եմ թույլ տալ ինձ 1929/30 ակադ. տարվա առաջին սեմեստրը անցկացնել Լենինգրադի գրադարանում աշխատելու և միաժամանակ սույնը պատրաստելու: Երկրորդ սեմեստրում հնարավոր է [անընթեռնելի - Ս.Ղ.] ձևով կարդալ սույն դասախոսությունները, այս իմ վերցրած առարկաների դասավանդումը չի սուժի:

Մելքոնյան կտակը գործադրող հանձնաժողովը ի հաշիվ իմ պատրաստելիք ուսումնասիրությունների հոնորարի որոշ գումար տրամադրել է Լենինգրադ գնալու և աշխատելու:

Ավելորդ չեմ համարում վարչությանը հայտնել, որ մասնավորաբար 17-րդ և 18-րդ դարերը գրեթե բոլորովին նոր են ուսումնասիրվելու և անհրաժեշտ կլինի որոշ ազատ ժամանակ այդ կուրսը պատրաստելու:

Հարգանք՝ Հակոբ Զորյան
Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 20, ց. 10, Գ. 200, թ. 15-15 շրջ.:
Ինքնագիր:

Հակոբ Զորյանի ինքնակենսագրությունը

21 նոյեմբերի 1934 թ., Երևան

Ծնվել եմ 1894 թ. Տաճկաստանի Օրդու քաղաքում (Տրապիզոնի վիլայեթ): Հայրս եղել է կոշկակար: 8 տարեկան հասակում կորցրել եմ նրան: Մայրս դերձակությամբ մեծացրել է իր 4 երեխաներին:

Նախնական կրթությունս ստացել եմ Օրդուի հայոց վարժարանում: 1908 թ. գնացել եմ Կ.Պոլիս և նյութական մեծ դժվարություններ կրելով ավարտել եմ Սկյուտարի Պերպերյան միջնակարգ դպրոցը: 1912-1914 թթ. ծննդավայրում՝ Օրդու քաղաքում ուսուցիչ եմ եղել: 1915-1918 թթ. Բուլղարիայում Շուվա քաղաքի հայոց վարժարանի վարիչ եմ եղել: 1919-1925 թթ. եղել եմ ուսանող Լոզանի և Բեռլինի համալսարաններում: 1925 թ. ավարտել եմ Բեռլինի համալսարանը դոկտոր փիլիսոփայության տիտղոսով և նույն թվի ամառը հրավիրվել եմ դասախոս Երևանի պետ. համալսարանը:

1912-1920 թթ. եղել եմ դաշնակցական: 1923 թ. Բեռլինում հիմնված Խորհրդային ուսանողական միության, որին

մասնակցում էին հայ, վրացի և ադրբեջանցի ուսանողները, նախագահն էմ ընտրվել առաջին համագումարում: 1924-25 թթ. ուսանողական միությանը կից կոմբջիջի քարտուղարության անդամ էմ եղել: Խորհրդային Հայաստան գալուց հետո 1928 թ. ընդհանուր հիմունքներով ընդունվել էմ կուսակցության մեջ որպես թեկնածու և 1930 թ. անցել էմ անդամ:

Խորհրդային Հայաստանում տարել էմ հետևյալ աշխատանքները: 1925-1934 թթ. դասախոսում էմ պետ. համալսարանում Հայաստանի պատմություն, 1930 թ.-ից ամբիոնի վարիչ էմ այդ առարկայի գծով: 1928-1930 թթ. եղել էմ պետ. համալսարանի սոցիալ-տնտեսագիտական ֆակուլտետի դեկան: 1928-1929 թթ. եղել էմ Հանրային գրադարանի դիրեկտոր: 1930-1931 թթ. եղել էմ Կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտի դիրեկտոր: 1931 թ. Գիտությունների ինստիտուտի գիտնական-քարտուղար՝ մինչև այդ ինստիտուտի վերացումը:

1932 թ. մայիս ամսից նշանակվել էմ Կուլտուրայի պատմության ինստիտուտի դիրեկտոր, որտեղ և աշխատում էմ այժմ:

Հասարակական և կուսակցական աշխատանքների գծով տարել էմ մի շարք աշխատանքներ: Պետ. համալսարանում եղել էմ տեղկոմի նախագահ, ԳԱԱ-ի [գիտական աշխատողների սեկցիա - Ս.Ղ.] պատասխանատու քարտուղար, ՀԱՄԽ-ի անդամ, Կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտում և Մանկավարժական ինստիտուտում կուսբյուրոյի անդամ: Երքադկոմի և Կուսկենտկոմի գծով ինձ հանձնարարվել են զեկուցումներ, շրջաններում կուսաշխատանքներ, որոնք բոլորն էլ կատարել էմ:

Հակոբ Զորյան

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1, ց. 78, գ. 6064, թ. 2:

**ՀՄԽՀ Կուլտուրայի պատմության ինստիտուտի գրությունը
Ինքնավար Լեռնային Ղարաբաղի մարզային գործադիր
կոմիտեին**

10 փետրվարի 1934 թ.

ՀՄԽՀ Կուլտուրայի պատմության ինստիտուտը ծրագրել է կազմակերպելու առաջիկա (1934 թ.) ամառը մի շարք գիտական էքսպեդիցիաներ պատմական հուշարձանների ռեգիստրացիայի և ուսումնասիրության համար:

Այդ աշխատանքը կազմում է ինստիտուտի 1934 թ. արտադրական պլանի մեջ նախատեսված նյութերի հավաքման և գիտահետազոտական աշխատանքների ընդհանուր կոմպլեքսի անհրաժեշտ բաղկացուցիչ մասը, պատմական Հայաստանի ինչպես նախնադարյան, նույնպես և ֆեոդալական ու նոր էպոխաների պատմության մարքսիստական լուսաբանության համար:

Որովհետև Լեռնային Ղարաբաղը պատմական մեծ նյութ կարող է ընձեռնել առանձնապես Հայաստանի ֆեոդալական ժամանակաշրջանի բազմակողմանի ուսումնասիրությանը, պատմականորեն կապված լինելով անցյալում Զանգեզուրի (Մեծ Սյունիքի) հետ: Այդ պատճառով ինստիտուտուս անհրաժեշտ համարեց ներկա գրությամբ խնդրելու Գործկոմիդ՝ կամ կազմակերպելու տեղիդ համապատասխան մասնագիտական ուժերով Լեռնային Ղարաբաղի սահմանների մեջ մտնող պատմական հուշարձանների, ձեռագրերի և պատմական այլ և այլ փաստաթղթերի ռեգիստրացիա և պատմագիտական ուսումնասիրություններ, ստանալով համապատասխան ծրագիր և ցուցմունքներ մեզնից և կամ թե նյութական և

փոխադրական միջոցներ ընձեռնել ՀՄԽՀ Կուլտուրայի պատմության ինստիտուտին առաջիկա ամառը գիտարշավ ուղարկելու տեղդ այդ նպատակով: Այդ գիտարշավը կունենան ան այն նշանակությունը, որ նա տեղերում կկազմակերպի պատմական հուշարձանների պահպանության գործը, որի մասին Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային հանրապետության կառավարությունն ունի հատուկ որոշում:

Վերոհիշյալ խնդրի կարևորությունն հիմք է տալիս մեզ հուսալու, որ գործկոմդ ուշադրության կառնի այս գրության մեջ արծարծած խնդիրը և իրազեկ կդարձնի Ինստիտուտիս իր ընդունած որոշման մասին այդ առթիվ:

Դիրեկտոր՝

/Ն. Զորյան/

Քարտուղար՝

/Ն. Եղիազարյան/

ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 139, թ. 62: Պատճեն

Աշոտ Մելքոնյան, Պատմագիտական հետազոտություններ, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2021, 489 էջ:



Վերջերս ակադ. Աշոտ Մելքոնյանի գեկուցումների և հոդվածների ընտրանին ամփոփվել է «Պատմագիտական հետազոտություններ» ժողովածուում:

Դրանում ընդգրկված նյութը որոշակի ժամանակագրական ու, հատկապես, թեմատիկ ուղղվածություն ունի և շոշափում է հայ պատմագիտության առջև դրված հրատապ խնդիրները: Դրանք են՝ Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրությունը, հինգհարյուրամյա հայկական տպագրության անցած ուղին, հայոց պետականության պատմափուլերն ու նրա պարբերացման խնդիրները, արքայական ու ազնվական տոհմերի դերը հայոց պատմության հոլովությունում, Արևմտյան Հայաստանն Արևելք - Արևմուտք տնտեսական հարաբերությունների խճապատկերում, Երևանը որպես Արևելյան Հայաստանի վարչաքաղաքական կենտրոն, հայոց ազգային-ազատագրական պայքարի նորօրյա դիտարկումներն ու իմաստավորումները, Հայաստանի առաջին Հանրապետության հռչակման ու կայացման պատմական նշանակությունը և բազմաթիվ այլ հիմնահարցեր:

Մեծ ուշադրությամբ են ընթերցվում և առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Ջավախքի հիմնահարցին ու հայ-վրացական հարաբերություններին վերաբերող հրապարա-

կումները: «Ձավախքի հիմնահարցը հայ-վրացական հարաբերությունների համատեքստում (1918 թ. մայիս – 1919 թ. հունվար)» հոդվածում պարզ ու հստակ իմաստավորվում են այդ ժամանակահատվածի հայ-վրացական հարաբերությունները և կատարվում անհրաժեշտ ու ճշմարտացի եզրահանգումներ:

Ա. Մելքոնյանը գիտական հիմնությամբ և անաչառությամբ բացել է բազմաթիվ փակագծեր՝ նպաստելով 1918-1920 թթ. հայ-վրացական և հայ-վրաց-թուրքական հարաբերությունների գնահատմանն ու իմաստավորմանը: Ավելին, նա ընթերցողի ուշադրությանն է ներկայացրել լայն հանրությանը դեռևս անծանոթ բազմաթիվ փաստեր, որոնք լույս են սփռում այդ ժամանակ հայ-վրացական հարաբերություններում անգլիացիների ունեցած միակողմանի՝ գուտ վրացամետ դիրքորոշման վրա:

Գրախոսվող ժողովածուում գետեղված կարևոր ուսումնասիրությունների շարքում դիտարկելի է «Արցախը հայոց պետականության պատմության հոլովույթում» ծավալուն հետազոտությունը (էջ 337-360): Նրանում փաստարկվում է, որ մեզանում թյուր պատկերացումներ են ձևավորվել «Անկախություն» երևույթի ըմբռնման և ընկալման շուրջ: Պատմաբանների մի մասը կարծում է, որ միայն պետականությանը բնորոշ բոլոր հատկանիշներով (տարածք, բնակչություն, կառավարման համակարգ, զինված ուժեր, միջազգային ճանաչում և այլն) օժտված լինելու դեպքում կարելի է արձանագրել տվյալ պետականության գոյությունը:

Սակայն, Ա. Մելքոնյանը խորապես համոզված պնդում է, որ վերոնշյալ հատկանիշների մի մասի գոյությունն իսկ բավարար է Արցախը որպես պետական կազմավորում ընդունելու համար: Նրա համոզմամբ, «Պարտադիր չէ պետականությունն

ընդգրկի տվյալ էթնոսի ամբողջ պատմական արեալը, բացարձակ իմաստով անկախ լինի, ունենա համընդհանուր միջազգային ճանաչում, կառավարման միապետական կամ հանրապետական կարգավիճակ և այլն: Շատ կարևոր է հասկանալ, որ Հայկական լեռնաշխարհում համահայկական պետականության բացակայությունը դեռ չի նշանակում առհասարակ պետականության բացակայություն: Այն, գոյություն ունենալով պատմական Հայաստանի մի հատվածում, որպես կանոն՝ պատմաաշխարհագրական նպաստավոր պայմաններ ունեցող տարածաշրջաններում ունեցել է պետականության տարբեր դրսևորումներ» (էջ 337): Պետք է լիովին համաձայնվել պատմաբանի սույն տեսակետի հետ, հակառակ դեպքում հանիրավի երկարացվում են Հայկական լեռնաշխարհում հայոց պետականության բացակայության ժամանակաշրջանները:

Սույն մոտեցման կամ սկզբունքի կիրառման դեպքում մենք դիտարկում ենք հայոց պետականության գրեթե հարատև ներկայություն մեր լեռնաշխարհի տարածքում, իհարկե, ոչ որպես միասնական ու կենտրոնացված համահայկական պետականության:

Ըստ հետազոտողի, հայոց միջնադարյան պետականության շրջանը ներառում է IV դ. վերջերից մինչև XVII դ. կեսերը: Առաջին փուլը (վաղմիջնադարյան պետականությունը) սկսվում է Հայաստանի առաջին բաժանումով և ավարտվում IX դ. երկրորդ կեսին՝ Բագրատունիների թագավորության ստեղծումով: Թեև 387 թ. Մեծ Հայքը բաժանվում է Հռոմի և Պարսկաստանի միջև, իսկ 428 թ. անկման է հասնում Արշակունիների թագավորությունը, այնուամենայնիվ, հայոց պետականությունը վերջնական կորստի չի մատնվում, այլ ձեռք է բերում նոր դրսևորումներ՝

Արևելյան Հայաստանում՝ մարզպանական, իսկ Արևմտյան Հայաստանում՝ սատրապական համակարգերով, որոնց հիմքում ընկած էր նախարարական համակարգը: Ա. Մելքոնյանը բազմաթիվ հիմնավորումներով ապացուցում է, որ հայոց նախարարական համակարգն իր կայունությամբ և ճկունությամբ միջնադարի մի երկար ու ձիգ ժամանակաշրջանում հանդիսացել է հայոց պետականության հենքն ու հենարանը: Նա իրավացիորեն պնդում է, որ 480-ական թվականներին՝ Նվարսակի հաշտության կնքումից հետո, հայոց պետականությունն «ինքնավար տարբերակով վերականգնվեց ինչպես Արևելյան Հայաստանի կենտրոնական հատվածում՝ Արարատյան երկրում, այնպես էլ Հայոց Արևելից կողմերում՝ Արցախում՝ Վաչագան Բարեպաշտի գլխավորությամբ» (էջ 340): Հետագա դարերում պետականությունը պահպանվեց ու պաշտպանվեց Արցախում, ու այդ երկրամասը դարձավ հայոց հավաքական պետականության պահպանման կենտրոններից մեկը: Ա. Մելքոնյանը բազմաթիվ էական փաստարկումներով ընդգծում ու շեշտադրում է այն միտքը, որ երկարատև մի ժամանակահատվածում Արցախում պետականության յուրօրինակ դրսևորումներ եղան հայկական սղնախներն ու մելիքությունները:

Եվ պատահական չէ, որ կիսանկախ Արցախի դերը խիստ կարևորվեց XVIII դ. առաջին կեսին և նույն դարի երկրորդ կեսին հայ ազգային-ազատագրական շարժման առաջադրած նպատակներում և ծրագրերում:

Ա. Մելքոնյանը մանրակրկիտ քննության և վերլուծության է ենթարկում հայոց պետականության դրսևորման ձևերն ու դրվագներն Արևմտյան Հայաստանի տարածքում և Արևելյան Հայաստանում մինչև XX դ. ընկած ժամանակամիջոցում: Անդ-

րադառնալով XX դ. տեղի ունեցած իրադարձություններին, նա ընդգծում և արձանագրում է հետևյալը. «1918 թ. մայիսի 28-ով սկսվող Հայաստանի Հանրապետության (1918-1920) պատմության փուլը նշանավորվում է ոչ միայն անկախության վերականգնումով, այլ նաև իր վարչական կառուցվածքով ժողովրդավարական՝ խորհրդարանական հանրապետության ստեղծումով: Ընդամենը երկուսուկես տարիների ընթացքում Առաջին Հանրապետությունը ձեռք է բերում անկախ պետականությանը բնորոշ բոլոր հատկանիշները՝ տարածք, իշխանության մարմիններ, բանակ, միջազգային ճանաչում» (էջ 356-357):

Ամփոփելով, նշենք, որ և վերոնշյալ, և հայ պատմագիտության առջև կանգնած բազմաթիվ այլ հրատապ հիմնահարցեր են քննվում սույն ժողովածուի էջերում:

Այն հիմնավորապես օգտակար է լինելու թե՛ նեղ մասնագիտական շրջաններին և թե՛ ընթերցող լայն հատվածներին՝ իրենց հետաքրքրող հարցերի պարզ և հստակ հիմնավորումներն ու բացատրությունները ստանալու և ճշմարտացի եզրահանգումների հասնելու առումով:

ԱՐՄԵՆ Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ.

armenaraqsyann@mail.ru

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԳՈՀԱՐ Դ. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

Վաղնջական դիցապատումները հայոց պետականության սկզբնավորման մասին.....3

ՍԱՐԳԻՍ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Արաբական խալիֆայության քաղաքականությունը քրիստոնյաների նկատմամբ վաղ իսլամական շրջանում (հայերին ու Հայաստանին առնչվող հրովարտակ-պայմանագրերի և մուսուլմանական սուրբ տեքստերում հիշատակումների օրինակով)..28

ԱՐՏԱՇԵՍ Ի. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Գարդման գավառի պատմությունից.....42

ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱՇՈՏ Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Հայոց պետականության պատմափուլերը նոր դարաշրջանում (XVII դ. կես – 1918 թ.).....61

ԳԵՂԱՍ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ

Հայ ազգային-քաղաքական խնդիրների քննարկումը «Ձայն հայրենեաց» պարբերականում.....85

ԱՐՄԵՆ Ռ. ԲԱԴԱԼՅԱՆ

ՀԿ(բ)Կ ղեկավար դերը Խորհրդային Հայաստանի կառավարման համակարգում 1920-ական թթ. առաջին կեսին.....102

ԳԱԳԻԿ Ա. ԺԱՄՀԱՐՅԱՆ

Վանաձորցիների 1970-ական թվականների միջերկիկ հարաբերությունների փորձառությունը հայ-ադրբեջանական և հայ-ռու-

սակյան շփումների օրինակով (բանավոր պատմության նյութեր).....120

ՌՈՒԲԵՆ Լ. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ

Հայ-ռուսական փոխգործակցությունը հումանիտար և հոգևոր ոլորտներում 1991-2008 թթ.....137

ՀՐԱԾԻՆ Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

«Սփյուռք» հասկացության իմաստաբանական, հայեցակարգային փոփոխությունները եվ հայկական սփյուռքի պարագան..155

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

ՄՏԵՓԱՆ Գ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

Գիտնականների կենսագրությունը փաստաթղթերում՝ Հակոբ Զորյան.....179

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԵՆ Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Աշոտ Մելքոնյան, Պատմագիտական հետազոտություններ...191

СОДЕРЖАНИЕ

ДРЕВНЯЯ И СРЕДНЕВЕКОВАЯ ИСТОРИЯ

ГОАР Д. ВАРДУМЯН

Архаический эпос о зарождении армянской государственности..3

САРГИС М. ГРИГОРЯН

Политика халифата в отношении христиан в раннеисламский период (на примере договоров и упоминаний в мусульманских священных текстах связанных с армянами и Арменией).....28

АРТАШЕС И. ШАХНАЗАРЯН

Из истории провинции Гардман.....42

НОВАЯ И НОВЕЙШАЯ ИСТОРИЯ

АШОТ А. МЕЛКОНЯН

Исторические этапы армянской государственности в новую эпоху (половина XVII в. – 1918 г.).....61

ГЕГАМ А. ОГАННИСЯН

Обсуждение армянских национально-политических проблем в периодическом издании «Дзайн айрениц».....85

АРМЕН Р. БАДАЛЯН

Руководящая роль КП(б) Армении в системе управления Советской Армении в первой половине 1920-х годов.....102

ГАГИК А. ЖАМГАРЯН

Опыт межэтнических отношений жителей Ванадзора на примере армяно-азербайджанских и армяно-русских отношений в 1970-х годах (материалы устной истории).....120

РУБЕН Л. АЗИЗБЕКЯН

Армяно-российское взаимодействие в гуманитарной и духовной сферах в 1991-2008 гг.....137

ГРАЦИН В. ВАРДАНЯН

Смысловые, концептуальные изменения понятия «диаспора» и пример армянской диаспоры.....155

ПУБЛИКАЦИЯ

СТЕПАН Г. ГАРИБДЖАНИЯН

Биографии ученых в документах: Акоп Зорьян.....179

РЕЦЕНЗИЯ

АРМЕН О. КАРАПЕТЯН

Ашот Мелконян, Историологические исследования.....191

CONTENT

HISTORY OF THE ANCIENT AND MIDDLE AGES

GOHAR D. VARDUMYAN

The archaic epic about the origins of Armenian statehood.....3

SARGIS M. GRIGORYAN

The policy of the caliphate to Christians in the early Islamic period (following the example of proclamations-contracts and references in Muslim holy texts related to Armenians and Armenia).....28

ARTASHES I. SHAHNAZARYAN

The history of the Gardman province.....42

MODERN AND CONTEMPORARY HISTORY

ASHOT A. MELKONYAN

The historical stages of the Armenian statehood in the New Era (mid-17th c. – 1918).....61

GEGHAM H. HOVHANNISYAN

The discussion of Armenian national and political issues in the newspaper "Dzayn Hayrentiats".....85

ARMEN R. BADALYAN

The leading role of the Communist (bolshevik) Party of Armenia in the governing system of Armenia in the first half of 1920s.....102

GAGIK A. ZHAMHARYAN

Experience of inter-ethnic relations of Vanadzor residents on the example of Armenian-Azerbaijani and Armenian-Russian relations in the 1970s (materials of oral history).....120

RUBEN L. AZIZBEKYAN

Armenian-Russian interaction in the humanitarian and spiritual spheres in 1991-2008.....137

HRATSIN V. VARDANYAN

Semantic, conceptual changes of the concept of "diaspora" and the case of the Armenian diaspora.....155

PUBLICATION

STEPAN G. GHARIBJANYAN

Biographies of scientists in documents: Hakob Zoryan.....179

REVIEW

ARMEN H. KARAPETYAN

Ashot Melkonyan, Historical Studies191

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ)

THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA
(SCIENTIFIC JOURNAL)

ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ
(НАУЧНЫЙ ЖУРНАЛ)
2 (25). 2022

Ռուսերեն և անգլերեն տեքստերի խմբագիր՝ Յու. Կրյուչկով
Սրբագրիչ՝ Դ. Սարգսյան
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Տպաքանակը՝ 100, ստորագրված է տպագրության 19.12.2022 թ.
Тираж – 100, подписано к печати 19.12.2022 г.
Printed copies – 100, signed for printing 19.12.2022

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://academhistory.am/>
Официальный сайт журнала: <http://academhistory.am/>
Official site of the journal: <http://academhistory.am/>

Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ hayotspatmutyanhartser@gmail.com
Электронная почта журнала: hayotspatmutyanhartser@gmail.com
E-mail of the journal: hayotspatmutyanhartser@gmail.com

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԳԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

Խմբագրության հասցեն՝ 0019,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4, հեռ. 0(10)529263
Адрес редакции: 0019,
Ереван, пр. Маршала Баграмяна 24/4, тел. 0(10)529263
Editorial office address: 0019,
Yerevan, Marshal Baghramyan Ave., 24/4, tel. 0(10)529263